Azg
Ազգ
29 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ՇԱԲԱԹ 222 (4114)

«Հայոց ցեղասպանությունը որպես ինքնորոշման իրավունքի կանխարգելման միջոց»

Յուրօրինակ այս դիտարկումը Ռազմի Զարեմոյին առանձնացնում է թուրք բոլոր մտավորականներից

Չնայած թուրքական քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի առկայությանը, Թուրքիայի մի շարք գիտնականներ արտահայտվում են Հայոց ցեղասպանության մասին: Սակայն նրանց մի մասը խուսափում է ընդունել, որ դա եղել է պետականորեն ծրագրված, իսկ մյուսը՝ բացասական է վերաբերվում արևմտյան խորհրդարաններում հայկական բանաձևերի ընդունմանը: Ավելին, ոմանք էլ ընդունումը վերագրում են սփյուռքի հակաթուրքական գործունեությանը, պատճառաբանելով, թե դրանով վտանգվում է Թուրքիայի հետագա ժողովրդավարացումը:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ վերոհիշյալ գիտնականների խնդիրը ոչ այնքան ցեղասպանության ճանաչումն է, որքան ճանաչման գործընթացի վերահսկումը: Տես էջ 8

Հեռուստամարաթոն-2008-ում գրանցվել է ռեկորդ

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հայտարարություն է տարածել, որ Հեռուստամարաթոն-2008-ն արձանագրեց 35 միլիոն 9156 ԱՄՆ դոլարի կատարված եւ խոստացված նվիրատվություններ՝ կրկնապատկելով նախորդ տարվա արդեն տպավորիչ ցուցանիշը: Հանգանակված գումարները հետեւյալն են՝ նշված ԱՄՆ դոլարով. Լոս Անջելես - շուրջ 1 300 000, Լիբանան - շուրջ 200 000, Մոնրեալ - շուրջ 130 000, Արգենտինա - 100 000, Մեծ Բրիտանիա - 200 000, Հոլանդիա - 40 000, Ավստրալիա - 50 000, Նյու Յորք - 200 000, Ֆրանսիա - շուրջ 1 500 000, Գերմանիա - 85 000, Շվեյցարիա - շուրջ 33 000, Տորոնտո 250 000, Հունաստան եւ Կիպրոս - շուրջ 40 000: Ռուսաստանաբնակ հայազգի գործարար Սամվել Կարապետյանը հայտարարել է 15 միլիոն ԱՄՆ դոլար նվիրատվության մասին, որը կուղղվի Ստեփանակերտում հիվանդանոցի կառուցմանը: Այս տարի փոքր եւ միջին նվիրատվությունների զգալի աճ է գրանցվել: Հեռուստամարաթոն-2008-ի խոշոր նվիրատուներից են «Վիվասել ՄՏՍ»-ը, Միհայել Վարդանյանը, Սամվել Ալեքսանյանը, Էդուարդ Էռնեկյանը, Գագիկ Ադիբեկյանը, Վարուժան Գրիգորյանը, Գագիկ Զաքարյանը, Նորիկ Պետրոսյանը, Բարսեղ Բեգլարյանը, Արամ Քոչարյանը, Խաչիկ Մանուկյանը, Կարապետ Ալեքսանյանը եւ այլ նվիրատուներ: «Մենք կրկին ապացուցեցինք, որ մեր ազգը հզոր է, երբ համախմբվում է», ասում է հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնակատար Արա Վարդանյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հոգեւոր խորհուրդը դատապարտել է քրիստոնեությանն անհարիր գործողությունները Վրաստանում

Մայր աթոռ Սբ Էջմիածնում երեկ գումարվել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով՝ նախագահությամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի: Տեղեկատվական կենտրոնի հաղորդագրությամբ, խորհրդի անդամներին Վեհափառը ներկայացրել է Հնդկաստան եւ հնդիկ Մալանկարա ուղղափառ եկեղեցի կատարած հովվապետական այցի մանրամասները, տեղեկացրել է Արաբական Միացյալ Էմիրություններ այցի ընթացքում հայ համայնքի եւ Շարժայի էմիր Շեյխ Սուլթան բին Մոհամմադ ալ Քասիմիի հետ ունեցած հանդիպումների մասին:

Այնուհետեւ ժողովականներն անդրադարձել են Վիրահայոց թեմի իրավաբանական կարգավիճակին, հայկական եկեղեցիների վերադարձման հարցերին, նոյեմբերի 16-ին տեղի ունեցած Թբիլիսիի Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու նկատմամբ հերթական ոտնձգության ու հայկական գերեզմանների պղծման դեպքերին, որոնց վերաբերյալ տվյալներ է հաղորդել Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Ամենայն հայոց կաթողիկոսը նշել է, որ վրաց իշխանությունները եւ եկեղեցին անտեսում են Սբ Էջմիածնի դիմումները, հետեւաբար Հայաստանյայց առաքելական եկեղեցին հարցը մշտապես հանձնելու է միջազգային հանրության ուշադրությանը՝ բարի հույսով, որ վիրահայության ազգային-եկեղեցական կյանքում առկա բարդությունները կհարթվեն:

Գերագույն հոգեւոր խորհուրդը հանդես է եկել հետեւյալ կոչով. «Խորապես մտահոգված Վրաստանում Վիրահայոց թեմի ու հայկական եկեղեցիների նկատմամբ դրսեւորվող ոտնձգություններով, դատապարտում է քրիստոնեության ոգուն, եղբայր ժողովուրդների բարեկամությանն անհարիր քայլերն ու գործողությունները: Հոգեւոր խորհուրդը կոչ է ուղղում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու զավակներին՝ զորավիգ լինել վիրահայությանը իրենց ջանքերում եւ նախանձախնդիր պայքարում ի պաշտպանություն հայկական եկեղեցիների եւ հայրենական իրենց արբությունների»:

Ռ. Պ.

«Ֆինանսական ճգնաժամով պայմանավորված նոր հնարավորություններ կարող են բացվել»

«Երեկ «Դե ֆակտո» ակումբում տված իմ ասուլիսը բավականին մեծ արձագանք գտավ մամուլում: Ցավով ոմիտի նշեմ, որ մեր լրագրողներից ոմանք տեղեկատվությունը լսարանին անմիջականորեն փոխանցելու փոխարեն զբաղվում են հեռուն գնացող եզրակացություններով համեմված նյութեր ստեղծելով»,- «Առմենպրեսին» ասել է գործարար **Միխայիլ Բաղդասարովը**: «Ավելորդ շահարկումները կանխելու նպատակով ստիպված եմ հայտարարել, որ մամլո ասուլիսի ժամանակ իմ արտահայտած մտքերը մեր տնտեսության մեջ առկա խնդիրների եւ առկա հնարավորությունների վերաբերյալ են եղել՝ առանց որեւէ տողատակ մտքերի: Ավելին, հիմնական մեսիջը, որ ես տվել եմ, այն է, որ ֆինանսական ճգնաժամով պայմանավորված առկա բոլոր խնդիրներով հանդերձ՝ մեզ համար իրականում նոր հնարավորություններ կարող են բացվել, որոնցից հարկ է օգտվել: Այդպես է պատրաստվում անել «Առմավիա» ընկերությունը՝ գործելով գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում առավել ակտիվ լինելու՝ ՀՀ կառավարության կոչի տրամաբանության ներքո», նշել է Մ. Բաղդասարովը:

ԱՄՆ «դաբրոյով» Վրաստանի նոր նախագահը՝ Նինո Բուրջանաձեն

Որ ամենալավատեսական մոտեցումների դեպքում էլ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու առումով հիասթափությունը զգալի է ոչ միայն եվրոպական երկրներում, այլեւ Մ. Նահանգներում, գուշակությունների ոլորտից չէ: ԱՄՆ-ը ծրագրում է Վրաստանի նախագահ Սաակաշվիլու հեռացումն ու նոր առաջնորդ է պատրաստում, որ ամենայն հավանականությամբ կարող է լինել Վրաստանի խորհրդարանի նախկին խոսնակ, վարդյա հեղափոխության եռյակի անդամներից Նինո Բուրջանաձեն:

Մ. Նահանգների այս «ծրագրերի» մասին նման տեսակետ է հայտնել ՆԱՏՕ-ում Ռուսաստանի ներկայացուցիչ Դմիտրի Ռոգոզինը «Վեստի» հեռուստահաղորդմանը տված հարցազրույցում: «ՆԱՏՕ-ում Վրաստանի բարեկամները մեծապես հիասթափված են Սաակաշվիլու հարցում», «Ռիա Նովոստիի» փոխանցմամբ, հայտարարել է Ռոգոզինը: Ըստ նրա, Սաակաշվիլին ինքն էլ հասկանում է, որ Վաշինգտոնում այլ որոշում են կայացրել, պատրաստվում է այլ առաջնորդ, եւ ավելի շուտ դա կլինի Նինո Բուրջանաձեն: Ընդորում, վերջինս, Ռոգոզինի խոսքերով, արդեն անցել է ԱՄՆ «հարսնատեսը» եւ «դուր է եկել»:

Ինչ վերաբերում է Ուկրաինայի եւ Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության գործողությունների ծրագրում ներառելու հարցին, ապա ՆԱՏՕ-ում ՌԴ ներկայացուցչի մատուցմամբ, գործողությունների ծրագիր չի լինի, բայց ՆԱՏՕ-ում «մի բան կմտածեն, որ համ ոչխարները ողջ լինեն, համ գայլերը՝ կուշտ», ասենք, գործընկերության ինչ-որ հոչակագիր կընդունեն:

Ա. Հ.

ԵՐԵՎԱՆ

Հացադուլավորներին դուրս են բերել Եռաբլուրից

Նոյեմբերի 28-ին ժամը 10-ի մոտակայքում ոստիկանները կրկին հարձակվել են նոյեմբերի 26-ից հացադուլ հայտարարած Արցախյան պատերազմի մի խումբ ազատամարտիկների վրա, ուժի գործադրմամբ նրանց տարել են դեպի փողոց եւ չեն թողնում վերադառնալ Եռաբլուր, հաղորդում է «Նոյյան տապանը»: Հիշեցնենք, որ նախորդ օրը՝ նոյեմբերի 27-ին, ոստիկանության Մալաթիայի բաժանմունքի աշխատակիցները եկել էին Եռաբլուր եւ հացադուլավորներին խորհուրդ տվել ցրվել՝ հակառակ դեպքում սպառնալով բռնի բերման ենթարկել ոստիկանության բաժանմունք: Նույն օրվա ժամը 10-ի սահմաններում հացադուլի մասնակիցներից երկուսին տարել են բաժանմունք: Հացադուլավոր ազատամարտիկները ՀՀ իշխանություններից պահանջում են չզիջել ոչ մի թիզ հող, Արցախը ճանաչել Հայաստանի անբաժան մաս, անհապաղ ազատել քաղբանտարկյալներին եւ դադարեցնել քաղաքական հետապնդումները:

Դեկտեմբերին կայանալու է ՀԱԿ-ի համաժողովը

Նոյեմբերի 28-ին տեղի է ունեցել Հայ ազգային կոնգրեսի մաս կազմող կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների խորհրդակցություն: Հավաքին մասնակցել են ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, կուսակցությունների ղեկավարները, ՀԱԿ կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչները եւ կուսակցությունների ղեկավար ակտիվը: Քննարկվել են Հայաստանի ներքաղաքական եւ տնտեսական իրավիճակը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ներկա հանգրվանն ու կոնգրեսի առաջիկա քայլերը: Խորհրդակցությունը նպատակ ուներ ուղղություն տալ դեկտեմբերին կայանալիք կոնգրեսի համաժողովի հիմնական օրակարգային հարցերը:

Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում արդյունավետ չէ

Գլխավոր դատախազը կոչ է անում մանր չկներով բռնել մեծերին

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Եթե նախորդ ամբողջ տարվա ընթացքում դատարանները դատապարտել են 23 քրեական գործով 28 անձի, ապա հաշվետու տարվա միայն 9 ամիսների ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 57 քրեական գործ 75 անձի վերաբերյալ, որոնցից 57-ը եղել են պաշտոնատար:

Ցուցանիշը 9 ամսվա կտրվածքով առավել բարձր է, օրինակ, Լոռու մարզում՝ նախապատրաստվել է 26 նյութ, որից հարուցվել է նույնքան քրեական գործ, Արմավիրի մարզում 33 նախապատրաստված նյութերից հարուցվել է 17 քրեական գործ, Շիրակում 19 նյութից հարուցվել է 10 քրեական գործ, Կոտայքում 12 նյութից՝ 12 քրեական գործ, պայքարի ակտիվացման միտումը նկատելի է նաեւ Արարատի, Արագածոտնի մարզերում եւ այլն:

Երեկ ՀՀ դատախազությունում «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման եւ քննության առանձնահատկությունները» թեմայով խորհրդակցություն էր:

Հանրապետության գլխավոր դատախազ **Աղվան Հովսեփյանը** մասնակիցներից ցանկացավ լսել մասնակիցներից ցանկացավ լսել, ոչ թե գովասանք, այլ արված, իսկ ավելի շատ՝ չարված աշխատանքների հաշվետվություն:

Տես էջ 3

ԸՆԹԱՑԻԿ

Այլընտրանքային ֆիլմի դիտում ԱԺ ժամանակավոր հանձնաժողովում

«Հարգելի հանձնաժողովականներ, ամիսներ շարունակ տարբեր ուժեր փորձում են մարտի 1-ի արյունահեղությունն օգտագործել սեփական ամբիցիաները բավարարելու, քաղաքական կշիռ ձեռք բերելու համար՝ մեզ, ՀՀ քաղաքացիներիս կերակրելով տարաբնույթ ասեկոսեներով ու գնահատականներով. ժողովուրդը խաբված է ու խաբված է հերթական անգամ. ընդդիմությունն ու իշխանությունը կարծես թե ձեռք ձեռի տված փորձում են քանդել մեր պետությունը, զրկել մեզ պետականությունից՝ մեկն արյունահեղություն է կազմակերպում, մյուսն այն ողողակում է: Մարտի 1-ը մեր պատմության ամոթալի, խայտառակ էջերից է, որը փակել որեւէ կերպ չի հաջողվի՝ առանց օբյեկտիվ գնահատական տալու, առանց մեղավորներին պատասխանատվության ենթարկելու: Կազմակերպիչները պետք է պատասխանատվության ենթարկվեն, նրանց պատասխանատուները նույնպես: Ժողովուրդն առ այսօր չգիտի իրականությունը՝ թե ինչ տեղի ունեցավ մարտի 1-ին, ինչո՞ւ սպանվեցին ՀՀ քաղաքացիները, ու ոնց եղավ, որ ոստիկանությունը չկարողացավ ջրցան մեքենաներով ցրել ցուցարարներին: Ոնց եղավ, որ հարյուրավոր անձինք կալանավորվեցին, բայց ամենահայտնի դեմքերը մնացին ազատության մեջ: Մենք պարզել ենք իրականությունը զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ, որի վրա իրավապահները փակում են աչքերը: Ուղարկելով փաստերը՝ ուզում ենք հուսալ, որ դուք չեք փակի ձեր աչքերը, չեք փորձի ծառայել ինչ-որ ուժերի, կողմարարների իրավապահներին բոլոր այդ արգասիքները դարձնել քննարկման առարկա եւ հասանելի ժողովրդին: Ժողովուրդն իրավունք ունի ծանոթանալու այդ փաստերին, որոնք գաղտնազերծում են շաբաթների դեմքերը: Ներկայացնում ենք մարտի 1-ի իրական դեմքերի փաթեթը»: Արմեն Գրիգորյան, Կարինե Սահակյան, Սամվել Հարությունյան, Գայանե Աբրահամյան, Կարեն Աբրահամյան, Հովհաննես Մանուկյան, ստորագրություններ:

Եթե այս տողերի հեղինակների նպատակը որեւէ կերպ իրենց մտքերը հասարակությանը նետելն էր ու հայտնի կողմերին կսմթելը՝ դա ստացվեց, որովհետեւ նրանց ուղարկած ահա այս նամակը եւ հարակից տեսանյութը ստացել է մարտի 1-2-ի դեպքերը քննող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը, որը երեկ հանձնաժողովականների ու լրագրողների համար այդ տեսանյութի հրապարակային դիտումը կազմակերպեց:

Թե ովքեր են այդ մարդիկ, որ այսքան խոր մտահոգությամբ տեսանյութ էին տրամադրել հանձնաժողովին, երեւի անսալով նաեւ գլխավոր դատախազի՝ Համբարձումի հետ հանդիպման ընթացքում հնչեցրած կոչին՝ ըստ Նիկոյանի, կարեւոր չէ, երկրորդական-երրորդական է. նույնիսկ դատարանում կարող է վիճարկվել գաղտնալսումների արդյունավետության հարցը, բայց հանձնաժողովը դատական մարմին չէ եւ պետք է որոշի տեսանյութի ինֆորմացիայի հավաստիության հարցը եւ ինչպե՞ս այն օգտագործել զեկույցի մեջ: Ինչո՞ւ գաղտնալսումների, որովհետեւ այս ֆիլմը, մարտի 1-ի դեպքերի մեջտեղ կադրերով, ներկայացնում էր մարտի 1-ին ընդդիմության լիդերների այն գաղտնալսումները, համեմված խոսողների պատկերով, որոնք արդեն իսկ տպագրվել էին մամուլով, իսկ հայտնի հայիոյանքներն էլ այնտեղ առավել պատկերավոր էին հնչում: Ճիշտն ասած՝ մենք չենք անդրադառնա ոչ ֆիլմին, ոչ նրա հեղինակի ուրաճմոտ քարոզչահրապարակախոսական շեշտադրումներին, որ առավել իշխանության մի թեւին էին մատնում: Իսկ այն, ինչ հետաքրքրեց հանձնաժողովականներին, դիտումից հետո հարցերի տեսքով էլ վեր հանվեց:

Ս. Նիկոյանը ֆիլմում հետեւյալ հարցադրումներն էր նկատել՝ ինքնաբո՞ւխ էր Ֆրանսիայի դեսպանատան մոտի հավաքը, խանութների թալանը, որ գցում են իշխանության կամ ոստիկանության վրա՝ իրականում ո՞վ է արել, եւ որ՝ Գր. Լուսավորիչ, Մաշտոց, Պարոնյան, Լեոյի փողոցների ուղղությամբ իրադարձությունները ոչ թե զանգվածային էին, այլ վերահսկվող: **Գուրգեն Արսենյանն** ու հանձնաժողովի այլ անդամներ առաջարկում հետ բանակցություն վարի: Մինասյանն օգտագործեց առիթը կտելու՝ որ գաղտնալսում են, ուրեմն պետք է իմանային նաեւ ո՞ւմ հետ բանակցեն: Դե, իսկ տեսանյութում ոստիկանները հնչեցրել էին, որ 6.30-ին «տրիվոգա է»՝ մարտի 1-ի, առավոտվա...

Ահա: Իսկ ընդհանրապես՝ այս բոլորն ավելի ու ավելի են հիշեցնում ակամա կամ գուցե եւ, ինչու ոչ, լավ էլ մտածված սցենար, որի իսկապես ակամա դերակատարներն ենք դարձել մենք՝ լրագրողներս, հանձնաժողովականները, միայն թե դերաբաշխումն արել է այլ մարդ, իսկ դերը ստանձնում են մյուսները՝ հաճախ չգիտակցելով, որ դերի մեջ են մտնում՝ գրելով մամուլում, հարցեր տալով եւ այլն:

ՄԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.Գ.-1. Իսկ հանձնաժողովը գնաց բոլոր գաղտնալսումները լսելու եւ գաղտնալսումների տեքստերը կարդալու, որից հետո նոր կքննարկի տեսանյութը:

Հ.Գ-2. Վախենամ այս կարգի տեսանյութերն այնքան շատանան, որ ԺՀ ամեն նիստում դրանցից մեկը դիտենք:

ԴԱՏԱԲԱՆԱԿԱՆ ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Չախալյանի գործը՝ ակնհայտ քաղաքական որակներում

Ֆրանսիացի փաստաբանը խոշընդոտներ է հաղթահարում

Նախորդ շաբաթ՝ նոյեմբերի 18-ին Ֆրանսիացի փաստաբան Պատրիկ Արաքելյանը, որ ստանձնել է «Միասնական Ջավախք» շարժման առաջնորդներից մեկի, ջավախահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանի պաշտպանությունը, ժամանել է Վրաստան, այցելել Թբիլիսի ու Ախալքալաք, հանդիպումներ է ունեցել Վրաստանում Ֆրանսիայի դեսպան պրն Ֆուտնյեի, ԵԱՀԿ վրաստանյան ներկայացուցչության մարդկային չափման գրասենյակի ղեկավար տիկին Առնյո-Լվոֆի, Եվրոխորհրդի վրաստանյան ներկայացուցչության ղեկավար պրն Գաոնի, ինչպես նաեւ Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցների հետ:

«**Ազգի**» տեղեկություններով, հանդիպումների ընթացքում պրն Արաքելյանն իր զրուցակիցներին տեղեկացրել է Ջավախքում հետզհետե ուժգնացող քաղաքական հետաքրքրությունների մասին, նշել, որ վրաց իշխանությունների կողմից իրականացվող հալածանքները ձեռք են բերել համակարգված բնույթ եւ արդեն կիրառվում են ոչ միայն «Միասնական Ջավախք» շարժման ջավախահայ քաղաքական ակտիվիստների ու նրանց համակիրների, այլեւ տիրող իրավիճակից հրապարակայնորեն դժգոհություն հայտնող յուրաքանչյուրի նկատմամբ:

Ֆրանսիացի փաստաբանը իր հանդիպումներում ներկայացրել է նաեւ Չախալյանի գործի քաղաքական բնույթն ապացուցող փաստեր, դեռեւս չմեկնարկած դատական գործընթացում վրաց իշխանությունների արդեն իսկ թույլ տված աղաղակող խախտումները: Ֆրանսիայի դեսպանատունն ու ԵԱՀԿ վրաստանյան ներկայացուցչությունը պատրաստակամություն են հայտնել դիտորդների միջոցով հետեւելու ջավախահայ քաղաքական գործիչների դատավարություններին:

Իր հանդիպումների ընթացքում պրն Արաքելյանը դժգոհություն է հայտնել նաեւ այն փաստի առնչությամբ, որ թեեւ Վրաստան ժամանելուց մի քանի օր առաջ նա սահմանված կարգով դիմել է որպես Չախալյանի պաշտպան հավատարմագրում ստանալու հայտով, վրաց իշխանությունները տարբեր բյուրոկրատական պատճառաբանություններ բերելով առայժմ մերժել են, իսկ արդարադատության նախարարությունը մերժել է ընդունել փաստաբանին ու պարզաբանել անհիմն ձգձգումների պատճառը:

Հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի առնչությամբ վրացական իշխանությունները լրացուցիչ բյուրոկրատական քաշքշուկներ են առաջացրել, սակայն Արաքելյանը հավատարմագրման համար կդիմի լրացված փաստաթղթերով, եւ տեսնենք, թե այդ դեպքում ինչ խոչընդոտներ կառաջացնեն վրացական իշխանությունները:

Ինչ վերաբերում է Վահագն Չախալյանի դատավարությանը, ապա վրաց իշխանությունները հերթական անգամ հետաձգել են դատավարությունը՝ նույնպես անհերթեր պատճառաբանությամբ: Մինչեւ դեկտեմբերի 3-ը դատական նիստը հետաձգելու պատճառաբանությունն առավել քան ծիծաղելի է. Չախալյանը գտնվում է Թբիլիսիում, դատավարությունն ընթանում է Ախալցխայում, եւ ըստ վրաց իշխանությունների պատճառաբանության, իբր նշանակված օրը կալանավորների տեղափոխում, այսպես կոչված, էտապ չի եղել Թբիլիսիից Ախալցխա:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կեղծիքներ պլաստիկ քարտերի միջոցով

Ազգային անվտանգության մամուլի կենտրոնից հաղորդում են, որ առեւտրային բանկերից ստացվել էին տվյալներ, որ Երեւանի խանութներում տեղադրված «ՓՈՍ տերմինալների» միջոցով բանկային պլաստիկ քարտերով իրականացվել են փոքրաթիվ խոշոր չափերի գործարքներ, որոնք կասկածանքի տեղիք են տվել: ԱԱԾ-ի ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Երեւանում «Գասարգա» ՍՊԸ-ի կողմից ԱՄՆ առեւտրային բանկերին պատկանող «Մաստեր» տեսակի պլաստիկ երեք կեղծ բանկային քարտերի միջոցով իրականացվել են շուրջ 16,2 մլն դրամի անապրանք գործարքներ: Փաստի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ: Գործով անցնող երեք անձինք ձերբակալվել են: Նմանատիպ հանցագործություն ԱԱԾ-ը բացահայտել էր նոյեմբերի 4-ին, կալանավորվել էր «Սկավա» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրենը 45,0 մլն դրամի անապրանք գործարք իրականացնելու համար: Սեպտեմբեր-հոկտեմբերին կալանավորվել են կեղծ պլաստիկ քարտերով առեւտրային բանկերի բանկոմատներից գումարներ կանխիկացնող միջազգային հանցագործ խմբավորման անդամներ՝ Ռումինիայի 10 քաղաքացիներ եւ նրանց մոտից առգրավվել է մոտ 24 մլն դրամ: ՀՀ ԱԱԾ-ն կոչ է անում զերծ մնալ անօրինական ճանապարհով գումարներ «վաստակելու» գայթակղությունից: ՀՀ ԱԱԾ-ն ունի բավարար ներուժ եւ հնարավորություններ՝ բացահայտելու եւ օրենքի խստությամբ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

25 հազար դրամ անհատ տաքսիստների լիցենզավորման համար

Դեկտեմբերի 6-ից ուժի մեջ է մտնում օրենքի փոփոխությունը

Այս տարվա դեկտեմբերի 6-ից ուժի մեջ կմտնի տաքսիների լիցենզավորումը ենթադրող օրենքի այն փոփոխությունը, ըստ որի՝ անհատ տաքսիստները լիցենզավորման համար պետք է վճարեն տարեկան 25 հազար դրամ պետական տուրք: Մինչ փոփոխությունը սահմանված էր, որ եւ տաքսի ծառայություններ, եւ անհատ տաքսիստները պետք է վճարեն միատեսակ պետական տուրք՝ տարեկան 200 հազար դրամի չափով: Դա առաջացրեց անհատ տաքսիստների դժգոհությունն ու բողոքի դրսեւորումները, ինչը նկատի առնելով էլ իշխանությունները փոխեցին նախապես ընդունած իրենց որոշումը: Անդրադառնալով այս հարցին, երեկ «Ուրբաթ» ակումբի հյուր՝ տրանսպորտի եւ կապի նախարարության տրանսպորտային տեսչության պետի տեղակալ **Հայկ Մարտիրոսյանը** նշեց, որ օրենքը գործելու պահից՝ ապրիլի 1-ից մինչ այժմ, անհատ տաքսիստների վրա չի կիրառվել, սպասելով մինչ վերոնշյալ փոփոխությունն ուժի մեջ մտնի:

Տրանսպորտային տեսչության պետի կարծիքով, սա եղել է դժգոհության հիմնական պատճառը, եւ եթե այսօր նոր պատճառներ են բերվում, ապա դա նշանակում է, որ պարզապես խուսափում են օրինական դաշտ մտնելուց: Նա նաեւ տեղեկացրեց, որ 25 հազար դրամը եթե բաժանենք տարվա օրերի վրա, ապա օրական մոտ 70 դրամ կկազմի պետությանը վճարվող տաքսիստի տուրքը: Ըստ Հայկ Մարտիրոսյանի, լիցենզավորման համար անհատ ձեռնարկատերերը համարվող տաքսու վարորդները պետք է դիմեն տրանսպորտի եւ կապի նախարարության լիցենզավորման հանձնաժողովին, որտեղ պատրաստված է անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը լիցենզիա ստանալու համար: Լիցենզիա ստանալու համար օրենքով սահմանված է մեկ ամսվա ժամանակահատված, բայց նախարարի հրահանգով հանձնաժողովն ավելի արագ է աշխատում եւ մեկ շաբաթից ավելի չի տեւում լիցենզիայի տրամադրումը: Տաքսիները պետք է ունենան համապատասխան տարբերանշանը մեքենայի վերեւում, շախմատաձեւ նշանը մեքենայի վրա, սակաչափիչ (հաշվիչ) եւ այլն: Նախարարության վարչության պետի տեղակալն ասաց, որ հաշվիչների արժեքը կազմում է 12,5 հազար դրամ:

Վերջին 15-20 օրերին լիցենզավորվելու եւ դեղին համարանիշ ստանալու համար դիմել են 164 կազմակերպություններ՝ տաքսի ծառայություններ: Նույն ժամանակահատվածում լիցենզավորվածների թիվն ավելացել է 550-ով: «**Ազգի**» հարցին, թե որքան մեքենա է այժմ գործում օրինական դաշտում, Հայկ Մարտիրոսյանը պատասխանեց, որ լիցենզավորվել է 436 կազմակերպություն՝ 5319 մեքենաներով:

Օրենքի պահանջներից մեկն էլ այն էր, որ արգելվում է 10 տարվա ժամկետը գերազանցող մեքենաները որպես տաքսի շահագործել: Մեր հարցին, թե այդ դեպքում կարո՞ղ է այնպես լինել, որ ավելի լավ պահպանված 15 տարվա «Օպելը» կամ «Մերսեդեսը» դուրս մնան, իսկ 5 կամ 7 տարվա «07»-երը, որոնք, սակայն, ավելի վաս վիճակում են, շահագործվեն որպես տաքսիներ, Հայկ Մարտիրոսյանը պատասխանեց, որ 10 տարվա ժամկետը պատահաբար չի ընտրվել: Նախապես առաջարկվել էր 7 տարվանը, բայց հետագայում մասնագետների եզրակացությամբ որոշվել է, որ 10 տարին առավելագույնն է ամորտիզացիայի, մաշվածության եւ այլ առումներով մեքենան որպես տաքսի շահագործելը թույլ տալու համար:

ԱԲՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է ՀՀ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Հանդուրժող

Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականության ու հնարավոր զարգացումներին երեկ Մամուլի ազգային ակումբում (ՄԱԱ) անդրադարձավ ԱԺ նախկին նախագահ, այժմ անկախ պատգամավոր Տիգրան Թորոսյանը: Անդրադառնալով ղարաբաղյան հիմնախնդրին ու վերջին մի քանի շաբաթների ընթացքում խնդրի նոր հնչեղությանն ու կարգավորման հրատապությանը, Թորոսյանն ասաց.

«Վերջին զարգացումները պայմանավորված են ոչ թե Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման բնականոն ընթացքով, այլ տարածաշրջանային զարգացումներով: Այդ ուղղությամբ գործողությունների նոր փուլն ու զարգացումները սկսվեցին օգոստոսին՝ ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո: Փաստորեն Վրաստանը վերջնականապես կողմնորոշվեց դեպի ԱՄՆ, ինչը նոր իրավիճակ ստեղծեց տարածաշրջանում»:

Անդրադառնալով Մոսկովյան հռչակագրին Թորոսյանը նշեց, որ փաստաթուղթն ավելի շատ ուղղված է Ռուսաստանի դերի ու կշռի բարձրացմանը եւ որեւէ լուրջ ազդեցություն չի կարող ունենալ: ԱԺ նախկին խոսնակին վրդովվեցրել է հատկապես այն հանգամանքը, որ հռչակագրում բացակայում է Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչի ստորագրությունը, ինչը չափազանց վտանգավոր է եւ հետագայում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել: «Լեռնային Ղարաբաղի հետ կապված ստորագրվում է փաստաթուղթ, որտեղ հիմնական կողմը՝ ում ճակատագիրը որոշվում է, բացակայում է: Սա անուղղակիորեն նշանակում է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումը չճանաչել», ասաց նա:

Մադրիդյան սկզբունքները նախկին հանրապետականի համար էլ հստակ չեն: «Այս դեպքում կարեւոր են ոչ թե սկզբունքները, այլ մանրամասները: Օրինակ, ինչո՞ւ պետք է Ղարաբաղը նոր հանրաքվե անցկացնի, եթե նախկինում իր խոսքն այդ առնչությամբ արդեն ասել է, ընդ որում, միջազգային նորմերին համապատասխան: Նաեւ, ո՞վ պետք է երաշխավորի Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ապահովումն ու անվտանգությունը», ասաց Թորոսյանը՝ ներկայացնելով Կոսովոյի օրինակը: Նրա կարծիքով, գոյություն ունեն նմանատիպ տասնյակ հարցեր, որոնք պատասխան չունեն:

Տիգրան Թորոսյան. «Ղարաբաղյան հարցը պահանջում է վայր դնել կուսակցական շահերը»

ԱԺ նախկին խոսնակն այնուամենայնիվ դրական է համարում մադրիդյան սկզբունքները՝ համարելով պրահյան գործընթացի շարունակություն, որտեղ ինքնորոշման սկզբունքը ներառված է որպես կարգախոսական տարր:

Թորոսյանը ղարաբաղյան խնդրի կարգավորման հանրային քննարկումը որակեց «անվնաս»: «Հավատի ընթացքում որեւէ նոր բան չասվեց: Այն, ինչ կարելի էր ասել, հրապարակումներում վաղուց ասվել էր՝ այն էլ մի քանի անգամ: Իսկ այն, ինչ չի կարելի ասել հրապարակումներում, չէր ասվի 50 կուսակցություններից բաղկացած հավաքում», ասաց նա: Ըստ բանախոսի, խնդրի կարգավորման վերաբերյալ բացակայում են փորձագիտական, մասնագիտական քննարկումներն ու դիտարկումները: Ինչի փոխարեն ամեն ինչ դրվում է ծախել-չծախելու պարզ ու ձղձիմ հարթության վրա, որոնց Թորոսյանը լուրջ չի վերաբերվում: Հարցին, թե հնարավո՞ր է, որ Թորոսյանը նոր կուսակցություն ստեղծի՝ Ղարաբաղյան շահերը պաշտպանելու նպատակով, ԱԺ նախկին խոսնակն ասաց. «Ղարաբաղյան հարցը պահանջում է վայր դնել կուսակցական շահերը»:

Տիգրան Թորոսյանը շտաբի անդամ չէր

Մարտի 1-ին ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի ձեւավորած օպերատիվ շտաբում Տիգրան Թորոսյանը չի ընդգրկվել եւ տեղյակ չէ, թե ով է ցուցարարների դեմ կրակ բացելու հրամանն արձակել: «Մարտի 1-ին խորհրդարանն ունեցել է ընդամենը մեկ առնչություն: Գիշերը հրավիրվել է հատուկ նիստ՝ քննարկելու արտակարգ դրություն մտցնելու նախագահի հրամանագիրը», ասաց նա: Խորհրդարանի նախկին ղեկավարի կարծիքով՝ ժամանակին ճիշտ որոշում է եղել 4 պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելը: Սակայն այժմ նա կարծում է, որ ձերբակալված պատգամավորների գործը հիմնավորման կարիք ունի: «Պետք է ներկայացվեն պատգամավորների գործերի հետ կապված հիմնավորումներ, գործերը գնան դատարան եւ համապատասխան վճիռ կայացվի: Կամ էլ հարցը կրկին քննարկվի խորհրդարանում», ասաց նա: Մինչդեռ մարտյան դեպքերի առնչությամբ, երբ գլխավոր դատախազը ԱԺ-ին միջնորդություն ներկայացրեց Մյասնիկ Մալխասյանին, Հակոբ Հակոբյանին, Խաչատուր Սուքիասյանին եւ Սասուն Միքայելյանին անձեռնմխելիությունից զրկելու մասին, Թորոսյանը խորհրդարանի ղեկավար էր եւ հենց նրա գլխավորությամբ օրենսդիրը հավանություն տվեց դատախազի միջնորդությանը:

Հրաժարվեց անդրադառնալ Հովիկ Աբրահամյանին

ԱԺ-ի դերի բարձրացմանն ու Հովիկ Աբրահամյանի աշխատանքին Տիգրան Թորոսյանը հրաժարվեց գնահատականներ տալ, այդ պարտականությունը հանձնելով լրագրողներին եւ հասարակությանը: Իր խոսքերով՝ սեպտեմբերի 26-ից հետո իր կյանքում ոչինչ չի փոխվել: Չեն փոխվել կարծիքներն ու սկզբունքները, փոխվել է միայն պաշտոնը: Որպես անկախ պատգամավոր Թորոսյանը բազմաթիվ անելիքներ ունի: Բացի այդ, հետաքրքրվածություն է ցուցաբերում գիտական եւ այլ ծրագրերի վերաբերյալ: Անդրադառնալով ներքաղաքական իրավիճակին, Թորոսյանը որպես գլխավոր խնդիր բարձրաձայնեց բազմակուսակցական համակարգի չկայացվածությունը: «Այս պարագայում արտը ընդհանուր է թե՛ իշխանության, թե՛ ընդդիմության դաշտում: Եթե համակարգը կայացած չէ, չի կարող դրա մի մասը լավ լինել, մյուսը՝ վատ», եզրափակեց Թորոսյանը:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

Բնության հուշարձանների պահպանության մտահոգությամբ

Ասված խոսք է, որ այս մոլորակը մենք ոչ թե ժառանգություն ենք ստացել մեր նախնիներից, այլ պարտք ենք վերցրել մեր ժառանգներից: Բնության, նրա հարստությունների խելամիտ օգտագործման ու պահպանման խնդրին է ծառայում նաեւ բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը, որոնց տեսակներից Հայաստանում հայտնի են ազգային պարկը, արգելոցը, արգելավայրը եւ բնության հուշարձանը: Գյումրու բնապահպանական տեղեկատվության «Օրիուս» կենտրոնում մարզպետարանի, ՀԿ-ների, տարբեր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված հանրային քննարկումը նվիրված էր Շիրակի մարզի բնության հուշարձաններին:

ՀՀ կառավարության կողմից հանրապետության բնության հուշարձանների՝ ընթացիկ տարվա օգոստոսի 14-ին հաստատված ցանկում Շիրակի մարզից ընդգրկվել է 16 հուշարձան, չնայած ներկայացված էր եղել դրանից փոքր ավելին: Ծանոթանալով ընդգրկվածների ցանկին, որում տեղ են գտել մարզի տարբեր տարածքների հայտնի երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական եւ կենսաբանական օբյեկտներ, քննարկման մասնակիցները նշեցին, որ այստեղ առկա են որոշակի արժեք ներկայացնող նաեւ բազմաթիվ այլ բնական հուշարձաններ, որոնք արժանի են պահպանվողների շարքն ընդգրկվելու եւ մերօրյա հնարավոր ոնտնձգություններից ու ոչնչացումից հեռու մնալու: Ինչպես կարծիք հայտնեց ներկաներից մեկը, հենց մեր ամենահայտնի բնական հուշարձաններից մեկի՝ Գառնո ձորի «քարե սիմֆոնիայի» նկատմամբ անզուսպ ոտնձգությունն էր, որ կառավարությանը ստիպեց այլեւս չուշացնել պահպանվող բնության հուշարձանների ցանկի հաստատումը: Ուստի անհրաժեշտ համարվեց մասնագետների, համայնքների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ ճշտել ուշադրության արժանի նման օբյեկտների շրջանակը մարզում եւ ցանկը լրացնելու համապատասխան առաջարկություն ներկայացնել կառավարությանը:

«Ուսանողական օմբուդսմեն» ծրագիրը կշարունակվի

«Գյումրու ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ արդեն մի քանի ամիս գործում է «Ուսանողական օմբուդսմեն» ծրագիրը, որի նպատակը քաղաքի ուսումնական հաստատություններում ուսանողների շահերի պաշտպանության լիարժեք համակարգի ստեղծումն է: Երեկ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հրավիրված մամուլի ասուլիսում ամփոփելով եւ գնահատելով մինչեւ այժմ կատարված աշխատանքները, ծրագրի պատասխանատուները նախ կարեւորեցին քաղաքացիական այս նոր՝ «համաքաղաքային ուսանողական օմբուդսմենի» ինստիտուտի ստեղծումը: Իսկ ուսանողների իրավունքների ընտրված պաշտպանը իր ձեւավորած աշխատակազմի եւ քաղաքի բուհերում ու քոլեջներում իր ներկայացուցիչների միջոցով ինչպես քարոզչական, այնպես էլ բուն շահերի պաշտպանության որոշակի աշխատանք է կատարել: Տպագրվել ու տարածվել են ուսանողների իրավունքները ներկայացնող տեղեկատվական թերթիկներ, Գյումրու ուսանողական օմբուդսմենի կանոնակարգը: Ուսումնական հաստատություններում տեղադրվել են արկղեր, որոնց միջոցով ուսանողները կարող են ներկայացնել իրենց դիտումները եւ առաջարկությունները, նրանք իրենց իրավունքների պաշտպանին կարող են դիմել նաեւ հեռախոսային «Թեժ գծի» ու էլեկտրոնային փոստի միջոցով: Ինչպես նշվեց, անցած ժամանակամիջոցում ստացվել են 60-ից ավելի դիմումներ ու բողոքներ, որոնցից շատերին համապատասխան լուծում է տրվել:

Ծրագրի ժամկետն ավարտվում է, բայց սկսված աշխատանքը մտադրություն կա շարունակելու, նաեւ համագործակցելու տարբեր տեղական ու միջազգային կառույցների հետ: Հանդիպմանը խնդրանքով նամակ են ուղարկել նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, բայց պատասխան դեռ չեն ստացել: Հուսով են՝ կստանան:

Գ. Մ.

Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում արդյունավետ չէ

1-ին էջից

Գլխավոր դատախազությունը մինչ այժմ չունի տվյալներ, թե հանրապետության մի քանի մարզերում ու մայրաքաղաքի մի քանի համայնքներում, ինչպես են պայքարում կոռուպցիայի դեմ: Լոռու մարզը երեւույթի բացահայտման գործում առաջատարն է հանրապետությունում, մինչ այժմ նման 32 դեպք է բացահայտվել, 12 քրեական գործ էլ հարուցվել է Արմավիրում: Սյունիքում այս տարվա ընթացքում բացահայտվել է ընդամենը երկու, Վայոց ձորում էլ՝ չորս դեպք, նույն պատկերն է նաեւ մայրաքաղաքի մի շարք համայնքներում:

Հանրապետության գլխավոր դատախազի կարծիքով՝ պայքարի բացահայտումն առավել արդյունավետ է այն վայրերում, որտեղ քննադատության են ենթարկվել իրավապահ մարմինների աշխատակիցները: Վերը նշված մարզերի համապատասխան ստորաբաժանումների աշխատանքներից հանրապետության գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը դժգոհ է:

Ինչո՞ւ պայքարը չի տալիս համապատասխան արդյունք: Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանի** կարծիքով՝ օրենքն այնքան «ծակուծուկ» ունի, որ սուբյեկտիվ բազմաթիվ հնարավորություններ է ստեղծում:

Այն, որ օրենսդրական դաշտում թերությունները շատ են, տեղյակ է նաեւ արդարադատության նախարար **Գեւորգ Դանիելյանը**: Նրա կարծիքով, արդյունավետ աշխատելու համար պետք է դատախազությանը ստուգումներ անցկացնելու լայն հնարավորություններ տրվեն:

Հրապարակայնության մաչելիության ապահովումը եւս կարեւոր է Գեւորգ Դանիելյանի համար:

«Հայաստանի զարգացման ներկա փուլում կոռուպցիայի գերիշխող տեսակների գնահատականները վկայում են, որ Հայաստանը բարենպաստ դիրքում է գտնվում ԱՊՀ երկրների շարքում, փոխարենը զիջում է Արեւելյան Եվրոպայի եւ Մերձբալթյան երկրների կոռուպցիայի ընդհանուր մակարդակի համապատասխան ցուցանիշերին», սա հանրապետության նախագահի օգնական, հակակոռուպցիոն մոնիտորինգի հանձնաժողովի նախագահ **Գեւորգ Կոստանդյանի** կարծիքն է:

Կոռուպցիայի դեմ պայքարի մասին խոսելով ՀՀ ոստիկանապետի տեղակալ, քննչական գլխավոր վարչության պետ **Գագիկ Համբարձումյանը** փաստեց, որ կոռուպցիայի դեմ պայքարում անելիքները շատ են:

Համապատասխան մարմինները հավաստիացնում են՝ իրենք ամեն ինչ անում են կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ դարձնելու համար: Մինչդեռ «պայքարի արդյունավետություն» ասվածը դեռեւս հեռու է արդյունավետ լինելուց:

Օրինակ, խորհրդակցությանը ներկա Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազ **Գ. Խաչիկյանից** Աղվան Հովսեփյանը փորձեց ճշտել, թե ինչո՞ւ ոչ մի կոռուպցիոն բնույթի հանցագործություն չի հայտնաբերվել համայնքում: Դատախազ Խաչիկյանի խոսքերով, իրոք, 2008-ի առաջին կիսամյակում Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազությունում կոռուպցիոն բնույթի ոչ մի հանցագործություն չի արձանագրվել: Միայն 6 նյութ է նախապատրաստվել տարածքի մարմիններում, որոնցից երեքով հարուցվել է քրեական գործ. երկուսը՝ հատուկ քննչական ծառայությունում, մեկն էլ՝ դատախազությունում:

«Ընդունում եմ, որ այդ ցուցանիշները նույնպես չեն արտահայտում տարածքում եղած իրական վիճակը», ասում է Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազն ու հավելում, որ ստուգող, վերստուգող մարմինները կենտրոնացված են: Կենտրոնացված են նաեւ այն մարմինները, որոնք օպերատիվ փնտրողական գործառույթներ իրականացնելու իրավասություն ունեն:

«Մենք դեռեւս չենք կարողացել մշակել այնպիսի հստակ մեխանիզմներ, որտեղ արտահայտված կլինեն, թե կոնկրետ գերատեսչական կառույցներից ի՞նչ է պահանջվում անել, ո՞ր բնագավառներում եւ ի՞նչ լծակների օգտագործմամբ», նկատում է Գ. Խաչիկյանը: Դատախազ Խաչիկյանի կարծիքով, մարզերը եւ Երեւան քաղաքի համայնքները իրար հետ պետք է խիստ վերապահումով համեմատել: Վերջինս նշում է, թե Երեւանի համայնքներում կոռուպցիոն ռիսկեր ունեցող մարմինները փոքր են եւ համեմատելի չեն մարզերի հետ:

«Մեր մարզերը տասնյակ, հարյուրավոր տեղական ինքնակառավարման մարմիններ են սպասարկում: Խոսքը վերաբերում է գյուղապետարաններին, մյուս կառույցներին, որտեղ հիմնականում կոռուպցիոն հանցագործությունները բացահայտվել են: Եթե գյուղական համայնքն ունի գույքը տնօրինելու լիազորություն, ապա քաղաքապետարանները նման լիազորություններ չունեն: Որոշակի կոռուպցիոն ռիսկերի պակաս կա», այսպես փորձեց եզրափակել իր պատասխանը Խաչիկյանը: Աղվան Հովսեփյանը չհամաձայնեց վերջինիս արտահայտած մտքերին. «Ուզում ես ասել՝ պետական պատասխանատուների թիվը պակաս է, դրա համար էլ փոքր մարդ կա բռնելու: Այլ ձեւով ասած՝ ձկների քանակը փոքր է, որ այսօր պատրաստվում ենք բռնել: Ինչպե՞ս հասկանանք, որ Սյունիքի մարզում ընդամենը 2 կոռուպցիոն երեւույթ է բացահայտվել, իսկ մյուս մարզերում ավելի շատ: Ինչպե՞ս հասկանանք, որ Ջեզ մոտ ընդհանրապես գործ չկա, Շենգավիթում, որը մեկ համայնք է, 1 գործ է, Ավան, Նոր Նորքում մեկ գործ է. իրենց ջրերում ավելի փոքր ձուկ են բռնում, իսկ ձեզ մոտ ձկներ չկան»:

«Հաջորդ անգամ կուզեի, որ մեզ ներկայացնեիք կոնկրետ թվեր, կոնկրետ աշխատանքով, ոչ թե առաջարկություններով. ի՞նչ եք արել կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում», ընդգծեց ՀՀ գլխավոր դատախազը:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները՝ երկրի գլխավոր դատախազը ներկաներին եւս մեկ անգամ հիշեցնում է, որ էական նշանակություն ունի կոռուպցիոն բնույթի հաղորդումների, դիմումների ժամկետների քննարկումը:

«Մենք իրավապահ համակարգի աշխատակիցներ ենք. մեզանից ժողովուրդն ակնկալիքներ ունի, մենք ապրում ենք պատմական ժամանակահատվածում. սերունդները ձեզանից ակնկալիքներ ունեն. ձեզ է վիճակվել պատմականորեն իրականացնելու այդ դերը: Պետք է նկատել, որ կոռուպցիոն դրսեւորման մեծ մասը տեղի է ունենում հենց Երեւան քաղաքում: Երեւան քաղաքում են տեղակայված ողջ իշխանական կառույցները, սկսած դատախազությունից», նշեց գլխավոր դատախազը:

ԱԶԳ

Այլ տեսանկյուն

ԿԵՆՑԱՂԱՊԱՍՄԱՐԿՈՒՄ

Ատամի հարկ

Այդպիսի հարկ է գոյություն ունեցել Օսմանյան կայսրությունում: Երբ որեւէ թուրք բարձր պաշտոնյա հյուրընկալվում էր այլադավան, իրենց բնորոշմամբ, «գյավուրի» տանը, հացկերույթից հետո տանտերը պարտավոր էր մի կլորիկ գումար վճարել այդ պաշտոնյային իբրեւ «գյավուրի» հացով մաքված ատամների հարկ: Քանի որ կայսրությունում այլազգիներից մեծամասնություն էին կազմում քրիստոնյա հայերը, ողջ Արեւմտյան Հայաստանով հանդերձ, հետեւաբար դա հիմնականում ուղղված էր հայերի դեմ: Այն նպաստակ ուներ նվաստացնելու հյուրընկալողին, նսեմացնելու նրա արժանապատվությունը եւ ընդգծելու թուրքի գերազանցությունը հայի նկատմամբ:

Դա Օսմանյան կայսրությունում: Իսկ ինչպիսի՞ն է վիճակն այսօրվա անկախ Հայաստանում: Գրեթե անփոփոխ: Այլապես ի՞նչ անուն կարելի է տալ «օդի հարկ» կոչվող ճորտատիրական այն միջոցառմանը, երբ օդանավակայանում յուրաքանչյուր ուղեւոր տոմսերի հարաճուն գներից բացի անխտիր պետք է վճարի 10 հազար դրամ, ինչ-որ օդահարկ: Ի դեպ, այդ տուրքն ոչ միայն չնպաստեց հայոց օդային ավազանի ջինջացմանը եւ հայկական օդագնացության մեծ վերելքին, այլեւ ընդհակառակը, ավիացիան երջանցելով, մարդիկ ահագին ժամանակ (որքան դա հնարավոր էր), գերադասում էին Երեւան-Մոսկվա, Երեւան-Հյուսիսային Կովկասի քաղաքներ երթեւեկել հիմնականում ավտոբուսներով: Սակայն անաբխաս եւ աննեղդում եկամուտի աղբյուր այդ հարկը համառորեն գանձվում է առ այսօր մեզ անհայտ կերպով հոսելով ինչ-որ գրպաններ: Նկատենք, որ այն ներդրվել էր, ինչպես որ «ավազակաթեռության» գրեթե բոլոր ախտանիշները, այսօրվա ազգի «փրկիչի» պատմության հագածի օրով:

Ցրտաճառաբանված, վաս կշռադասված չափերի հարկեր եւ տուրքեր էլ կան, որոնց քաղաքացիները դիտվածային կերպով են առնչվում եւ դրությունից դուրս գալու համար լուտումունջ տանում են իրենց խաչը՝ առկա խնդիրը լուծելու համար եւ դրա շուրջը այլեւս չեն ծավալվում, դրանք նոստարական ծառայություններ են, այլեւայլ գանձումներ, որոնց մենք խնդիր չենք դնում անդրադառնալու, դրանք պետք է վերլուծեն բանիմաց, մեր հասարակության հնարավորություններին քաջատեղյակ այրերը եւ սահմանեն տրամաբանական վճարներ, ինչն այսօր գրեթե անհնար է հուսալ: Սակայն կան անտրամաբանական, ինչ-որ տեղ նաեւ ոչ պակաս նվաստացուցիչ վարձավճարներ, որոնց հասարակության զգալի մասն է առնչվում եւ, կարելի է ասել, ամեն, եթե ոչ օր, ապա՝ ամիս:

Մեզանում այսօր հպարտությամբ նշում են, որ Հայաստանը նախկին Սովետական Միության տարածքում ամենագազաֆիկացված ԱՊՀ երկիրն է: Գուցե այդպես է, բայց էականը դա չէ, այլ այն, որ այդ գազանցումը զգալի մասով կատարվում է բնակչության՝ բաժանորդների հաշվին: Սկսենք այնտեղից, որ բազմաբնակարան շենքերի մուտքերի տանիքներում նորմատիվներով պետք է անցքեր բացվեն, եւ տեխնիկական լեզվով ասած, դեֆլեկտորներ տեղադրվեն: Յուրաքանչյուր այդպիսի անցքը մի քանի տասնյակ հազար դրամ են գնահատում դա իրականացնող մասնագետները, այդ գումարը հավաքում ու կանխիկ ստանում են տվյալ մուտքի բնակիչներից, որը, կախված բնակարանների քանակից, ամեն տան վրա նստում է մի քանի հազար դրամ, իսկ առանձին քաղաքացիներ էլ չեն կամենում մասնակցել տվյալ դրամահավաքին, նրանց փոխարեն եւս վճարում են մյուսները, որպեսզի «սահմանված» գումարը կլորանա: Բայց ինչո՞ւ: Գազը քո արտանքն է, իմ համաձայնությամբ ու պայմանագրով բեր իմ բնակարանը, ես էլ կօգտագործեմ ու քեզ կվճարեմ: Բայց ոչ, մինչեւ գազը բնակարան հասցնելը շատ ճանապարհ կա անցնելու: Սկսած հրեջ ծառայությունից, որին չգիտես ինչու պետք է վճարես 5000 դրամ, դիմում գրելուց՝ 500 դրամ, փաստաթղթերը ձեւակերպելուց եւս 4500 դրամ եւ վերջացրած հեսագա մոնտաժային աշխատանքները, որոնք զանազան անհեթեթ անվանումներով, ավելացված արժեքներով եւ այլն, կարող են կազմել 50-60-80 եւ ավելի շատ հազար դրամներ: Այստեղ, իհարկե, այս դեպքում այդպես է ձեռնտու եւ պետք չէ ոչ մի կերպ հիշել շուկայական հարաբերությունները (ի դեպ, այդ կրկնակի չափոց

29 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ԼՈՒՅՍ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի հիմքերն ու իրացումն անթերի են

Տիգրան Թորոսյանի մենագրությունը

Լույս է տեսել քաղաքական գիտությունների դոկտոր Տիգրան Թորոսյանի «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում» մենագրությունը: Այն գալիս է լրացնելու մեր երկրի համար կենսական նշանակություն ունեցող խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը նվիրված աշխատությունների շարքը հատկապես քաղաքագիտական եւ իրավագիտական տեսանկյունից, որն առավել հիշ ուսումնասիրված է: Այս մենագրությունը Լեռնային Ղարաբաղի խնդրի ծագմանն ու կարգավորմանը նվիրված եզակի եւ բարձրարժեք աշխատություն է, որը ոչ միայն փաստերի հիման վրա անաչառորեն ներկայացնում է խնդրի ծագման պատճառներն ու էությունը, 1988թ. սկսված նոր շրջանի զարգացումներն իր երեք փուլերով (ժողովրդավարական կամարտահայտություն եւ բռնություններ, պատերազմ, կարգավորում), այլեւ հակամարտությունների կարգավորման միջազգային իրավական հիմքերը, ինքնորոշման իրավունքի տեղը միջազգային իրավունքում, կիրառման չափանիշներն ու ձեւերը, Լեռնային Ղարաբաղի խնդրի համապատասխանությունն այդ չափանիշներին:

Մենագրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե միջազգային իրավունքի շրջանակներում հակամարտության կարգավորման տեսական հիմքի ձեւակերպման տեսակետից, թե հակամարտության զարգացման ընթացքի համակարգված շարադրման ու հակամարտության իրական էությունը բացահայտող հետեւությունների հիմնավորման տեսակետից:

Ներկայացվող մենագրությունը միջազգային իրավունքի շրջանակներում ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը նվիրված առաջին ամբողջական ուսումնասիրությունն է: Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է կարգավորման միջազգային իրավական հիմքերն ու առանձնահատկությունները, ինքնորոշման իրավունքի տեղը միջազգային իրավունքում: Հեղինակին հաջողվել է արդացուցել, որ միջազգային իրավունքի նորմերը, առաջին հերթին՝ ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերը հստակորեն սահմանում են ինքնորոշման իրավունքին առնչվող բոլոր հասկացությունները եւ լիակատար հիմք են ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման համար: Տարածքային ամբողջականության սկզբունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք չէ, այլ այդ սկզբունքներից մեկի՝ պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքի տարրերից մեկը եւ կարգավորում է միանգամայն այլ՝ պետությունների միջեւ հարաբերությունները: Ինքնորոշման սկզբունքը ոչ միայն միջազգային իրավունքի յոթ հիմնական սկզբունքներից մեկն է (տարածքային ամբողջականության սկզբունքն այդ շարքում չէ), այլեւ ունի իրավական բարձրագույն՝ համապարտադիր եւ անվերապահ նորմի կարգավիճակ: Ավելին, անդրադառնալով լայնորեն տարածված այն կարծիքին, թե Հելսինկյան եզրափակիչ ակտի համաձայն տարածքային ամբողջականության սկզբունքը գերակայություն ունի ինքնորոշման իրավունքի նկատմամբ, հեղինակը միանգամայն համոզիչ փաստարկներով ապացուցում է, որ ոչ միայն նման հակադրման համար որեւէ հիմք գոյություն չունի, այլեւ, որ չկա միջազգային իրավունքի որեւէ նորմ, որը որեւէ պետության իրավունք է տալիս չհարգել ինքնորոշման իրավունքը:

Վերլուծելով ինքնորոշման իրավունքի կիրառման պայմանների ու չափանիշների հայտնի մոդելները, հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ նման միասնական մոդելի սահմանումը ոչ միայն հնարավոր է, այլեւ անհրաժեշտ՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հիմնավոր եւ անաչառ վճիռ կայացնելու եւ սուբյեկտիվ դիրքորոշումները բացառելու նպատակով: Ավելին, Տ. Թորոսյանն առաջարկում է պայմանների ու չափանիշների՝ համախումբ եւ բույլան հանրահաշվի հիման վրա կառուցված մոդել, որի օգտագործումը անհրաժեշտ եւ բավարար է ինքնորոշման իրավունքի կիրառումը հիմնավորելու կամ մերժելու համար՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Լեռնային Ղարաբաղի դեպքը լիովին բավարարում է ինքնորոշման իրավունքի կիրառման թե հայտնի, թե առաջարկվող պայմանները եւ չափանիշները:

Ըստ հեղինակի, ինքնորոշման իրավունքի կիրառման ուսումնասիրությունը վկայում է, որ դրա ձգձգումները՝ անկախ հիմնավորումից, պարբերաբար պատճառ են դառնում նոր բախումների ու մարդկային զոհերի, իսկ երբ հակամարտության կողմ է ոչ ժողովրդավարական երկիր, այն կարող է հանգեցնել տեղահանության կամ ցեղասպանության:

Մենագրությունն արժեքավոր է նաեւ այն պատճառով, որ սեղմ ծավալում փաստերի կոտ շարադրանքով ապահովում է հակամարտության զարգացման տրամաբանության ու բնույթի ճշգրիտ ընկալում:

Ըստ հեղինակի, հակամարտության ծագման եւ բնույթի ճիշտ բնորոշման տեսակետից կարեւոր է անցած դարասկզբի իրադարձությունների վերլուծությունը հակամարտության ենթատեքստում՝ Ցեղասպանություն, Նախիջեւանի բռնակցում Ադրբեջանին, Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացում ռուսական Կարմիր բանակի կողմից, Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոյի պարտությամբ՝ Լեռնային Ղարաբաղի ընդգրկում խորհրդային Ադրբեջանի կազմում: Թեեւ այդ խնդիրներից մի քանիսն առանձին, ավելի մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն, սակայն մենագրությունը տալիս է հետեւյալ միանշանակ հետեւության բոլոր հիմքերը. միջազգային իրավունքի շրջանակներում ղարաբաղյան հակամարտության ուսումնասիրությունը վկայում է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման գործընթացը պարզաղութացման եւ արտաքին տիրապետությունից ազատագրման դասական օրինակ է եւ այդ առումով լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվող նման գործընթացներին ներկայացվող պահանջներին:

1988թ. սկսված Ղարաբաղյան հակամարտության նոր շրջանի զարգացումներին հաճախ անդրադառնում է Ադրբեջանը՝ շարունակաբար աղավաղելով դրանք, նպատակ ունենալով խնդիրը ինքնորոշման իրավունքի հարթությունից սահմանների անձեռնմխելիության սկզբունքի կիրառման շրջանակներ տեղափոխել: Այդ նպատակի համար ծախսվում են հսկայական միջոցներ, հրատարակվում եւ միջազգային կառույցներում տարածվում են գրքեր եւ տպագիր այլ նյութեր, որոնք սկսել են արդյունք տալ: Մինչդեռ հակամարտության բնույթը ճիշտ ընկալելու տեսակետից չափազանց կարեւոր են հետեւյալ հարցերի պատասխանները. ինչպես է այն սկսվել, ով է կիրառել բռնություններ, ով է սկսել պատերազմը եւ այլն: Այդ առումով եւս ներկայացվող մենագրությունն ունի կարեւոր նշանակություն, քանզի անհերքելիորեն վկայում է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ժողովրդավարական կամարտահայտությանը Ադրբեջանը հակադրեց Սումգայիթի եւ Բաքվի ջարդերը, էթնիկ զտումներ Ադրբեջանի ողջ տարածքում, ապա նաեւ դիմեց ռազմական ագրեսիայի: Հեղինակը հատուկ ուշադրության արժանի է համարում մի փաստ, որը վերջին տարիներին ուշադրությունից դուրս է մնում եւ մոռացվում է. Սումգայիթի ու Բաքվի ջարդերն այնպիսի չափերի էին, որ ազգամիջյան բախումները խնամքով թաքցնող խորհրդային կառավարությունը ոչ միայն դա չկարողացավ անել, այլեւ ստիպված է եղել իրականացնել դատավարություններ՝ որոնք կազմակերպիչների դատապարտելով առավելագույն պատժի:

Քողարկելու համար իր կատարած հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ, Ադրբեջանը հաճախ շահարկում է Խոջալուի դեպքը, որին անդրադառնալիս մենագրության հեղինակը ընդգծել է երկու կարեւոր հանգամանք. այն տեղի է ունեցել Ադրբեջանի կազմակերպած դաժան շրջափակման եւ սանձազերծած պատերազմի արդյունքում, պատերազմական գործողությունների ժամանակ, եւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակը, ի տարբերություն ադրբեջանական բանակի, ինչպես ղարաբաղյան պատերազմի մյուս բոլոր դրվագներում, Խոջալուի գրոհի ժամանակ եւս թողել է մարդասիրական միջանցք ու դա գոյության մասին մի քանի օր տեղեկացրել է ադրբեջանցիներին, որոնց իրենց իշխանությունները մատնել էին մոռացության՝ ներքաղաքական պայքարում օգտագործելու նպատակով (Սուքալիբովի հեռացումն իշխանությունից):

Ղարաբաղյան հակամարտության նոր շրջանի պատերազմական փուլին անդրադառնալիս մենագրության հեղինակը որպես աղբյուր օգտագործել է բացառապես օտար հեղինակների՝ հիմնականում 1992-1996թ.թ. Մինսկի խմբում Ռուսաստանը ներկայացրած Վ. Կազիմիրովի եւ ռազմական պատմության ու պատերազմների տեսության ամերիկացի մասնագետ Փ. Գոռի աշխատությունները, ինչը վկայում է բերված փաստերի, հետեւաբար եւ վերլուծությունների ու հետեւությունների բարձր հավաստիության մասին: Արդյունքում հստակ պատասխաններ են ստանում գրքում ձեւակերպված, այդ փուլին վերաբերող հետեւյալ հարցերը, որոնք հակամարտության կարգավորման տեսակետից ունեն բացառիկ նշանակություն.

ո՞վ է սկսել պատերազմը,

ե՞րբ եւ ինչո՞ւ ԼՂՀ պաշտպանության բանակը դուրս եկավ ԼՂԻՄ սահմաններից,

ո՞վ է մերժել կամ խախտել հրադադարները:

Սովորաբար պատերազմի սկիզբ է համարվում 1992թ. հունվարի 26-ը, երբ ադրբեջանական զինվորական ստորաբաժանումները՝ պաշտպանության նախարար Մեհտիեւի գլխավորությամբ գրոհեցին Քարինտակ գյուղը կամ հունիսի 12-ը, երբ Ադրբեջանը լայնածավալ գրոհով ներխուժեց Մարտակերտի շրջան: Իհարկե, հիմնական հարցադրման տեսակետից երկու դեպքում էլ պատերազմի սանձազերծման մեղքն Ադրբեջանինն է, սակայն Տ. Թորոսյանն առաջարկում է մեկ այլ ուշագրավ մոտեցում, որը չի փոխում հարցադրման պատասխանը, սակայն առավել ամբողջական է բնութագրում հակամարտությունը: Ըստ այդ մոտեցման, ղարաբաղյան պատերազմը սկսվել է 1991թ. աորիլին, երբ խորհրդային ղեկավարության համաձայնությամբ խորհրդային բանակի 31-րդ մոտոհրաձգային դիվիզիայի մասնակցությամբ, զրահատեխնիկայի եւ ուղղաթիռների օգտագործմամբ՝ ադրբեջանական ՄՀՕՋ-ի ջոկատները հայաթափեցին Շահումյանի եւ Հադրութի շրջանի 24 գյուղ:

Կարեւոր է նաեւ հեղինակի հետեւյալ դիտարկումը, որն անհերքելիորեն հաստատվում է փաստերով. պատերազմի առաջին փուլի ավարտին ԼՂՀ պաշտպանության բանակը բավարարվեց Լեռնային Ղարաբաղի օդային եւ ցամաքային շրջափակման վերացմամբ եւ ադրբեջանական զորքերի դուրսմղմամբ՝ դուրս չգալով ԼՂԻՄ սահմաններից, սակայն դա չապահովեց անվտանգությունը, քանի որ խորհրդային արհեստականորեն գծված սահմանների խիստ կտրվածությունը դժվարացնում էր դրանց պաշտպանությունը, իսկ սահմաններին տեղակայված ադրբեջանական կրակակետերի եւ ռազմական օդուժի անդադար ռմբակոծությունը շարունակում էր ավերածությունը: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակին այլընտրանք չթողնվեց եւ ԼՂՀ անվտանգության ապահովման նպատակով հաստատվեցին այսօրվա սահմանները: Չափազանց

Շարունակությունը՝ էջ 8



ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, սոցիալական գիտությունների դոկտոր, ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն

Օրերս լույս տեսած Տիգրան Թորոսյանի «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում» մենագրության խիստ հրատապությունն ու կարեւորությունը ընդգծվում են հատկապես այսօր, երբ զգալիորեն ակտիվացել են քննարկումները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ եւ կարգավորման հիմնական սկզբունքներից մեկը հայտարարված է ինքնորոշման իրավունքի եւ տարածքային ամբողջականության սկզբունքի ներդաշնակ կիրառումը: Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման գործընթացը եղել է անթերի ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ խորհրդային Միության օրենսդրության շրջանակներում: Ինքնորոշման համար ընտրելով անկախության տարբերակը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդը խնդրի կարգավորման գործընթացում կատարել է էական զիջում՝ ինքնակամ հրաժարվելով միջազգային իրավունքի շրջանակներում Հայաստանի Հանրապետության հետ միավորվելու իր անօտարելի իրավունքից:

Հեղինակը միանգամայն արդարացիորեն նշում է, որ այնպիսի բարդ գործընթաց, ինչպիսին հակամարտության կարգավորումն է, ունի մի շարք բաղադրիչներ՝ իրավական, քաղաքական, պատմական, մշակութային, քարոզչական եւ այլն, եւ անհրաժեշտ է շարունակաբար աշխատանք բոլոր ուղղություններով: Միաժամանակ, Հարավային Կովկասում տարածաշրջանային որեւէ խնդրի լուծման ժամանակ հնարավոր չէ հաշվի չառնել աշխարհաքաղաքական զարգացումներն ու տարաբնույթ շահերի բախումը: Հետեւաբար իրավագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություններն, ունենալով էական նշանակություն եւ միջազգային իրավունքի շրջանակներում ապահովելով ամուր դիրքեր, խնդրի արդարացի կարգավորման համար պետք է զուգակցվեն արդյունավետ բանակցային հմտություններով եւ փորձագիտական շարունակաբար աշխատանքով՝ վերոհիշյալ բոլոր ուղղություններով: Որեւէ բաղադրիչի եւ առավել եւս բաղադրիչների անտեսումը ի սկզբանե հետեւանք է մյուս կողմի գործը եւ էապես նվազեցնում հաջողության հնարավորությունները:

Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության միջազգային ընդգրկումը, կարեւոր է, որ մենագրությունը հնարավորինս արագ թարգմանվի ու հրատարակվի նաեւ անգլերեն եւ ռուսերեն:

Հայացք...

Պատմության

Առաջին աշխարհամարտի (Հայաստանի) փառքի ճանապարհեն.

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ
Քաղաքագիտության դոկտոր

Գնահատելով հայ ժողովրդի՝ առաջին աշխահամարտի տարիներին խաղացած դերը «հասարակաց թշնամու» (թուրք-գերմանական բլոկ) դեմ տարած հաղթանակում, Ջեյմս Ջեռարդը (ԱՄՆ դեսպանը Գերմանիայում), ԱՄՆ կառավարությանը ներկայացրած 1919 թվականի հունվարի 7-ի տեղեկագրում ասում էր. «Ամերիկացիք պետք է մի վայրկյան կանգ առնեն եւ խորհեն, թե ինչ կլիներ պատերազմի ելքը եւ տեղողությունն արեւմուտքում, եթե թուրքերը ութ ամիս առաջ հասնեին Բաքու: Եվ նրանք ավելի կանուխ կհասնեին, եթե հայերը չդիմադրեին»: Ավելի հեղինակավոր է եւ տպավորիչ գեներալ Էրիխ ֆոն Լյուդենդորֆի, գերմանական բանակի փաստացի ղեկավարի, խոստովանությունը. «Գլխավոր ազդակը, որ առաջ բերեց գերմանական արեւմտյան բանակի խորտակումը, վառելանյութի պակասն էր, որովհետեւ թուրքերը չկարողացան ժամանակին գրավել Բաքուն, եւ հայերն էին, որ թուրքերին արգելք եղան Բաքուն գրավելու ժամանակ»: Եվ այն ռազմաճակատը, որ «Սեւ ծովից մինչեւ Մոսուլ երկարող գիծն էր», վճռում էր ոչ միայն Հայաստանի ապագան, գնահատում է հանրաճանաչ Վիկտոր Բեռառը, այլեւ «բոլոր ժողովրդաբեռությանց ճակատագիրը»:

Հիրավի: Պլանավորելով 1918 թվականի ռազմական գործողությունները, ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը նախատեսում էր, որ Գերմանիայի դաշնակիցները պետք է սոսկ «դիմանային»՝ մինչ իրենք կհաղթեին ֆրանսիական (արեւմտյան) ճակատում: Թուրքական ուժերն այս պատերազմում, ազատված լինելով Ռուսական հեղափոխության հետեւանքով Փոքր Ասիայում (Հայաստան), կարող էին, ունենալով բավարար ուժ, «օժանդակել իրենց բանակներին **Միջագետքում եւ Ասիայում** (ընդգծումն իմն է.- Լ. Շ.» (Воспоминания Гиненбурга. Сокр. пер. с нем. Пг. 1922, էջ 65): Մանավանդ, որ համաձայն գերմանական գլխավոր շտաբի, Թուրքիայի գլխավոր խնդիրը Կենտրոնական տերությունների համագործում ընկած էր «ավելի շատ **Սիրիայի եւ Միջագետքի ուղղության մեջ, քան Կովկասում եւ Կասպից ծովի ուղղության մեջ** (ընդգծումն իմն է.- Լ. Շ.)» (նույն տեղը): Ընդհանուր առմամբ, մինչեւ ռուսական հեղափոխություն, այս տեսակետը թուրքական ղեկավարության միջավայրում արտահայտություններ չէր հանդիպում: Այսպես, 1916 թվականի սկզբներին, Պլեստում էնվերը Հինդենբուրգին սիրո խոստովանություն էր անում. «Թուրքիայի դրությունը Ասիայում, որը չափով շատ դժվարին է: Մենք պետք է զգուշանանք, որ մեզ Հայաստանում ավելի հեռուն կտրեն: Չի բացառված նաեւ Իրանում ռազմական գործողությունների վերսկսումը: Ես մտածում եմ նաեւ, որ շուտով անգլիացին ի վիճակի կլինի հարձակվել մեզ վրա Սիրիայում գերազանցող ուժերով: Սակայն ինչ էլ պատահի Ասիայում, պատերազմի ելքը կախված է լինելու եվրոպական ճակատներում դրությունից, դրա համար էլ ես առաջարկում եմ օգտվել իմ բոլոր ազատ դիվիզիաներից» (նույն տեղը, էջ 13):

Ասացինք «արտահայտ», քանզի այլ էր թուրքական միլիտարիզմի բարոյական-հաղթական ընթացքների հենքը: Ուստի եւ չմեղանում է նույն Հինդենբուրգը, ֆենելով իր գրքը հաճախորդին: «Ինչ նշանակություն կարող են ունենալ Կ. Պոլսի խոստումներն ու բարի կամքը, երբ զորավարները **ճակատամարտերի հեռավոր դաշտերում գնում են իրենց ճանապարհով** (ընդգծումը իմն է.- Լ. Շ.)» (նույն տեղը, էջ 104)՝ համաթուրանականության եւ համախալամիզմի իդեալների ճանապարհով, Թուրքիայի համար «ամենաժվարագույն խնդիրներից մեկի» (Հինդենբուրգ)՝ հայկական հարցի «լուծման» ճանապարհով: «Ռուսաստանը հեղափոխությունից հետո,- արձանագրում է Հինդենբուրգը,- համախալամությունը ձգտում էր տարածել Կովկասի ուղղությամբ: Նա ձգտում էր տարածվել նույնիսկ Անդրկովկասի ուղղությամբ եւ ի վերջո խճճվեց Կենտրոնական Ասիայի ընդարձակ տարածքներում» (նույն տեղը, էջ 31):

Եվ Օսմանյան ճիվաղը, պատահական հանգամանքների երջանիկ դասավորությամբ ու Եվրոպայի ճիրտի հզոր հարվածների տակ շրջադարձ էր կատարում դեպի Արեւելք, դեպի Նվիրական Թուրան՝ անսալով, այս անգամ էլ, դաշնակցային իր պարտավորություններին: Շուտ էլ գալիս դեպի Արեւելք, որտեղ Արեւելյան Հայաստանն էր եւ արեւելահայությունը, գաղթականության ահռելի զանգվածը, որդեգրում էր ռազմահաղթական մի ուղղություն («Մենք հեռացանք Պալեաններեն, կը հեռանանք նաեւ Ափրիկեն, բայց մենք պետք է տարածվինք դեպի Արեւելք, հոն է մեր արյունը, մեր կոմը ու լեզուն: **Եվ ասիկա՝ տարերային ձգողություն ունի**» (ընդգծումը իմն է.- Լ. Շ.): Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն: Եվ դրա՞ համար կանգնած եք մեր այդ ճամբուն վրա... Դուք պետք է մեկ կողմ հաշվեք եւ մեզի ճամբա տաք: Ահա թե որ է մեր հիմնական վեճը...»՝ ասում էր Վեհիբը Բաքուում Հայաստանի պատվիրակության անդամներին), որը, խորհրդի մեջ, ձեռավորվել էր Բալկանյան պատերազմների ադյունքով ու ամրագրվել թուրք-գերմանական զինակցությամբ:

Այսպես Թուրքիայում Գերմանիայի դեսպան տխրահռչակ բարոն Հանս ֆոն Վանգենհայմը (Wangenheim) Օսմանյան Մեծ վեզիր Մեհմեդ Սայիդ Հալիմ փաշային ուղղված նամակում (1914 թ., օգոստոսի 6, կետ 5) ասում էր. «Գերմանիան պարտավորվում է Թուրքիային առիթ տալ նրա **արեւելյան սահմանների այնպիսի ուղղում** (ընդգծումը իմն է.- Լ. Շ.), որը նրան հնարավորություն կտա հաստատել անմիջական շփում Ռուսաստանի մուսուլմանական տարածքների հետ» (Տե՛ս Лудшувейт Е. Ф. Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. Военно-политеческий очерк. М., 1966, էջ 33): Օսմանյան շովինիզմի ու ռասիզմի այս idea-fix-ը ըստ էության ամբողջական իր հիմնավորումն էր գտնում, ամբողջական իր հիմնավորումն էր գտնում, անտարակույս չէ պրուսական միլիտարիզմի աստվածային հարկադրական-ցնորատեսական ձգտումներում:

Ռայխը, հաղորդում է կայզերական Գերմանիայի հայտնի գեներալներից Լիման ֆոն Զանդերսը, ենթադրում էր, որ Թուրքիան «ոչ միայն իր ձեռքում կպահի նեղուցներն ու կպաշտպանի սահմանները... այլեւ կհրատակեցնի Եգիպտոսը, կազատագրի Պարսկաստանը, հող կնախապատրաստի Անդրկովկասի անկախ պետությունների ստեղծման համար, Աֆղանստանի կողմից վտանգ կստեղծի Հնդկաստանին... եւ ... գործում աջակցություն ցույց կտա Եվրոպայում ռազմական գործողություններին» (Տե՛ս Готлиб В. В. Тайная дипломатия во время первой мировой войны. Пер. с анг. М., 1960, էջ 50):

... Ռազմավարական ազդակների այսպիսի խաչաձեւման, աշխարհակալական իդեալների նման զուգադիպման պայմաններում էլ թուրքական նենգամտությամբ խախտելով Երզնկայի (1917 թ., դեկտեմբերի 18) զինադադարը, ռուս-թուրքական կազմալուծված ռազմաճակատի ողջ երկայնքով 1918 թվականի փետրվարի 12-ին թուրքական բանակախումբը Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ անցավ հարձակման: Պատմական հարկադրանքի ողջ օրհասով եւ անխուսափելի ճակատագրականությամբ սկսվեց Հայաստանի անկախության պատերազմը, առաջին աշխարհամարտի գոտեմարտերից ամենահերոսականն ու, թերեւ, ամենաանհուսալին, սակայն ամենեփին էլ ոչ աննշմարելին ու ցայսօր դեռեւս ըստ արժանվույն չգնահատվածը, կռիվը հանուն Հայաստանի գոյության եւ, ինչպես կասեր նույն Վիկտոր Բեռարը, հանուն «բոլոր ժողովրդաբեռությանց» ապագայի: Պատմության տարիմաստություններից է. ճակատագիրը քրիստոնեական (կարդա՝ արեւմտյան) հաղթակրթության փրկության գործն Արեւելքում բարդեց քրիստոնյա Հայաստանի արնաքոր եւ արնաքամ ուսերին (1918 թ. արդեն ոչնչացված էր հայոց գենոֆոնդի շուրջ 50 տոկոսը: Օսմանյան պետությունը հայությունից (իր քաղաքացիներից) կողոպտել էր շուրջ 20 մլրդ ֆրանկի հարստություն):

Հայաստանը զրկված էր այլընտրանքից. մնում էր պատերազմը՝ որպես ուղիղ ճանապարհ:

(1918 թ. սկզբներին նախկին Ռուսական ռազմաճակատը Արեւմտյան Հայաստանում բաժանված էր երկու հատվածի. Բաբերդից (Բայբուրդ) մինչեւ Սեւ ծով ձգվում էր վրացական ազգային կորպուսը (12 հազար սվին եւ 80 հրետանային միավոր, հրամանատարը՝ գեներալ Վ. Դ. Գաբաեւ (Գաբաեվիլի), իսկ հայկական զինված ուժը՝ առանձին բանակային կորպուսը, պետք է պաշտպաներ Բաբերդից մինչեւ պարսկական սահմանն ընկած հատվածը, ներառյալ Էրզրում-Կարս ամրացված շրջանը (17 հազար սվին եւ 16 մարտկոց՝ հրամանատարը՝ գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյան): Ընդհանուր ռազմաճակատի գլխավոր հրամանատարն էր վրացի գեներալ-լեյտենանտ Ն. Զ. Օդիշելիձեն):

Կռվողն, անշուշտ, հայկական բանակային կորպուսն ու նրան օժանդակող այլ ուժեր էին: Այս աննախադեպ դյուցազնամարտի բոլոր ելեւէջները, թե՛ ռազմական, եւ թե՛ դիվանագիտական հողի վրա, մինչեւ Սարդարապատ ու Մայիս 28, մինչեւ Բաքուի դաշնագիր հայտնի են եւ գնահատված. այն ավարտվեց Հայաստանի անկախության հռչակումով ու նրա միջազգային ճանաչումով:

Եվ մինչ կչորանար թանաքը Բաքուի դաշնագրի (1918 թ., հունիսի 4) տեքստի տակ, թալանից, ավարառությունից, թրքական եղեռնագործությունից արբեցած, սակայն Առաստյան դաշտից դուրս շրտված թուրանական հորդան խելակորույս մղումով նետվում է՝ Բաքու: Առաջին նրա ընդհարումը Բաքվի զորքերի հետ տեղի ունեցավ 1918 թվականի հունիսի 5-ին, Քյուրդամիր կայարանի մոտ: Սկսվում է դյուցազնամարտի 2-րդ եւ վերջին արարը, եթե կուզեք՝ վերջնամարտը: Այս պահից է, որ դրսեւորվում է արդելու հայոց անկոտրում կամքը, ռազմական հանճարի կենսատու ուժը, ռազմագիտական արվեստի, հիրավի, շքեղ բեմականացումը:

Դատեք ինքներդ.

Բաքուն բազմաթիվ իմաստներով ուներ բացառիկ դեր առաջին աշխարհամարտի «շախմատային զինախաղի» Արեւելյան հատվածում՝ Հայաստանի ճակատագրի («այդ ժամանակներում,- յաստանի ճակատագրի («այդ ժամանակներում,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- գտնվեցին հարմարակ եւ հանդուգն (թուրք) հրադադարակախոսներ, որոնք հայտարարեցին, թե Հայաստանի խնդրի վերջնական լուծումը կախված է Բաքվից. երբ կգրավենք Բաքուն, կլուծենք եւ Հայաստանի հարցը». Գյուլխանդանյան Ա. «Բաքուն Հայաստանի անկախության եւ նորա պահպանման տեսակետից, «Մայիս 28». 1918-1938 խանամյակ, Փաստիզ, 1938, էջ 27), «աշխարհամարտի ելքի իմաստով» (Ջ. Ջեռարդ), շնորհիվ Բաքվի կազմակերպված ուժի, աշխարհագրական դիրքի եւ բացառիկ բնական հարստության՝ նրա քարյուղի (Տե՛ս նույն տեղը, էջ 22):

Ճիշտ է, որ վառելանյութի՝ բացի քառածուխը, պաշարներից գրեթե զուրկ Գերմանիայի համար հրատապ խնդիրը (Բաքվի) նավթն էր՝ Գերմանիայի աղեսը կանխելու միջոցը (այդ մասին տե՛սErgin D. Добыча. Всемирная история борьбы за нефть, денга и власть., Пер. с англ. М., 1999, էջ 200), սակայն կար նաեւ գլխավորը՝ համագերմանականության (պանգերմանիզմ) իդեալը: Ընդ որում, համաշխարհային տիրապետության համար Գերմանիայի պայքարում 1917 թվականի մարտից հետո շեշտադրամասնու ուժը, ռազմագիտական արվեստի, հիրավի, շքեղ բեմականացումը:

Դատեք ինքներդ.

Բաքուն բազմաթիվ իմաստներով ուներ բացառիկ դեր առաջին աշխարհամարտի «շախմատային զինախաղի» Արեւելյան հատվածում՝ Հայաստանի ճակատագրի («այդ ժամանակներում,- յաստանի ճակատագրի («այդ ժամանակներում,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- գտնվեցին հարմարակ եւ հանդուգն (թուրք) հրադադարակախոսներ, որոնք հայտարարեցին, թե Հայաստանի խնդրի վերջնական լուծումը կախված է Բաքվից. երբ կգրավենք Բաքուն, կլուծենք եւ Հայաստանի հարցը». Գյուլխանդանյան Ա. «Բաքուն Հայաստանի անկախության եւ նորա պահպանման տեսակետից, «Մայիս 28». 1918-1938 խանամյակ, Փաստիզ, 1938, էջ 27), «աշխարհամարտի ելքի իմաստով» (Ջ. Ջեռարդ), շնորհիվ Բաքվի կազմակերպված ուժի, աշխարհագրական դիրքի եւ բացառիկ բնական հարստության՝ նրա քարյուղի (Տե՛ս նույն տեղը, էջ 22):

Ճիշտ է, որ վառելանյութի՝ բացի քառածուխը, պաշարներից գրեթե զուրկ Գերմանիայի համար հրատապ խնդիրը (Բաքվի) նավթն էր՝ Գերմանիայի աղեսը կանխելու միջոցը (այդ մասին տե՛ս Ergin D. Добыча. Всемирная история борьбы за нефть, денга и власть., Пер. с англ. М., 1999, էջ 200), սակայն կար նաեւ գլխավորը՝ համագերմանականության (պանգերմանիզմ) իդեալը: Ընդ որում, համաշխարհային տիրապետության համար Գերմանիայի պայքարում 1917 թվականի մարտից հետո շեշտադրամասնում էին փոխվել էին, երբ անգլիացիները գրավեցին Բաղդադը: Այլեւ անիրական դարձավ Բեռլին-Բաղդադ երկաթուղով Ասիայի խորքերը թափանցելու ռազմավարությունը: «Drank Nach Osten»-ը այստեղ իր ճանապարհը, «Ասիայի խորքերը թափանցելու» իր ուղին կարող էր որոնել Բեռլին-Բաքու-Բուխարա համաշխարհային մայրուղում: Խոսք տանք Զարեւանդին (Զավեն Նալբանդյան), թուրք ինքնության եւ թուրքականության անգերազանց գիտակին:

Թուրքերը, գրում է Զարեւանդը, 1918 թվականին «կմտնեին հյուսիսային Պարսկաստան, կաստամբեցնեին Գիլանը եւ պարսկական Ատրպատականը, անկախ հանրապետություն հռչակելու պատրաստություններ կտեսնեին»: Սակայն, ընդգծում է Զարեւանդը, «թուրքերն ու անոնց զինակից գերմաններուն աչքը Աշխաբադ-Միրվ (Մերվ)-Բուխարա-Սմիրղանդ (Սամարղանդ)-Թաշքենտ (Տաշքենդ) ճամբուն վրա էր, եւ չէին կրնար երկար ճանապարհ վասնել՝ նվաճելու հյուսիսային Պարսկաստանը»(Զարեւանդ, Սելիմեն-Քեմալ. Թրքական ծրագիրները Իրանի նկատմամբ, «Հայրենիք», 1931, մայիս, էջ 160):

Եվ ուշագրավ էր, որ ռազմավարական հումքի եւ հատկապես նավթի պակասը, ռազմաքաղաքական ցայտնոտը էլ ավելի էին բորբոքում գերմանական ռազմանոլների անհագ նկրտումները: Գերագույն հրամանատարության գլխավոր ռազմակայանի (Օպա, 1918 թ., հոկտեմբերի 2) խորհրդակցությունում Լյուդենդորֆը բացում է գլխավոր հրամանատարության խաղարտեզը. գրավել նոր տարածքներ Թուրքմենիայում եւ Թուրքեստանում, հիմք դնել նավթի արդյունահանմանը Բաքվում (Прусско-германский генеральный штаб 1640-1965. К политической роли в истории. Пер. с нем. М., 1966, էջ 191): Գործը հասնում է ընդհուպ զավեշտի. այլեւս անգոր (ցանկության դեպքում) զսպելու թուրքերի հայաջնջ քաղաքականությունը եւ ազդելու նրանց գործելաձեւի վրա, առավել եւս գրավելու Բաքուն, թուրքական տանական թագի տեղը զբաղեցնելու տենչը աշխարհում, ռուսական (Կովկաս-Անդրկովկաս, Միջին Ասիա) որովայնին եւ անգլիական Արեւելքին (Աֆղանստան, Հնդկաստան) տիրանալու անկասելի ձգտումը եւ, իհարկե, նրան շարժող կենսատու արյունը՝ նավթը: Ճիշտ է, 1918 թվականին կենտրոնական տերությունների տրամադրության տակ էր ռումինական հումքը, սակայն «Գերմանիայի կողմից ռումինական նավթային արդյունաբերության եւ հացահատիկի ժամանակավոր գրավումը նրան ապահովեց, Բեզիլ Լիդլ Հարտի պատկերավոր գնահատմամբ, միայն դեֆիցիտ (պակասորդ) եւ կոլապսի (կործանում) միջեւ տարբերությունը» (Տե՛ս Ergin D. Добыча. Всемирная история борьбы за нефть, денги и власть, էջ 199):

Ասվել է. Ռումինիան էր, որ «իր բռնազավթումից հետո դարձավ նավթի, ինչպես նաեւ հացահատիկի մեծ քանակի հիմնական մատակարարը: 1916 թվականի նոյեմբերից մինչեւ 1918 թվականի նոյեմբեր մատակարարեց 1,141 մլն տոննա նավթ, որից 890 հազարը սպացավ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան՝ 231200 հազար տոննան, իսկ մնացած քանակությունը՝ Թուրքիան եւ Բուլղարիան» (Տե՛ս Прусско-германский генеральный штаб 1640-1965. К политической роли в истории, էջ 173): Ակնհայտ է նաեւ, որ նույն Լյուդենդորֆը պատերազմի ընթացքը փոխելու միջոցը տեսնում էր Բաքվի նավթահանքերին տիրանալու մեջ եւ այդ խելահեղ նպատակին հասնելու ճանապարհին Գերմանիան երկնեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիր-կոմպրոմիսը (փոխզիջում) գերմանական իմպերիալիզմի եւ ռուսական «սոցիալ իմպերիալիզմի» միջեւ: Սակայն, մինչ այդ դաշնագրով դադարեցվում էին ռազմական գործողությունները երկու «ոխերիմ բարեկամների»՝ Գերմանիայի եւ Ռուսաստանի միջեւ, թուրքերն արդեն նլանում էին դեպի Բաքու, դեպի Արեւելք՝ Հինդենբուրգի հոգեզավակ էնվերի նախաձեռնությամբ: «Նա-

Հայկական գործոնը

ավարտի 90-ամյակը

Բաքվի (1918 թ.) էպոպեան

խազգալով,- գրում է «Նավթի մասնագետ» Դ. Երգինը,- որ դաշնակցի հաջողությունը կհանգեցնի նավթահանքերի անխնա ոչնչացման, Գերմանիան բոլշեւիկներին խոստացավ զսպել թուրքերին՝ նավթի դիմաց: «Իհարկե, մենք համաձայն ենք», ասաց Լենինը: Իոսիֆ Սալինը «...» համաոաստխան հրամանով հեռագիր ուղարկեց հաղթը վերահսկող Բաքվի Կոմունային: Սակայն տեղական կոմունիստները չցանկացան համաձայնել: «Ո՛չ հաղթանակի, ո՛չ պարտության դեպքում մենք գերմանական թալանչիներին չենք տա մի կաթիլ նավթ՝ արդյունահանված մեր աշխատանքով՝ պատասխանեցին նրանք» (Ергин Д. Добыча. Всемирная история борбы за нефть, денги и власть, էջ 200):

Ի մասնավորի, Բաքվի (տեղական) բոլշեւիկների այս առողջ ու հայրենանվեր դիրքորոշումը բարձր է գնահատում Բաքվի հայոց ազգային խորհրդի նախագահ Աբրահամ Գյուլխանդանյանը: Նրանք, գրում է վերջինս, «որոնք որոշ էին ներկայացնում Բաքվի առանձնահատուկ պայմանների մեջ», ոչ միայն դատապարտում էին իրենց ընկերներին Բրեստ-Լիտովսկի «ամոթալի գործի համար», այլեւ «բացարձակորեն հայտարարում էին, որ իրենք չեն ընդունում այդ դաշնագիրը եւ որոշում ունեին ամեն կերպ դիմադրելու տաճիկների ներխուժմանը...» (Գյուլխանդանյան Ա., Բագուն Հայաստանի անկախության եւ նորապահպանման տեսակետից, էջ 24):

Լյոնդենդորֆը վճռական էր. 1918 թվականի մայիսի 15-ին Կ. Պոլսում գտնվող գեներալ Հանս ֆոն Սեկտին (թուրքական բանակի գլխավոր շտաբի պետի գերմանացի տեղակալ)՝ նա հրամայում է ձեռ առնել այնպիսի միջոցներ, որոնք էնվեր փաշային կողմնորոշեցնեին ձեռնպահ մնալ Բրեստի պայմանագրով նախատեսված

տակայն նրանք այդ ուժը, ինչպես ասվել է, այլեւս չունեին: Ուստի եւ զավեշտից ու խաղախաղ դեմագոգիայից այն կողմ չի անցնում Լենինի հեռագիրը Ցարիցին՝ Սալինին, համեմված բացահայտ ցինիզմով. «Բաքվի վերաբերմամբ ամենակարեւորն է, որ դուք անդադար կապի մեջ լինեք Շահումյանի հետ, որպեսզի Շահումյանը իմանար գերմանացիների առաջարկը, որ ասված է դեսպան Իոֆֆեին Բեռլինում, այն մասին, որ գերմանացիները կհամաձայնեին կանգնեցնել թուրքերի հարձակումը Բաքվի վրա, **եթե մենք երաշխավորենք գերմանացիներին տալ նավթի մի մասը: Մենք, իհարկե, կհամաձայնենք** (ընդգծումը իմն է.- Լ. Շ.)» (1918 թ. հուլիսի 7.- Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 50, եր. 1983, էջ 132): Ավելին: «Խորհուրդների V համագումարի եւ կենտրոնական խորհրդային իշխանության որոշման դեմ դաշնակների (կարդա՝ հայ ազգային ուժերի.- Լ. Շ.) ամեն մի գործողություն դիտվելու է որպես պատսամբություն եւ որպես դավաճանություն: Զորեր ուղարկելու համար միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող» (Լենինը՝ Շահումյանին, 1918 թ., հուլիսի 29.- նույն տեղը, էջ 148-149):

Ինքնին հասկանալի է, որ հայկական կողմը որեւէ մեկնաբանությամբ չէր կարող համաձայնել Բաքվի գերմանա-թուրքական բռնազավթման հետ: Գերմանա-թուրքական բլոկի երկընտրանքի բացառող դիրքորոշումը հայոց համար այլ տարբերակ չէր թողնում: Հիդենբուրգը թուրքական հորդաներին դիմադրող ազգային զորամիավորումներն անվանում էր «հայկական հրոսակախմբեր»: Նա գրում է. «Հայաստանում դեռեւս մինչեւ ձմեռվա վերջը հարձակում է սկսվում այնտեղ գործող ռուսական բանակի դեմ: Ռուսական ուժը այստեղ խաբռակիկ էր: Թուրքերի ար-

Պարսկաստանում տարբեր ցեղախմբերի հետ, իսկ Բաքվում եւ նրա շրջակայքում՝ հայկական ազգային զորամիավորումների հետ:

Եվ այսպես.

Հեղափոխական իդեալին [«մենք գալիս ենք Թուրքիայից՝ միացնելու մեզ հետ Ադրբեջանի թաթարին, սարթերին, աղվաններին եւ ստեղծելու մի նոր եւ մեծ պետություն, որից պիտի սարսի ամբողջ աշխարհը, սա երազ չէ, այլ իրականություն»] եւ անսալով Մեծ եղբոր հորդոր-խրատներին, թուրքերը հոկտեմբերի վերջերին պաշարեցին Բաքուն, օգոստոսի սկզբներին՝ գրավեցին Նավթահորերի մի մասը: «Ի վերջո,- գրում է Դ. Երգինը,- 1918 թվականի կեսերին (օգոստոսի 4-ին.- Լ. Շ.) Մեծ Բրիտանիան Պարսկաստանով այնտեղ ուղարկեց ոչ մեծ ուժեր: Նրա խնդիրն էր փրկել Բաքուն եւ պաշտպանել նավթը: Անհրաժեշտության դեպքում նրանք պարտավոր էին (ռազմական նախարարության տվյալներով) կրկնել ռուսական նախարարության տվյալներով) կրկնել ռուսական սցենարը «եւ ոչնչացնել Բաքվի արդյունահանող գործարանը, խողովակաշարն ու նավթային ամբարները»: **Մի ամսվա ընթացքում անգլիացիները մնացին Բաքվում եւ դա բավարար եղավ, որ նավթը չհասնի Գերմանիային** (ընդգծումը իմն է.-Լ.Շ.): «Դա լուրջ հարված էր մեզ համար»՝ հարկադրված էր ասելու Լյոնդենդորֆը: Սակայն, անգլիական զորերը հեռացան եւ թուրքական զորերը վերջին հաղթը: Բայց **այն ժամանակ, երբ թուրքական զորերը վերջին Բաքուն, Բաքվի նավթը այլեւ չէր կարող փրկել Գերմանիային** (ընդգծումն իմն է.- Լ. Շ.) (Ергин Д. Добыча. Всемирная история борьбы за нефть, денги и власть, էջ 200): «Անհաջողությունը Բաքվում լրջագույն հարված էր Գերմանիային: 1918 թ. հոկտեմբերին գերմանական բանակը սպառեց իր պաշարները» (նույն տեղը): Հիրավի, իրավացի էր լորդ Քերզոնը, երբ Լոնդոնում, Լանկաստերի տանը, պատերազմից 10 օր անց նավթին նվիրված Դաշնակիցների կոնֆերանսում հայտարարեց. «Դաշնակիցների գործը դեպի հաղթանակ լողաց նավթային ալիքի կատարով»:

Իսկ հարավկովկասյան ժողովուրդների քաղաքական ձգտումները ջրի երես դուրս եկան դեռեւս Բաքուի «գործընթացում». «Վրացիները միաժամանակ գաղտնի բանակցություններ վարելով գերմանացիների հետ Բաքվում՝ գեներալ ֆոն Լոսովի միջոցով եւ Բեռլինում գերմանական կառավարության հետ՝ աղաչվել էին իրենց համար Գերմանիայի հովանավորությունը եւ Վրաստանի սահմանների անձեռնմխելիությունը թուրքական ներխուժման դեպքում» (Խատիսյան Ալ. Բաքուի դաշնագիրը, 1918 թ. 4 հունիսի.- «Մայիսի 28», Փարիզ, 1926, էջ 37): Բաքվում (1918 թ. մայիսի 25) վրացական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ Նոյ Ժորդանիան Ալ., Խատիսյանի այն հարցին, թե «Ազնվությո՞ւն է նոպաստել Կովկասի կազմալուծման, երբ հայերը մենակ կռիվ են մղում ընդհանուր թշնամու դեմ», վրացի այս «թավադը» վրացական «վեհանձնությամբ» եւ բյուզանդական նենգությամբ կարճ է կտրում. «Ազնիվ է այն, որ օգնակար է իմ ժողովրդին», (նույն տեղը, էջ 39): Ուշադիր լինենք. «Անդրկովկասում ապրող ժողովուրդներից,- ընդհանրացնում է հայոց ազգային կռվի տաղանդավոր ղեկավարներից Ա. Գյուլխանդանյանը,- վրացիները, որ առաջ կռվում էին տաճիկների դեմ, մեծ ճարկությամբ աստիճանաբար սկսեցին փոխել իրենց դիրքը եւ կռվող կողմից դարձան չեզոք կողմ՝ միաժամանակ ցույց տալով մեծ համակրանք եւ բարեկամություն դեպի Անդրկովկասի թաթարները» (Գյուլխանդանյան Ա., Բաքվի հերոսամարտը, «Հայրենիք», 1941, թիվ 11-12, էջ 84): Եվ անկախության հերոսական ու նույնքան ողբերգական տարիներին վրաց «թավադների» այս դասը թրամեցությունից ու թուրք-ադրբեջանցիների հանդեպ ծառայամտությունից այն կողմ չանցավ եւ որեւէ այլ վարագիծ չդարետրեց, չհիշելով ոչ թմբկահարվող եվրոպականության եւ ոչ էլ, մասնավորաբար, «ուղղափառ» քրիստոնեության մասին (Տե՛ս նաեւ Чалхуян Гр. Красная книга. Ростов на Дону, 1919, էջ 145-146, 162-171): Իսկ Ադրբեջանի էթնիկ թուրքերը պաշտոնական ու անպաշտոն բանակցություններով թուրքերին հրավիրում էին Անդրկովկաս եւ առաջարկում գրավել Ադրբեջանը: Ուստի եւ «Հայերը մնում էին բառիս բուն նշանակությամբ մենակ՝ երես-երեսի թուրքերի հետ» (Խատիսյան Ալ., Բաքուի դաշնագիրը, էջ 38): Կամ՝ «Կովկասյան մահմեդականներն ակնհայտնի կերպով թուրքերի կողմն էին եւ համակրանքով էին նայում նրանց հաջողություններին եւ հառաջխաղացումին: Վրացիները դժկամությամբ էին ընդունում պատերազմը եւ պատերազմական գործողություններից մի շաբաթ հետո արդեն տենչում էին հաշտություն: Հայերը մնացել էին մենակ՝ շրջապատված թշնամիներով, եւ հուսահատական ու անվեհեր կռիվ էին մղում թուրքերի դեմ» (նույն տեղը, էջ 36):

Թուրքական դիրքորոշումը, իր հերթին, ցցում կերպով դրսեւորվեց մայիսի 22-ին, Բաքուում,

այնտեղ ժամանած հայոց դահիճներից Զեմալ փաշայի վարագծում: «Թաթարների հետ,- փոխանցում է օրվա մթնոլորտը Ալ. Խատիսյանը,- նա խոսեց շատ, սրտագին կերպով: Վրացիների հետ՝ բավականին ջերմությամբ: Հայերի հետ՝ շատ չոր ու պաղ» (նույն տեղը, էջ 381): Այս իրականության մեջ, բնականաբար, հայ զինվորին մնում էր ռազմի դաշտում ցույց տալ իր «ուժն ու տոկունությունը»: Եվ նա, հիրավի, ցույց տվեց իր «ուժն ու տոկունությունը» ոչ միայն Երզնկայից մինչեւ Բաքու (12. II. 1918- 15. IX. 1918 թ.), ուտիղ 214 օր («Եվ միայն սեպտեմբերի 16-ին, կեսօրից հետո, այն էլ մեծ ընդհարումներից հետո ճակատներում ուշացած ու մնացած մեր փոքր զորամասերի հետ, թուրքերը մտնում են քաղաք»՝ Մելիք-Յոլչյան Ս., Բաքվի հերոսամարտը, «Հայրենիք», 1925, սեպտեմբեր, էջ 69), այլեւ Բաքվի անկումից հետո՝ մինչեւ նոյեմբերի 7, Մուդրոսի զինադադարից 7 օր անց Պետրովսկի (Մախաչկալայի.- Լ. Շ.) տակ, երբ հայ-թուրքական սերը նորից խաչաձեւվեցին, երբ թուրքական զորերը Բաքվի անվտանգությունն ապահովելու եւ Հյուսիսային Կովկասը նվաճելու համար փորձեցին միանալ Կովկասի լեռնականներին...

... Որպես ուտիղ հետեւանք Բրեստ-Լիտովսկի դավաճանության, Բաքուի խորհրդաժողովում, համաձայն գեներալ ֆոն Լոսովի Բեռլին ուղարկած զեկուցագրի, «թուրքական հայացքներն ոտղվեցին դեպի Բաքու եւ Վլադիկավկազ, ամբողջ Կովկասի նվաճում» (Muhlmann C. Dasdeutsch Turkische Waffenbundnis, էջ 199):

Հայ զինվորի «ուժն ու տոկունությունն» էլ հենց թաղեց թուրանական այս մղումը:

Դաժան ու անգիջում կռվի ընդհանուր մթնոլորտը, այսպես է ներկայացնում ականատեսմասնակիցը. թշնամին «նորանոր թարմ ուժեր էր ստանում թե՛ շրջակա հարյուր հազարավոր թաթար ազգաբնակչությունից, եւ թե Գալիպոլից, որի զորամասերը անդադար թափվում էին Բաքվի պատերի տակ՝ վերջնականապես ջախջախելու համար հայերի դիմադրությունը եւ խլելու այն նավթի քաղաքը, որը մեծ եւ ճակատագրական դեր էր կատարում ընդհանուր պատերազմի բախտի վրա» (Գյուլխանդանյան Ա., Օգոստոսի հինգը. մի էջ Բաքվի հերոսամարտից.- «Վէմ», 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 116): Կամ՝ «Կես գիշեր էր (հուլիսի 30-ը.- Լ. Շ.): Բոլորը, սվիններ ձեռներին, իրենց դիրքում են եւ, կարծես, զգում են, որ մոտենում է վճռական ժամը: Դիմացը կանգնած է թշնամու խան հազարանոց բանակը, սպառնական գվարդիան, Գալիպոլիում 200 հազար անգլիացիների դեմ հաղթություն տարած դիվիզիաները, գլխավորությամբ Նոտի փաշայի եւ գերմանական ու տաճկական ականավոր զորավարների ու սպաների» (Մելիք-Յոլչյան Ս. Բաքվի հերոսամարտը.- «Հայրենիք», 1925, հուլիսի էջ 71):

Մի դրվագ էլ Բաքվի «հայկական էպոպեայից»՝ օգոստոսի 4-ի Սալյանի զորանոցների մոտ տեղի ունեցած մարտից եւ պատմության մեջ հազվագյուտ հանդիպող զինվորի դյուզացնական նկարագրից, մարմնացումը անցյալի ականջ նկարագրից, մարմնացումը անցյալի առասպելական (հայ) կերպարների. «Ռոմբերը պայթում են մերոնց գլխին, փչացնում են թնդանոթները, սպանում եւ վիրավորում մեր ռաանոթները (թնդանոթաձիգ- Լ. Շ.) շատերին, որոնց ներից

Վերլուծական

Ինչ կը սպասեն Ամերիկան եւ

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Ամէն անգամ, որ կը կայանան Ամերիկայի նախագահական ընտրութիւնները, ամբողջ աշխարհի քաղաքական շրջանակները, իրենց շունչը բռնած, կը հետեւին անոնց զարգացումներուն եւ արդիւնքին: Այս տարուան նոյեմբեր 4-ի ընտրութիւնը շատ աւելի սրեց աշխարհի բոլոր երկիրներուն հետաքրքրութիւնները, որովհետեւ Ամերիկան, իր քաղաքական, տնտեսական եւ մասնաւորապէս՝ ռազմական հզօրութեամբ անոպայմանօրէն իր հակակշիռը ունի բոլոր երկիրներուն վրայ, առաւել կամ նուազ չափով:

Անցնող ութ տարիներու Բուշ-Չէյնի զոյգին քաղաքականութիւնը այնքիսի վատթար ժառանգութիւն մը թողուց աշխարհին, որ ան պատրաստ էր որեւէ այլընտրանք սիրով ողջունելու, առաւել եւս Բարաք Օբամայի ընտրութիւնը, որ նախագահ Քենեդին յիշեցնող իտէալապաշտութեամբ մը կը յայտնուէր: Նոյնպէս, Բուշ-Չէյնիի յառաջացուցած դառնութիւնը եկաւ աւելի եւս իտէալացնելու Օբաման:

Մաքիավելլին իր «Իշխանը» գիրքին մէջ կը յայտնէ այն սկզբունքը, թէ ոեւէ իշխանատր պէտք է ղեկավարէ՝ պարտադրելով վախ եւ յարգանք, սակայն երկրորդի բացակայութեան՝ պէտք է անպայման տիրէ առաջինով, այսինքն՝ վախը: Ամերիկա, իր հիմնադրութենէն ի վեր յոյս կարտայտէր դէպի արտաքին աշխարհը, սակայն վերջին ութ տարիներու իշխանատրները մոռցան երկրի հիմնադիր հայրերու սկզբունքները եւ տարածեցին միայն սարսափ ու վախ. վախ՝ Ամերիկայի մէջ եւ վախ՝ Ամերիկայէն դուրս, աշխարհի տարածքին:

Ընտրեալ նախագահ Բարաք Օբամա ոչ միայն յուսավառութիւն յառաջացուց Ամերիկայի մէջ, այլ խելահեղ ընդունելութեանց արժանացաւ Եւրոպայի մէջ եւ անոր սահմաններէն անդին:

Հիմա որ ընտրաշրջանի ճառախօսութիւնները լռած են, ոգեւորութիւնը՝ հանդարտած, պիտի հասնի իրապաշտութեան ժամանակը, երբ նոր նախագահը յառաջիկայ յունուար 20-ին բազմի Սպիտակ տան մէջ: Այդ պահուն Ուաշինկթընի քաղաքականութեան մէջ պիտի բարեխառնուին Օբամայի ազնուական իտէալապաշտութիւնն ու Մաքիավելլիի դառն իրապաշտութիւնը: Որովհետեւ հրեշակային բնաւորութեամբ եւ խառնուածքով նախագահ մը չի կրնար կառավարել այս հզօրագոյն երկիրը՝ չարիքներով լի այս աշխարհին մէջ:

Հետզհետէ կարգ մը երկիրներու իշխող շրջանակները պիտի ըլլան պատրանաթափ, ուրիշներ՝ պիտի դառնան յուսախաբ, երբ գործադրութեան դրուի ռէալփոլիթիքը:

Բուշի իշխանութիւնը այնքիսի ահաւոր ժառանգութիւն մը կը թողու իր ետին, որ Օբաման իր ընտրութեան յաղթական ճառին մէջ պարտաւորուեցաւ զգուշացնելու Ամերիկայի ժողովուրդը, թէ կացութիւնը կարելի պիտի չըլլայ սրբագրել մէկ տարիէն. աւելին՝ ան զգուշացուց, որ իր իշխանութեան չորս տարիներն անգամ կրնան բաւարար չըլլալ երկիրը բարգաւաճման ճամբուն մէջ դնելու:

Օբամայի ընտրութենէն վերջ աւելի վատթարացաւ Ամերիկայի տնտեսական վիճակը, բարելաման յոյսերը այս պահուն կը մնան խաթարուած: Սպիտակ տունը, կոնգրէսն ու երկու կուսակցութիւնները իրար գալով 700 միլիարդ դոլարի գումար մը հուէարկեցին դարմանելու համար տնտեսական վիճակը: Դեմոկրաս կուսակցութիւնը աւելի հաւասալի եւ հասկնալի տնտեսական քաղաքականութիւն մը քարոզեց եւ ատով յաջողեցաւ համոզել ընտրողները: Իր ընտրաշրջանին մէջ Օբաման կամբասանէր Բուշի վարչակարգը, որ ընդդիմացած էր կիրարկել պետական հակակշիռը դրամատուներու եւ Ուոլ Սթրիթի վրայ՝ յառաջացնելով ներկայ տնտեսական աղէտը: Օբաման առաջին հանդիպումին իսկ առաջարկած է նախագահ Բուշին յաւելուածական գումար մը յատկացնել գործազուրկներու աշխատավարձը շարունակելու, սակայն նախագահ Բուշ կ'ընդդիմանայ այդ առաջարկին: Ամերիկայի գործազուրկներու տոկոսը բարձրացած է 6-5 %-ի: Տակաւին նախագահ Բուշ իր դիմաց ունի երկու ամիս իր յամառ քաղաքականութիւնը կիրարկելու եւ աւելի վնասներ պատճառելու երկրին:

Ֆինանսական այս ծանր պայմաններուն տակ Ամերիկա, իր քայքայուած տնտեսութենէն ամսական 10 միլիարդ տոլար կը ղրկէ իրաքեան փուչ պատերազմը շարունակելու: Ընտրաշրջանի ընթացքին կայացած հարցախոյզներէն պարզուած է, թէ ընտրող հասարակութեան 70 տոկոսին համար առաջնահերթ մտահոգութիւնը տնտեսական վիճակն է: Միայն բնակչութեան 10% ը առաջնային մտահոգութիւն սեպած է իրաքեան պատերազմը: Այս վերջին տարօրինակութիւնը կարելի է վերագրել Ամերիկայի զանգուածային լրատուութեան միջոցներուն, որոնք պատերազմի իրողութիւնները թաքցնելով հանրային կարծիք կը յառաջացնեն:

Տնտեսական տագնապն ու գործազրկութիւնը դարձած են Ամերիկայի ժողովուրդին մղձաւանջը: Ամերիկայի մէջ ստեղծուած տնտեսական այդ բարդ կացութիւնը իր անդրադարձը ունեցած է նաեւ աշխարհի տարբեր երկիրներուն վրայ: Այս կացութեան մէջ միակ օգտուողը քարիւղի ընկերութիւններն են – Էքսոն-Մոբիլ, Շէլ, Բրիթիշ Փեթրոլիում – միլիառատր դոլարներու շահոյթ կ'արձանագրեն: Այս բոլորը Բուշի ընտանիքը եւ Դիք Չէյնիի շրջանակը կը ներկայացնեն: Այս վերջնոյն ղեկավարած նախկին ընկերութիւնը՝ Հելի Բըրթըն, Իրաքի մէջ ամերիկեան բանակը մասակարարելով, իր կարգին միլիառատր դոլարներ կը շահի: Մինչդեռ պատերազմին զոհ գացած են 4500 ամերիկացի երիտասարդներ, վիրաւորուած են 30.000 զինուորներ, իսկ զոհուած են անհամար իրաքցի բնակիչներ: (Երկու միլիոն իրաքցի զոհերուն թիւը չափազանցեալ կը համարեն ամերիկեան իշխանութիւնները, սակայն սոյգ թիւ մըն ալ չեն յայտարարեր):

Ներքին քաղաքականութիւն

Ուոլ Սթրիթը եւ հանրապետական շրջանակները ոգի ի բռին պիտի հակառակին նախագահ Օբամայի տնտեսական քաղաքականութեան, որ կը պիտի բարելաւել միջին դասակարգի վիճակը , հարկերը բարձրացնելով (անշարժ գոյքի) կալուածային եւ արժեթուղթային վաճառքի շահոյթներուն վրայ:

Նախագահ Օբաման խոստացած է նաեւ 16 ամիսէն դուրս բերել ամերիկեան բանակը Իրաքէն: Վերջին շրջանին Բուշի, Չէյնիի եւ Մըկքէյնի ջատագոված «յաջողութիւն»ները Իրաքի մէջ խաբուսիկ են եւ գործածուեցան միայն հանրապետականներու ընտրաշրջանի օգտին: Հակառակ այդ իրողութեան, Օբաման եւ դեմոկրաս շրջանակները խուսափեցան բացայայտումներ ընելէ: Միայն, անկախ թեկնածու Ռալֆ Նէյդըրն է, որ պարզեց իրականութիւնը, յայտնելով որ այդ «յաջողութիւնը» (անգլերէնով՝ surge) միայն ժամանակատր է եւ իրականացած է Սադդամ Հիւսէյնի պատկանած սիւննի ցեղապետերուն տրուած առաս կաշառքներով: Ամերիկեան բանակը չէ յաջողած ընկճել սիւննիներու այդ ընդդիմութիւնը զինուժով եւ դիմած է կաշառքի:

Ինչպէս ընտրաշրջանին պարզուեցաւ՝ նախագահ Օբամայի գլխաւոր մարտահրաւէրները Ամերիկայի մէջ տնտեսական տագնապն ու իրաքեան պատերազմն էին: Օբաման եւ դեմոկրատներ շեշտը դրին Աֆղանիստանի վրայ: Օբաման կը ծրագրէ Իրաքէն հեռացուող ամերիկեան զօրաբաժինները փոխադրել Աֆղանիստան, հետապնդելու համար Օսամա բեն Լադենը. ամերիկացի ժողովուրդին համար առղարացի թիրախ մը: Սակայն ոչ անգլիական կայսրութիւնը եւ ոչ ալ սովեսական ներխուժումը կրցան Աֆղանիստանը առնել իրենց ամբողջական տիրապետութեան տակ: Վերջերս Աֆղանիստանի մէջ գործող անգլիական զօրաբաժնին հրամանատարը յայտարարեց, թէ ռազմական լուծում մը անկարելի է այդ երկրին մէջ, որովհետեւ թալիբանները վերակազմակերպուած են եւ անպատիժ կը գործեն երկրին կարգ մը գաւառներուն մէջ: Նոյնիսկ հաբսբուրգեան գաղտնի բանակցութեանց մէջ անոնք կ'առաջարկեն հեռացնել «ամերիկեան խամաճիկ» Համիդ Քարզայը, որեւէ լուրջ խօսակցութիւն ձեռնարկելէ առաջ:

Այնպէս կը թուի, թէ նախագահ Օբամայի արտաքին քաղաքականութեան վրիպանքը պիտի ըլլայ Աֆղանիստանը, եթէ աւելի պատուատր ելք մը չգտնէ ան այդ պատերազմէն:

Այս տարուան ընտրութեանց ընթացքին հակաբուբ տրամադրութիւնները այնքան զօրեղ էին, որ քեցին-տարին նաեւ կարգ մը արժանատր հանրապետական ծերակուտականներ ու կոնգրէսականներ, որոնց կարգին նաեւ Միչիգընի նահանգէն հանրապետական կոնգրէսական Նոլեմպերգը, որ հայկական շահերու համախմբումին (lobby) համանախագահն էր, դեմոկրաս կոնգրէսական Ֆրենկ Փալոնի հետ:

Միւս կողմէ, սակայն, Ծերակոյտի եւ կոնգրէսի դեմոկրաս մեծամասնութիւնները պիտի դիտացնեն նոր նախագահին քաղաքական ծրագիրները: Առ այսօր 57 դեմոկրատներ ընտրուած են Ծերակոյտի մէջ եւ դեռ երեք աթոռներ ալ կը մնան վիճելի: Այդ երեք աթոռներու հարցին լուծումէն ետք շատ հաւանական է, որ դեմոկրաս ծերակուտականներու թիւը բարձրանայ 50-ի: Ամերիկայի մէջ քաղաքական կառոյցը շատ յստակ բաժանումներ ունի եւ ուժի օղակները կը գործեն հաւասարապէս՝ հակակշռելով իրար: Նախագահի գործադիր իշխանութեան եւ Կոնգրէսի օրէնսդիր իշխանութեան միջեւ իր կշիռը ունի Գերագոյն ատեանը, որ Բուշի իշխանութեան օրերուն թեքուեցաւ դէպի աջ՝ պահպանողական դատաւորներու յաւելումով: Եւ այսպէս, Բուշի վարչակազմը ինչ ապօրինութիւն կամ օրինական կազմը ինչ գործեց՝ Գերագոյն ատեանը, օրէնքով որ ալ գործեց՝ Գերագոյն ատեանը, արէնքները մեկնաբանելու իր պաշտօնով, արդարացուց զանոնք: Ամէնէն խնդրայարոյց խնդիրը կալանատներու կցանքները մեկնաբանելու վէճն էր, որովհետեւ Բուշի իշխանութիւնը, հակասելով Ամերիկայի հիմնադիր հայրերու սկզբունքները, բաստարկեալներու տանջանքներու նոր մեթոդներ սկսած էր կիրարկել:

Գերագոյն ատեանի կարգ մը դատաւորներ արդէն թոշակի պիտի անցնին այս շրջանին եւ նախագահ Օբաման առիթը պիտի ունենայ Ատեանը հաւասարակշռող նոր դատաւորներ նշանակելու:

Ընտրազանգուած

Տակաւին երկար ժամանակ վերլուծաբաններ պիտի մեկնաբանեն նախագահական թէ կոնգրէսական ընտրութեանց ընթացքն ու արդիւնքները: Կը բաւէ ընդգծել, որ Օբամայի յայտնութիւնն ու թեկնածութիւնը լաւատեսութեան եւ իտէալապաշտութեան ալիք մը ստեղծեցին, մեծ մասամբ յաղթահարելով ցեղապաշտական նախապաշարմունքները:

Սեւամորթ ընտրողները բացարձակ մեծամասնութեամբ քուէարկեցին Օբամային: Անցեալին սեւամորթ ընտրողները ընդհանրապէս հետաքրքրութեան պակաս մը ցուցաբերած էին ընտրութեանց նկատմամբ: Այս անգամ բացառիկ աշխուժութիւն մը ցոյց տուին՝ սեւամորթ թեկնածուին նկատմամբ:

Հետաքրքրական էր նաեւ սպանախօս համայնքներու վերաբերումը. աւանդականօրէն 37 միլիոն հաշուող սպանախօս գաղութը աւելի կը միտէր դէպի Հանրապետական կուսակցութիւնը: Այս անգամ կ'ըսուի, թէ 12 միլիոն սպանախօս քուէարկողներուն մեծամասնութիւնը յարած է Օբամայի եւ դեմոկրատներու կողմը: Այստեղ երկու կարեւոր ազդակներ կարող են իրենց դերը կատարած ըլլալ, բացի տնտեսական մտահոգութիւններէն.-

ա) Ամերիկայի մէջ գոյութիւն ունին 11 միլիոն ապօրինի գաղթականներ, որոնց մեծամասնութիւնը սպանախօս է: Օբաման կը խոստանայ նոր օրէնքներ ներմուծելով օրինականացնել այդ գաղթականներուն կարգավիճակը:

բ) Երկրորդ ազդակը Կուբայի նկատմամբ սպանախօս համայնքին վերաբերումն էր: Կուբայի փախստականներուն մեծամասնութիւնը հաստատուած է Ֆլորիդա նահանգին մէջ: Կուբացի փախստականներու առաջին սերունդը, որուն կալուածները գրաւուած էին Ֆիդել Կաստրոյի կողմէ, պատրաստ էր կոյրզկուրայն քուէարկելու այն թեկնածուին, որ կը խոստանար ամէնէն բիրտ քաղաքականութիւնը որդեգրել Կաստրոյի վարչակարգին նկատմամբ: Անցեալին այդ տրամադրութիւններէն առաւելագոյնս օգտուողները եղան հանրապետականները: Նախագահ Բուշ աւելի եւս սեղմեց քաղաքական եւ տնտեսական օղակը Կուբա կղզիին շուրջ՝ օգտուելով այդ հոսանքէն: Սակայն, Կուբայի գաղթականներու երրորդ սերունդը աւելի մեղմացած տրամադրութիւններ կը դրսեւորէ այդ ուղղութեամբ: Մանաւանդ որ այս անգամ նախկին նախագահ Բիլ Քլինթըն երկիցս ընտրական ելոյթ ունեցաւ՝ խախտելով հանրապետական խարիսխները Ֆլորիդայի մէջ:

Ինչպէս ամերիկացի ժողովուրդը՝ նոյնպէս աշխարհի տարբեր երկիրներու ժողովուրդները մեծ յոյսեր կապած են նախագահ Օբամայի ընտրութեան հետ: Թէ ինչպէս պիտի դիմագրաւէ ան արտաքին քաղաքականութեան մարտահրաւէրները՝ պիտի պարզուին այն նշանակումներէն զոր ինք պիտի կատարէ Սպիտակ տան անձնակազմին ու նախարարական դահլիճին մէջ:

Չախող նշանակում մը

Առաջին նշանակումներէն կը պարզուի որ նախագահ Օբաման ծրագրած է նախագահ Քլինթընի յաջողութեան սատարող տարրերը համախմբել իր շուրջ: Տնտեսագէտ Ռոբըրթ Ռայի արդէն անցած է գործի. փոխանցման խումբի պետ նշանակուած է Քլինթընի քաղաքական խորհրդականներէն Փոտեսթա: Սակայն, ամէնէն վիճայարոյց նշանակումը եղաւ առաջինը՝ յանձին Ռահմ Էմանուէլի, որ նոյնպէս Քլինթընի կազմին ամէնէն փայլուն աստղերէն մէկն էր, որ կարճ ժամանակ մը դարձեալ մեղմացաւ դիրքերը: Էմանուէլ ծնած է Իսրայէլի մէջ՝ հայրը հիւանդանոցի բժիշկ մը եղած է Իրգունի ատենաշրջանին: Էմանուէլ ունեցաւ զինուորական պատրաստութիւն եւ ծառայեցաւ Իսրայէլի զինուորական ուժերուն մէջ: Ինչպէս ամերիկացի ժողովուրդը՝ նոյնպէս աշխարհի տարբեր երկիրներու ժողովուրդները մեծ յոյսեր կապած են նախագահ Օբամայի ընտրութեան հետ: Թէ ինչպէս պիտի դիմագրաւէ ան արտաքին քաղաքականութեան մարտահրաւէրները՝ պիտի պարզուին այն նշանակումներէն զոր ինք պիտի կատարէ Սպիտակ տան անձնակազմին ու նախարարական դահլիճին մէջ:

Էմանուէլի նշանակումը այդ պաշտօնին կը նշանակէ երկու բան. ա) շատ հաւանաբար Օբաման նման յանձնառութեան մը տակ մտած էր հրէական քաղաքական շրջանակներուն հետ: Այլապէս անկարելի էր, որ Ֆլորիդայի քո-

Խմբագրական

Աշխարհը Օբամայի ընտրութենէն

Նախառու հրեաներու զանգուածը ֆուէարկէր Օբամային, մանաւանդ որ աջակողմեան շրջանակները փորձեցին Օբաման «իսլամացնել» եւ արաբ տեռորիստներու համակիր ցոյց տալ: Ամերիկայի մէջ նման ամբաստանութիւնները, որոնք ալ անհիմն ըլլան, անոյշման կը տարալեն թեկնածուն, սակայն Օբաման յաջողեցաւ ջուրին երեսը մնալ: բ) Այդ նշանակումը ազդանշան մըն է արաբական աշխարհին, թէ նոր իշխանութեան տարիներուն Իսրայէլ-Պաղեստին հարցին մէջ մեծ տարբերութիւններ պիտի չյայտնուին, եւ եթէ յայտնուին՝ այդ հանգոյցը պիտի լուծուի ի նպաստ Իսրայէլի, մանաւանդ եթէ Իսրայէլի յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններէն հաղթող դուրս գայ ծայրայեղ աջակողմեան Բենիամին Նաթանեահուն: Այս վերջինին սկզբունքային կեցուածքն է ամբողջ պաղեստինցի ժողովուրդը իսել սահմանէն անդին եւ այդպէս «լուծել» այդ գորդեան հանգոյցը:

Ռահմ Էմանուէլի կենսագրութենէն կը պարզուի, որ ան որդին է Բենիամին Էմանուէլի, նախկին անդամ մը սիոնիստական «Իրգուն» տեռորիստական խմբակին, որ 1930-ական թուականներուն կը կռուէր անգլիական դաշնութեան դէմ: Իսկ որդի Էմանուէլը, որ ծնած է Չիկագօ, մինչեւ 18 տարիքը պահած է իր զոյգ քաղաքացիութիւնները՝ իսրայէլեան եւ ամերիկեան: Ան նաեւ որպէս կամաւոր ծառայած է իսրայէլեան բանակին մէջ, Արաբական ծոցի առաջին պատերազմի (1991) ընթացքին: Անոր կենսագրութեան մէջ արձանագրուած է նաեւ, թէ ան մարզուած է Իսրայէլի Մոսադի շարքերուն մէջ: Այս նշանակումը իսրայէլեան «Մաարիվ» թերթին կողմէ ողջունուած է իբրեւ «Մեր մարդը Սպիտակ տան մէջ»: Միեւնոյն թերթը նաեւ մէջբերում կատարած է անոր հորմէն, որ ըսած է. «Բացայայտ է, որ ան իր ազդեցութիւնը պիտի բանեցնէ նախագահին վրայ, որ Իսրայէլի ի նպաստ կողմնորոշուի: Ինչո՞ւ չընէ՝ ինչ է, ինք արա՞բ է որ Սպիտակ տուն մտնելով սալայատակը սրբէ...»:

Հանրապետականները իրենց կարգին ճնշադատած են եղած նշանակումը: Հանրապետական կուսակցութեան խօսնակ Ալեխ Քոնանթ յայտարարած է.- «Բարաք Օբամայի առաջին նշանակումը կ՚ականատեսէ իր խոստումը՝ բաժանումը դարմանելու»:

Իսկ արաբական շրջանակները արդէն այդ նշանակումը մեկնաբանած են իբրեւ հակում դէպի Իսրայէլ:

Գալով Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցին՝ Ռահմ Էմանուէլի դիրքը իբրեւ կոնգրէսական շատ յայտնի է. ան միշտ դէմ քուէարկած է հայկական ցեղասպանութեան բանաձեւին, այս հարցին մէջ ցոլացնելով Իսրայէլի պաշտօնական քաղաքականութիւնը:

Կը մնայ յուսալ, որ ընտրեալ նախագահը շարունակէ կիրարկել իր սկզբունքային ու բարոյական քաղաքականութիւնը՝ տրը կանգնելով իր նախընտրական պաշտօնական յայտարարութեան:

Այլապէս, պիտի ըսենք, հայութիւնը վարժուած է յուսախաբութեանց եւ այդ յուսախաբութեամբ ալ Հայոց ցեղասպանութեան ճանաչումին մասին Օբամա-Բայդըն խումբին յայտարարութիւնը պիտի դասենք նախագահ Բուշի անկասար խոստումի կողքին:

Արտաքին քաղաքականութեան մարտահրաւէրներ

Ամերիկան իր աշխարհակալական հզօրութեամբ պարտատոր է ուրոյն, որոշ եւ բանաձեւած քաղաքականութիւն մշակել՝ տարբեր աշխարհամասերու եւ երկիրներու նկատմամբ:

Սկսելով իր անմիջական հարեւաններէն՝ Կանադան շուրջ մը նման կը հետեւի Ամերիկայի, ամէն մարզի մէջ: Մեխիկան ունի աւելի բարդ յարաբերութիւններ Ամերիկայի հետ, մասնաւորաբար աղօրինի գաղթականներու եւ թմրանիւթերու մախանենգութեան պատճառով: Սակայն Ուաշինկթըն երկու երկիրներուն հետ ալ կնքած է տնտեսական պայմանագիր մը NAFTA (Հիւսիսային Ամերիկայի ազատ առեւտուրի դաշնագիր): Նախագահ Բուշի իշխանութեան շրջանին Ամերիկա յաջողեցաւ երկու բուռաստր ղեկավարներ ընտրել տալ այդ երկիրներուն մէջ՝ Սթիվըն Հարփըր՝ Քանադա, Ֆելիփէ Քալդերոնը՝ Մեխիկա:

Դեմոկրատ կուսակցութիւնը միշտ ընդդիմացած է NAFTA-ի սկզբունքներուն, որոնք ամերիկացի աշխատաւորին գործը կը ղրկեն սահմանէն անդին, սատարելով Ամերիկայի շինարարութեան ածին:

Պարզ է թէ այդ պայմանագրին մէջ նոր փոփոխութիւններ ներմուծուին, նոյնիսկ եթէ չջնջուի ան ամբողջութեամբ:

Կուբայի հանդէպ հաւանաբար աւելի մեղմ քաղաքականութիւն մը որդեգրուի, նկատի ունենալով, որ Ֆիդէլ Կաստրօն արդէն իր ողջութեան անցած է պատմութեան, Ֆլորիդայի կուբացիներու նոր սերունդը չունի նախորդ սերունդին կոյր ատելութիւնը. իսկ ամէնէն կարեւորը՝ Կուբա բարեկամական կամուրջներ հաստատած է Հարաւային Ամերիկայի բազմաթիւ երկիրներու հետ, իսկ վերջերս ալ Եւրոպական Միութիւնը, հակադրուելով Ամերիկայի՝ վերջ տուած է Կուբայի տնտեսական շրջափակման:

Հարաւային Ամերիկան այսօր բոլորովին նոր պատկեր մը կը ներկայացնէ եւ այդ աշխարհամասի երկիրները իրարու հանդէպ աւելի համակամութիւն ու զօրակցութիւն ցոյց կուտան, խրատուած ըլլալով զինուորական պետական հարուածներու ժամանակաշրջանէն: Բոլոր անոնք, որ առիթը ունեցած են տեսնելու CNN-ի կողմէ պատրաստուած եւ հեռաստուած «Ցուրտ պատերազմը» փաստագրական շարքը, պիտի յիշեն, թէ ինչպիսի ահաւոր ոճիրներ գործուած են Հարաւային Ամերիկայի երկիրներուն մէջ Հենրի Քիսինջըր յղացած «Քոնդար» ծրագրով:



Այդ աշխարհամասին մէջ բազմաթիւ երկիրներ սկսած են դէպի ձախ թեքիլ եւ երբեմն ալ՝ մարտահրաւէր կարդալ Ամերիկայի: Այդ պատճառաւ էր, որ Օբամա կը մեղադրէր Բուշի վարչակարգը, որ այնքան տարուած էր Իրաքով, որ մոռացութեան մատնած էր տարբեր աշխարհամասերը, եւ յատկապէս՝ Հարաւային Ամերիկան:

Ամերիկայի հրեայաջորդ վարչակարգերը, նախագահ Քենեդիէն սկսեալ (Բէյ աւ փիգզ) մինչեւ այսօր, չյաջողեցան տարալել Կուբայի համայնավար իշխանութիւնը: Նոյնիսկ Խորհրդային Միութեան փլուզումէն ետ կանգուն մնաց այդ վարչակարգը, իր տնտեսական ծանր պայմաններով հանդերձ: Ան մէկ կողմէ մնաց աչքին փուշը Ուաշինկթընի, սակայն միւս կողմէ՝ իբրեւ յոյսի ջահը Հարաւային Ամերիկայի միւս երկիրներուն: Նախագահ Օբաման բնականաբար դժգոհ պիտի մնայ Հարաւային Ամերիկայի այսօրինակ զարգացումներէն, սակայն դժուար թէ ան վերադառնայ արիւնարբու բռնատէր վերահաստատելու քիսինջերեան քաղաքականութեան, մանաւանդ ինքն է առաջարկողը որ փակուի Գուանթանամոյի կալանավայրը: Հաւանաբար ան չափատրութեան հրափրէ Վենեսուելայի Հիւգօ Չավէզը, որուն քարիւղն արդէն կ՚օգտուի Ամերիկա:

Վերջին տարիներուն շատ հաւանաբար Չավէզի խրախոյսով եւ հաւանաբար՝ օգնութեամբ (ինչպէս պարզուեցաւ Արժանթինի վերջին ընտրութեանց ընթացքին) մէկ առ մէկ ձախակողմեան իշխանութիւններ յառաջացան: Բոլիվիան ընտրեց ամերիկեան հնդիկ Աւօ Մորալէսը, որուն իշխանութիւնը միշտ աջակողմեան հարուստ դասակարգին ընդդիմութեանը կը բախի,իսկ այս վերջինը կը ջանայ բաժանման ենթարկել երկիրը: Էկուադորի մէջ իշխանութեան գլուխ եկաւ նախագահ Ռաֆայէլ Քորեա, խոստանալով տեղահանել ամերիկեան ռազմակայանը, որ իբրեւ թէ հաստատուած է պայքարելու համար Կոլումբիայի թմրանիւթերու մախանենգութեան դէմ, սակայն իրականութեան մէջ ռազմական եւ տնտեսական ներկայութիւն մըն է ան էկուադորի մէջ: Բոլիվիոյ եւ էկուադորի յաջորդեց Պարագուէյը, որ ձախակողմեան եռիսկոպոս մը ընտրեց իբրեւ նախագահ՝ Ֆերնանդօ Լուգօ Մենդես: Բրազիլի մէջ նախագահ Լուլա դա Սիլվա, իսկ Արժանթինի մէջ տիկին Քիչընըր, որ իր ամուսնոյն յաջորդեց իբրեւ նախագահ, ձախ հակուելով մէկտեղ շեշտուած հակաամերիկեան դիրք մը չեն դրսեւորեր: Չիլին, որ վրէժխնդիր ըլլալու ամէն պատճառ ունէր Օգուստօ Փինոչէի սարսափելի բռնատիրութենէն ետ, աւելի հաւասարակշիռ դիրք մը ունի շնորհիւ նախագահ տիկին Միշէլ Փաշըլէի, որուն հայրը սպաննուած է Փինոչէի օրերուն:

Հարաւային Ամերիկայի երկիրները փորձարարի ենթարկեցին իրենց համակամութիւնը երբ Ուաշինկթընի փորձեց զինեալ պետական հարուածով մը տարալել Հիւգօ Չավէզը: Հարաւային Ամերիկայի երկիրներու միութիւնը արտակարգ ժողով մը գումարելով մերժեց ճանչնալ Չավէզը տարալող իշխանութիւնը եւ պարտադրեց որ ան վերահաստատ սահմանադրականօրէն ընտրուած նախագահը:

Եվրոպական շաւիղ եւ Ռուսաստան

Եւրոպան բոլորովին տարբեր պատկեր մը կը ներկայացնէ՝ քաղաքական, տնտեսական եւ ռազմական բնագաւառներէ ներս:

Խորհրդային Միութեան տարալումով եւրոպացիք պահ մը խորհեցան, թէ այլեւս կարիքը պիտի չմնար Հիւսիս-Ատլանտեան ուխտին (ՆԱՏՕ), սակայն Ուաշինկթընն տարբեր ծրագիրներ ունէր, որպէսզի իր մականին ներքեւ պահէր եւրոպական ցամաքամասը: Հետեւաբար ան ոչ միայն չլուծարեց այդ ռազմական ուխտը, այլեւ Արեւելեան Եւրոպայի երկիրները, որոնք մաս կը կազմէին Վարշաւայի ուխտին, ներգրաւեց ՆԱՏՕ-ի մէջ, մէկ կողմէ ցուրտ պատերազմը հասցնելով մինչեւ Ռուսիոյ սահմանը եւ միւս կողմէ հակակշռելով Եւրոպական Միութեան անկախացման փորձերը:

Արդարեւ, երբ խորհրդային կայսրութիւնը տարալեցաւ, Եւրոպական Միութեան ղեկավարները փորձեցին բազմաբեւեռ քաղաքական աշխարհ մը ստեղծել, մասամբ սանձելու Ամերիկայի (յատկապէս հանրապետական) քաղաքականութեան սանձարձակ արկածախնդրութիւնները: Այդ գաղափարը առաջին հերթին յղացումն էր Ֆրանսայի նախկին նախագահ Ժիսքար Դէսթէնի, որ Եւրոպական Միութեան օրէնսգիտական ռահվիրաներէն մէկն էր: Այդ ուղղութիւնն աւելի գործնապէս կիրարկեցին Ժաք Շիրաք եւ Շրէօդր, աւելի ներդաշնակելով Ֆրանսայի եւ Գերմանիոյ քաղաքականութիւնները: Ուաշինկթընն անոնց միութեան հակադրեց Անգլիոյ Թոնի Բլէրը, որ նախագահ Բուշի հլու կամակատարը եղաւ միշտ: Միւս կողմէ Ուաշինկթընն փորձեց սեպի նման Թուրքիան մտցնել Եւրոպական Միութեան մէջ, սակայն որոշ դժուարութիւններու հանդիպեցաւ: Այդ գործը ամբողջացուցին Արեւելեան Եւրոպայի նորանկախ երկիրները, որոնք իրենց տնտեսական թուլութեան պատճառաւ հետեւութեամբ կաշառուեցան Ուաշինկթընէն: Եւրոպական Միութեան ամրապնդման վերջին հարուածը տուին նախագահ Սարկոզին եւ Գերմանիոյ վարչապետուհի Անգելա Մերքէլ, բնականաբար Ուաշինկթընի օրհնութեամբ: Այն ասպիտան, որ Եւրոպական Միութիւնը իր սահմանադրութիւնը փոխելով զայն որակեց պայմանագիր: Այսինքն, թէ որեւէ անդամ երկիր կրնայ միակողմանիօրէն ջնջել իր պայմանագիրը եւ հեռանալ եւրոպական այդ համակարգէն:

Այսօր նախագահ Օբաման իր դիմաց կը գտնէ աւելի ենթակայ Եւրոպա մը, քան իր նախորդները: Այսինքն, Եւրոպա մը՝ որ պատրաստ է ամէն մարզի մէջ գործակցելու Ուաշինկթընի հետ, բացի մասնակցելէ վերջնոյն անտեղի գրգռութիւններուն Մոսկուայի դէմ:

Ռուսաստանը այսօր Ելցինի օրերու խառնարանը չէ: Այնքան ատեն, որ ալիոլամոլ մը կը կառավարէր այդ երկիրը, նախագահ Քլինթընի վարչակարգը թիկունք կը կանգնէր Մոսկուայի, զայն ասմնաթափ ընելու համար՝ տնտեսապէս եւ ռազմականօրէն: Սակայն Պուտին իշխանութեան գալով արմատապէս փոխեց այդ պատկերը: Այսօր թէեւ նախագահի գահուն բազմած է Անդրեյ Մեդվեդեւ, սակայն ոչ ոքի համար գաղտնիք է, որ իշխանութեան լծակները կը գտնուին Պուտինի ձեռքերուն մէջ, դեռ երկար ժամանակ: Տակաւին քանի մը օր առաջ Ռուսաստանի Դուման (խորհրդարանը) ֆուէարկեց նախագահի պաշտօնավարութիւնը բարձրացնել չորսէն վեց տարուան, Պուտինի վերադարձին հեռանկարով:

Մոսկուա իր վճռական քաղաքականութիւնը վերահաստատեց զգաստացուցիչ դաս մը տալով Վրաստանին եւ Կալինինկրադի մէջ հակահրթիռային կայաններ հաստատելու իր որոշումով՝ հակադարձելու համար Չեխիայի եւ Լեհաստանի մէջ Ուաշինկթընի ծրագրած ռազմակայաններուն: Դժբախտաբար նախագահ Օբամայի աւելի համեստախ եւ ներդաշնակ աշխարհ ստեղծելու ցանկութիւնները համարեա ոչնչացան Մոսկուայի մէջ, ընդհակառակն, նախագահ Մեդվեդեւի շնորհատրականը զուգորդուեցաւ հրթիռներու սպառնալիքով: Բան մը, որուն գուցէ արժանի էր Բուշ-Չէյնի ռազմատենչ վարչակարգը, բայց ոչ անոյշման չփորձուած Օբաման:

Արդէն Օբամայի շրջանակին մէջ խոհեմ ձայներ կը լսուին գործակցելու Մոսկուայի հետ, կանխելու համար տարբեր վտանգներ Հիւսիսային Կորէայի եւ Իրանի մէջ: Ի դէպ, նորութիւն ըլլալով, Իրանի նախագահը եւս շնորհաւորեց Օբամայի ընտրութիւնը՝ աւելի խաղաղասիրական պատգամ մը տալով:

Հայկական շաւիղ

Հայերս շահագրգռող ամէնէն կարեւոր հարցը, բնականաբար պիտի ըլլայ Օբամայի ընտրութեան անդրադարձը Կովկասի եւ մասնաւորապէս Հայաստանի նկատմամբ: Այնպէս կը թուի, թէ վերջերս Մոսկուայի մէջ ստորագրուած Մայնդորֆեան հռչակագիրը լռելեայն համաձայնութիւնը կը վայելէ Ամերիկայի եւ Թուրքիոյ: Ռուսիա, Հայաստան եւ Ադրբէյճան իրար գալով ստորագրեցին այդ պայմանագիրը, որուն ամէնէն գլխաւոր իրագործումը այն է, թէ կողմերը զինու ուժի պիտի չդիմեն ղարաբաղեան խնդիրը լուծելու:

Երկրորդ անխօս իրագործումը այն է, թէ Ամերիկա լռելեայն պիտի համակերպի Ռուսիոյ սահմանակից շահերուն եւ զգայնութեանց եւ պիտի խուսափի անտեղի գրգռութիւններէ, որոնց հետեւանքները չի կրնար հակակշռել, ինչպէս պատահեցաւ Վրաստանի պատերազմին առիթով:

Երրորդ եւ անհաճոյ ազդանշանը այն է, որ Ուաշինկթընն, մասնակցելով հանդերձ Մինսկի խումբի աշխատանքներուն, Կովկասի հարցերը դասաւորելու նախաձեռնութիւնը պիտի թողու Մոսկուային: Իսկ այս վերջինը, որ ձեռք հանեց Վրաստանը, պիտի ջանայ թէ Հայաստանը եւ թէ Ադրբէյճանը պահել իր մականին տակ, Երեւանի իշխանութեանց պարտադրելով զիջումներ, զորս Հայաստանի մէջ որեւէ իշխանութիւն կամովին պիտի չընէր:

Հայկական հարցը, բնականաբար, Օբամայի իշխանութեան վերջին մտահոգութիւններէն մէկը պիտի ըլլայ՝ տրուած ըլլալով անոր յարաբերական կշիռը միջազգային քաղաքականութեան մէջ: Սակայն, իր պաշտօնական խոստումը Ցեղասպանութիւնը ճանչնալու, պիտի մնայ անոր բարոյական ջերմաչափը: Հարց է, թէ Ցեղասպանութեան ճանաչման մէջ ո՞ր կողմը պիտի ըլլայ գերակշռողը՝ Օբամայի բարոյականութի՞ւնը, թէ՞ իր անձնակազմի ղեկավար Ռահմ Էմանուէլի իսրայելամէտ քաղաքականութիւնը, որ արդէն բացայայտուած է անցեալին:

Անգամ մը, որ Մոսկուա եւ Ուաշինկթընն modus vivendi մը ստեղծեն Ադրբէյճանի քարիւղային աղբիւրները օգտագործելու, հաւանաբար կարելի կ՚ըլլայ վերահաստատել Freedom Support Act-ի 907 հատուածը, զոր նախագահ Բուշ շարունակաբար բռնաբարեց՝ իրեն տրուած լիազօրութիւնը օգտագործելով:

Հայկական լոբբին հաւանաբար կարենայ կասեցնել եւ սահմանափակել Հայաստանին տրուած տնտեսական օժանդակութեան շարունակական նուազումը եւ հաւասարակշռութիւն մը ստիպել Հայաստանին եւ Ադրբէյճանի տրտող ռազմական օժանդակութեան մէջ:

▼▼▼

Աշխարհը մեծ ակնկալութիւններ ունի նախագահ Օբամայի իշխանութենէն: Անոր բարոյական կեցուածքը, ամերիկեան ժողովուրդին եւ աշխարհին տրուած խոստումները կը մնան բարեյոյս նշաններ: Սակայն, ընդունուած իրողութիւն է, որ ոչ մէկ իշխանատր կրնայ ամբողջութեամբ իրականացնել իր խոստումները, որքան ալ բարեացակամութիւն ունենայ:

Այս պարագային տնտեսական համաշխարհային ճգնաժամը իրար մօտեցուցած է աշխարհի մեծերը՝ խուսափելու համար համաշարաւ աղէտ մը: Եւ այդ համակամութիւնը պիտի նպաստէ Օբամայի վարչակազմի ծրագիրներուն իրագործումին:

Դեսրոյք, ԱՄՆ

Շիրակ. երկրաշարժից 20 տարի անց

Մարզի զարգացման ծրագրերը կյանքի են կոչվում

ԱՆԱՀԻՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ



ՀՀ կառավարության 2008-2012թ.թ. ծրագրում ընդունված հինգ հիմնական գերակայություններից մեկը տարածային համաչափ զարգացումն է:

Նպատակին հասնելու բազմաթիվ ճանապարհներից մեկն էլ ՀՀ կառավարության արտագնա նիստերի կազմակերպումն է:

Արտագնա առաջին նիստը տեղի ունեցավ 2008թ. հունիսի 12-ին, Շիրակի մարզում, որտեղ էլ անդրադարձ արվեց Շիրակի մարզի խնդիրներին:

Ինչ զարգացումներ նախանշվեցին մարզի համար:

Մարզի համար կենսական նշանակության խնդիրներից թերևս ամենաառաջնայինը երկրաշարժի հետևանքով դեռևս անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելն է: Ի հավելումն՝ ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» որոշման, Շիրակի, Լոռու եւ Արագածոտնի մարզերում ստեղծված աշխատանքային խմբերի կողմից կձևավորվեն աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման ցուցակները եւ կներկայացվեն ՀՀ քաղաքաշինության նախարարությանը:

ՀՀ կառավարության արտագնա առաջին նիստում հաստատվեցին նաեւ Շիրակի մարզի առողջապահական համակարգի 2008-2012թ.թ. զարգացման եւ գյուղատնտեսության ոլորտին առնչվող երկու ծրագրեր:

Գյումրին կդառնա տեխնոքաղաք: Աշխատանքներ կտարվեն Գյումրին մարզական կենտրոն դարձնելու ուղղությամբ:

Ինչ ընթացք են ստացել ընդունված ծրագրերը

Շիրակի մարզում երկրաշարժից 20 տարի անց էլ ամենացավոտ հարցերից մեկը անօթևան 4555 ընտանիքների առկայությունն է, որոնցից 4002-ը՝ Գյումրիում, 553-ը՝ մարզի 43 գյուղական համայնքներում:

Առաջիկա երեք տարիներին այդ ընտանիքների համար Գյումրիում կկառուցվի 3000 բնակարան, իսկ բնակարանների գնմամբ բնակարաններով կապահովվեն շուրջ 700 անօթևան ընտանիքներ:

Բնակարանների գնման կապալառու կազմակերպության մրցույթում հաղթած «Գլենդել ՀԻԼԶ» կազմակերպությունը Գյումրիի «Անի» եւ «Մուշ-2» թաղամասերում սկսել է 400 եւ 1900 բնակարաններով բնակելի շենքերի կառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2011 թվականին:

2009 թվականին բնակարանների գնման վկայագրերի միջոցով ֆինանսական աջակցության տրամադրմամբ նախատեսվում է Գյումրիում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած եւս 212, իսկ գյուղական բնակավայրերում՝ 106 ընտանիքների հնարավորություն ընձեռել հոգալու իրենց բնակարանային խնդիրները:

Այս օրերին կկայանա Ախուրյան գյուղում 182 եւ 10 գյուղական այլ բնակավայրերում 226 անօթեւան ընտանիքների համար բնակարանների գնման կապալառու կազմակերպության ընտրության մրցույթը:

Երկու ծրագիր՝ գյուղատնտեսության ոլորտում

1. Հայաստանում, այդ թվում՝ Շիրակի մարզում, ճակնդեղագործության զարգացում,

2. գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական նախագիծ:

Ախուրյանում կառուցվող ճակնդեղի գործարանը նախատեսվում է գործարկել 2009 թվականին: Գործարանը կաշխատի ինչպես տեղական, այնպես էլ ներմուծվող հումով: Ըստ կանխատեսումների, 2012 թվականին Հայաստանի ճակնդեղի ցանքատարածությունների շուրջ 60 տոկոսը բաժին է ընկնելու Շիրակի մարզին: Այդ նպատակով «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի» մասնագետները բարի ճակնդեղի մշակության վերաբերյալ ուսուցողական դասընթացներ են կազմակերպում մարզի 200 ֆերմերների համար:

Իսկ ինչպե՞ս է կյանքի կոչվելու գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական նախագիծը, ի՞նչ է ակնկալվում ծրագրի իրագործումից հետո, ո՞ր գյուղերում է նախագիծը կյանքի կոչվելու:

Կառավարության հաստատած նախագծում նշվում են ագրոպարենային համակարգի հետագա զարգացմանը խոչընդոտող մի շարք գործոններ. բարձր ռիսկայնությունը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, հողաբաժինների մասնատվածությունը եւ այլն:

Ներկայումս առեւտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի բարձր տոկոսադրույքների հետեւանքով բազմաթիվ տնտեսվարողների համար այդ վարկերը գրեթե անմատչելի են:

2008 թվականի ապրիլի դրությամբ բանկերի վարկային ներդրումները գյուղատնտեսությունում կազմել են ընդամենը 20 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 5,5 եւ գյուղատնտեսական ավելացված արժեքի 3 տոկոսը: Տրամադրվող վարկերի տոկոսադրույքը կազմում է միջինը 15 24 տոկոս: Այսինքն՝ պետական հովանավորչական քաղաքականությունն անհրաժեշտություն է:

Փորձնական այս նախագիծն իրականացվում է Շիրակի մարզի Ամրգի եւ Ամասիայի տարածաշրջանների 44 գյուղական համայնքներում: Սուբսիդավորվելու են 2008թ. հունիսի 30 ից մինչեւ 2009 թ. հունիսի 30 ը տրամադրված վարկերի տոկոսադրույքները:

Փորձնական նախագիծը կավարտվի, երբ մարվեն այդ վարկերը:

Շարունակությունը՝ էջ 5

Անդրադարձ 2008-ի «Հայկազեան հայագիտական հանդէս»-ին

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՂԱԼՅԱՆ

«Հայկազեան հայագիտական հանդէսը» լույս է տեսնում 1970 թվականից, Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնի կողմից՝ Գալուստ Կյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ: Հանդեսը հրատարակում է գիտական չափանիշներով հայագիտությանը եւ առհասարակ հայկականության ամենատարբեր ասպարեզներին վերաբերող հնագիտական-պատմագիտական, բանասիրական-ազգագրական, լեզվագիտական, փիլիսոփայական, մշակութային, գիտական, քաղաքական, հասարակական-ընկերային բնույթի հոդվածներ: Հանդեսի էջերում տեղ են գտնում նաեւ հուշագրություններ, վիճակագրական, մատենագրական ցանկեր, տեղեկություններ: Լույս տեսնող հոդվածները հիմնականում հայերեն, անգլերեն, նաեւ ֆրանսերեն, արաբերեն լեզուներով են:

Մեր ձեռքին է «Հայկազեան հայագիտական հանդէսի» 2008-ի 549 էջանոց ծավալուն համարը (հատոր ԻԸ): Համառոտ խմբագրականն անդրադառնում է ժամանակակից հասարակական փոփոխությունների ուղղակի ազդեցություններին լեզվական իրողությունների վրա. լեզուն իբրեւ կենդանի, զգայուն օրգանիզմ անմիջական կրողն է դառնում արտաքին երեւույթների: Արձանագրելով, որ պետականությամբ պաշտպանված հայերենի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, ցավոք, հեռու է սփյուռքահայության համար օրինակելի լինելուց, հանդեսը գրում է. «Հայաստանի մէջ օտարաբանութիւնը իբրեւ բնական երեւոյթ ընկալող մշակոյթ մը գոյացած ըլլալով, վերջին տասնամեակներուն, հոն չդրդեցուեցաւ համադարփակ հայացման հետեւողական եւ միատարր քաղաքականութիւն մը, հակառակ արձանագրուած ազգային զարթօնքին»:

Արեւմտահայերենին նախանձախնդիր սփյուռքի մտավորականության՝ լեզվի պաշտպանությանն ուղղված շարժումը ժամանակին իր դերը կատարեց: Այսօր գրական եւ հասկացողական խոսակցական արեւմտահայերենի նահանջի շրջանում հանդեսի խմբագրակազմը եւ հայագիտական ամբիոնը (պատասխանատու խմբագիր Հայր Անդրանիկ Ծ. վրդ. Կռանյան) ներկայանում է սփյուռքի հեղինակավոր մտավորականներից կազմված համահայկական Կենտրոնի ստեղծման նախաձեռնությամբ, որի համացանցային կայքէջը քերականական, տառադարձային, բառարանային, բառակազմական բաժիններով յուրատեսակ լեզվական ամրոցի դեր կկատարի սփյուռքահայ հասվածների համար:

2008-ի «Հայկազեան» տարեգիրքը բովանդակում է հայ եւ օտար հեղինակների բազմաբնույթ հոդված-ուսումնասիրություններ, գրախոսականներ, ինքնակոմների հրատարակումներ՝ հայերենով եւ անգլերենով: Ներկայացնենք մեր կողմից ուշագրավ նկատված մի քանիը:

Բանասեր-գրականագետ Հենրիկ Բախչինյանի «Հայ օրհներգութեան սկզբնաւորումը» հոդվածը ուսումնասիրություն է հայ ոսկեդարի գրականության մեջ բանաստեղծական արվեստի սկզբնավորման մասին, այն հանդես է եկել որպես եկեղեցական պաշտոնական օրհներգություն, նախապես կոչվել է «կցուրդ», ապա շարական: Հեղինակն անդրադարձել է 4-րդ դարում եկեղեցական ծիսակարգերի ժամանակ աղոթքներ, օրհներգեր, քարոզներ, ավետարանական տեքստեր բովանդակող Պատարագամատույցին, աստվածաշնչյան սաղմոսներին: Բախչինյանը ներկայացնում է կցուրդների (հոգեւոր երգերի) սաղմնավորման եւ զարգացման ուղին, անդրադառնում հայ օրհներգության ժանրային առանձնահատկություններին, տարատեսակներին, մասնավորապես շարականներին՝ կարեւորելով դրանց ազդեցությունը հայ երաժշտա-բանաստեղծական արվեստի հետագա ձեւավորման եւ զարգացման վրա:

«Հայերն Օսմանեան բանակում (ԺԴ դարից մինչեւ 1918)» Անահիտ Ասատյանի հրատարակումը Օսմանյան կայսրության ուժային կառույցներում հայերի ունեցած դերի մասին է: Ներկայացնելով օսմանյան բանակի կազմավորման նախնական ընթացքը, երբ ռազմագերիներից էին հավաքագրվում զորագնդերը, հեղինակը գրում է, որ դրանք նվաճված քրիստոնյա բնակիչներ էին, որոնց հինգից մեկը պարտադիր պիտի հանձնվեր օսմանյան բանակին: Այդ ենիչերիական զորագնդերում հայերի մի քանի սերունդ շարունակել են ծառայել, շատերը ռազմական բարձր դիրքեր են գրավել (ծովակալ Խալիլ փաշա, Այուպեյման փաշա Էրմենի): Առանձին խորագրերով անդրադարձ է արված հայ վարձկաններին, բանակին սպասարկող հայ արհեստավորներին, զինվորական բժիշկներին, հայերի նյութական աջակցությանը:

Արծվի Բախչինյանի հրատարակումը հանգամանալի ներկայացնում է հայ-հարավսլավական առնչությունները՝ միջնադարից սկսած: Դրանց ակունքները գալիս են դեռեւս 10-րդ դարից, որի մասին վկայում են հայերեն վիմագիր արձանագրությունները, ավելի ուշ այս երկրի տարածքում հայտնված հայկական վանքերն ու եկեղեցիները: Հոդվածագիրը ներկայացնում է այդ առնչությունների ուշագրավ դրվագների մանրամասներ, վկայաբերում ժամանակի տարեգրությունը, մատենագիրներին, ճանապարհորդներին: Անդրադարձ է արված նշանավոր հարավսլավահայերին՝ մեզ անծանոթ անունների հրատարակումով: Առանձնակի ուշադրություն է դարձվել մշակութային, գրական, երաժշտական, թատերական կարերին, հիշատակվել դեռեւս 1911-ից սերբ գրականության նմուշների, սերբական դյուցազնավեպից հատվածների՝ Հովհ. Թումանյանի հայերեն թարգմանությունը:

Նազենիկ Սարգսյանը «Սրբոտի Լիսիցեանի կեանքն ու ստեղծագործութիւնը» (1910-20-ականներ) հոդվածում ներկայացնում է տաղանդաշատ հայտնու գործունեության տարբեր շրջանները՝ մոսկովյան ուսումնառության, ապա եւ Թիֆլիսում ռիթմոլաստիկ պարի դպրոցի սկզբնավորման տարիները, սաների՝ ռուսական բեմերում ունեցած հաջողությունները, կազմակերպչական եւ ստեղծագործական ունակությունները, «Հին աստվածներ» դրամայի հենքով օպերային բեմագրի ստեղծման մեջ Լիսիցյանի մասնակցությունը, պարարվեստի գեղագիտական նոր կոնցեպցիան, հայացքները:

Արգենտինայում հայկական կրթական օջախների մասին է Վարդան Մաթեոսյանի հոդվածը: Ամերիկյան հայկական սփյուռքի կրթարանների ընդհանուր ֆոնին նա հանգամանալից ցույց է տալիս արգենտինահայ դպրոցի սկզբնավորման եւ զարգացման ուղին, անդրադառնում հիմնականում Բուենոս Այրեսում եւ Կորդոբայում կենտրոնացած հայկական վարժարաններին, ուսուցման մեթոդներին, աշակերտության թվաքանակին:

Տարեգրքի առավել ուշագրավ հրատարակումներից մեկը Սիրանուշ Գալստյանի «Փաստի որոշակիութիւնը եւ փոխաբերականութիւնը» (Հայկական որոշ ֆիլմերի օրինակով) հրատարակումն է: Հոդվածը ինքնակ է վավերագրական կինոյի լեզուն բացահայտում է մի քանի ֆիլմերի օրինակով (Արա Վահունի՝ «Էլեգիա», Հարություն Խաչատրյան՝ «Պոետի վերադարձը», Ռուբեն Գետոյանց՝ «Բարի հետք»): Հոդվածագիրը ինքնակ է նաեւ վավերագրական եւ խաղարկային ֆիլմերի «փոխհարաբերություններում (Ֆրունզե Դովլաթյան «Բարեւ, ես եմ», Հենրիկ Մալյան «Մենք ենք, մեր սարերը», Հարություն Խաչատրյան «Վերադարձ ավեստյաց երկիր», Վիգեն Չալդրանյան «Տեր ողորմյա», Սերգեյ Իսրայելյան «Պատանդները») փաստի գեղագիտական լուծումները: Փաստի եւ առասպելի, իրականության եւ միֆի, ոգեղենի եւ նյութականի հակադրամիասնությունները դիտարկվում են Սերգեյ Փարաջանովի, Արտավազդ Փելեշյանի կինոմատնողության մեջ, նրանց գեղագիտության տիրույթներում:

Տարեգիրքը բովանդակում է արժեքավոր այլ հրատարակումներ եւս, ինչպես Նարինե Պետրոսյանի «Հայի եւ Հայաստանի պատմափիլիսոփայական ընկալումը Կոստան Զարեանի օրագրերում», Վարդի Քեչիյանի «Պանդխտութեան երգ-երգոց՝ «Կռունկ»-ի անտիպ մեկ օրինակը», Վահրամ Շեմմասյանի «Հայկական Մուսա լեռը 1920-30 ականներում իբրեւ ամառանոց՝ Ալեքսանդրէթի Սանճաքին», նաեւ անգլերենով մի շարք հրատարակումներ՝ Վիկտորիա Ռոու, Մաթիաս Պիորլուքս, Նուրդյա Ռայթ եւ ուրիշներ: ■



Կայմիթ-սար-կրթական ոլորտ

ՆԱԴԵԺԴԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կադրերն են երկրի դեմքը, նրա անցաթուղթը

Ուրախալի է եւ ողջունելի, որ երկրի նորընտիր ղեկավարների՝ նախագահի եւ վարչապետի հասուկ ուշադրությանն արժանացան կրթության եւ գիտության ոլորտները, նրանց հրատապ խնդիրները:

Հուսանք, որ այդ կարեւոր բնագավառներին մեր կառավարությունից ակնկալվող աջակցությունը կխթանի նրանց արդյունավետ գործունեությունը: Ավիճելի է, որ առանց բանիմաց, բարեկիրթ կադրերի ոչ մի երկիր առաջավորների շարքում տեղ գրավելու մասին անգամ երազելու իրավունք չունի: Ցանկացած երկրի պատմության ընթացքում բոլոր ժամանակներում եւ իրավիճակներում նրա ճակատագիրը կադրերն են որոշել, նրանք իրենց վճռական խոսքն են ասել:

Մեր ազգը այս տեսակետից միշտ հպարտանալու իրավունք է ունեցել: Երկրի ամենածանր պահերին անգամ կրթությունն ու գիտությունը առաջնահերթ են համարվել:

Չմոռանանք, որ Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին եւ նրա ավարտից անմիջապես հետո հիմնադրվեցին Գիտությունների ազգային ակադեմիան, Բյուրականի աստղադիտարանը, կառուցվեց Երեւանի պետական համալսարանի նոր շենքը: Նրանց հաջողություններն ու նվաճումները մեր երկրին մեծ ճանաչում են բերել:

Դժբախտաբար այդքան երազած անկախությունը ձեռք բերելուց հետո, շուտափույթ հասարակական նոր կարգին անցնելու գործընթացում, առանց այդ նորի կայացման, հաստատման եւ զարգացման օրինաչափությունների, օրենքների բավարար իմացության մի խումբ ինքնակոչ «հայրենասերներ» ոտղակի առմատախիլ արեցին տարիների ընթացքում մեր ժողովրդի քրտնաջան աշխատանքի շոշափելի արդյունքները, ջնջեցին նրա արժեքավոր ձեռքբերումները, եւ այս ամենից հետո այդ համարձակները փորձեցին մեր երկրի պատմությունը սկսել մաքուր էջից՝ իրենց հրաշարակ գալու օրվանից:

Այդ ինքնավստահ, հաճախ կարծես քաղաքականության միայն կողքով անցած «հերոսների»՝ մեր հայրենիքին հասցրած վերքերն այնքան խորն էին եւ ցավոտ, որ մեր միշտ զգոն, պատրաստակամ, հայրենասեր մտավորականներն անգամ չդիմացան: Նրանցից շատերն այդ վերքերն անբուժելի, թույլ տված սխալներն անուղղելի համարելով, իրենց դեռ նոր անկախացած հայրենիքը լքեցին, եւ նրա ղեկն ու ճակատագիրը այդ ինքնակոչ «առաջնորդներին» հանձնեցին:

Արդարանալու իրավունք չունեն նաեւ երկրում ապրող մտավորականներից շատերը, որոնք մի կողմ դրած հայրենիքի հանդեպ իրենց ունեցած պարտքն եւ պատասխանատվությունը՝ կամ կագնեցին այդ խառնաշփոթի հեղինակների կողքին, կամ էլ լավագույն դեպքում հանդես եկան միայն դիտորդի դերում:

Որքան ինձ հայտնի է՝ մեր մտավորականությունն իր ողջ պատմության ընթացքում երբեք նման անտարբերություն հայրենիքի հանդեպ չի դրսեւորել:

Անկախության սկզբնական շրջանում, հաստատես առաջին տասնամյակում բոլոր նրանց, ովքեր դեռ չէին կորցրել միայն բանական մարդ տեսակին հատուկ խորհելու ընդունակությունը, մեծ ցավ էին պատճառում ամեն քայլափոխում, ինչպես նաեւ բարձր ամբիոններից մեր հարազատ, գեղեցիկ լեզվի անասելի աղավաղումներով կոչերը, ելույթները, անիմաստ ճառերը եւ, հաստատես, անհիմն խոստումները:

Այդ խառնաշփոթում ամենաողբերգականը մեր մանուկների, պատանիների՝ լսելու, սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու ցանկությունների, ձգտումների աստիճանական մարումն էր: Անտանելի էր նաեւ արդեն կայացած, անգամ գիտական տարբեր աստիճանների հասած երիտասարդ մասնագետների՝ իրենց արժանի տեղը գտնելու, ունեցած գիտելիքները նպատակին ծառայեցնելու հնարավորությունից խորը հիասթափությունը:

Մեր ազգի պատմության մեջ այդ տխուր, անհավատալի իրողությունը, մեզանից շատերի մեղքով առաջացած երկարատեւ ճգնաժամը համարենք անցյալ, մղձավանջային երազ:

Պետք է ընդունել, որ վերջին տարիների ընթացքում մեր ազգի դեմքին առաջացած այդ խորը կնճիռները հարթելու ուղղությամբ շատ ջանքեր են գործադրվել, զգալի աշխատանք է տարվել. արդյունքներն ակնհայտ են, բայց անելիքները՝ դեռ անսահման:

Արդեն ժամանակն է լրիվ սթափվելու մեր այդ սարսափելի անցյալի կրկնություններից ամեն տարվա, ամենակարեւորը՝ մեր արգնով խուսափելու, ամենակարեւորը՝ մեր ժամանակավորությունը վերականգնելու համար:

Ժամանակն է մեր երկրում կրթությունը եւ գիտությունը պատշաճ մակարդակի բարձրացնելու:

Ես, որպես կրթության եւ գիտության ոլորտի երկարամյա (60-ից ավելի տարիներ) գործիչ, իմ այս [illegible]ությամբ ուզում եմ ուշադրություն հրավիրել կրթության, հատկապես բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի ներկա վիճակի եւ նրա որոշ խնդիրների վրա: Գիտությունն առանձին քննարկման թեմա է:

Նոր անկախացած որեւէ երկրի կայացման եւ զարգացման նախապայմանը նրա՝ արդեն ունեցածի, տարիների ընթացքում ձեռք բերածի արբորեն պահպանումն է եւ միայն այդ ամուր հիմքի վրա նորի, ավելի կատարյալի կառուցումը, այլապես նոր կառուցածը արագա ունենալ չի կարող:

Հենց այդպիսի մոտեցման բացակայությունն էր պատճառը, որ կարեւոր բնագավառների մեր արժեքավոր նվաճումները անտեսվեցին, մոռացության մատնվեցին, իսկ նրանց փոխարեն ավելի պիտանիները ստեղծվեցին:

Քանի որ խոսքս վերաբերվում է կոնկրետ հարցի՝ բարձրագույն կրթության ներկա համակարգին, վերհիշեմ թե ինչ ենք ունեցել նախկին ուսումնական համակարգի պայմաններում, ոնք են մեր առաջադիմական քայլերը ներկայացնում եւ ո՞ւր են նրանք մեզ տանում: Կա՞ արդյոք այս բնագավառում առաջադիմություն: Իմ բազմամյա փորձը թույլ է տալիս համոզված ասելու՝ ո՛չ:

Նպատակ դրված հայրենիքի հանդեպ իրենց ունեցած պարտքն եւ պատասխանատվությունը՝ կամ կագնեցին այդ խառնաշփոթի հեղինակների կողքին, կամ էլ լավագույն դեպքում հանդես եկան միայն դիտորդի դերում:

Որքան ինձ հայտնի է՝ մեր մտավորականությունն իր ողջ պատմության ընթացքում երբեք նման անտարբերություն հայրենիքի հանդեպ չի դրսեւորել:

Անկախության սկզբնական շրջանում, հատկապես առաջին տասնամյակում բոլոր նրանց, ովքեր դեռ չէին կորցրել միայն բանական մարդ տեսակին հատուկ խորհելու ընդունակությունը, մեծ ցավ էին պատճառում ամեն քայլափոխում, ինչպես նաեւ բարձր ամբիոններից մեր հարազատ, գեղեցիկ լեզվի անասելի աղավաղումներով կոչերը, ելույթները, անիմաստ ճառերը եւ, հատկապես, անհիմն խոստումները:

Այդ խառնաշփոթում ամենաողբերգականը մեր մանուկների, պատանիների՝ լսելու, սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու ցանկությունների, ձգտումների աստիճանական մարումն էր: Անտանելի էր նաեւ արդեն կայացած, անգամ գիտական տարբեր աստիճանների հասած երիտասարդ մասնագետների՝ իրենց արժանի տեղը գտնելու, ունեցած գիտելիքները նպատակին ծառայեցնելու հնարավորությունից խորը հիասթափությունը:

Մեր ազգի պատմության մեջ այդ տխուր, անհավատալի իրողությունը, մեզանից շատերի մեղքով առաջացած երկարատեւ ճգնաժամը համարենք անցյալ, մղձավանջային երազ:

Պետք է ընդունել, որ վերջին տարիների ընթացքում մեր ազգի դեմքին առաջացած այդ խորը կնճիռները հարթելու ուղղությամբ շատ ջանքեր են գործադրվել, զգալի աշխատանք է տարվել. արդյունքներն ակնհայտ են, բայց անելիքները՝ դեռ անսահման:

Արդեն ժամանակն է լրիվ սթափվելու մեր այդ սարսափելի անցյալի կրկնություններից ամեն տարվա, ամենակարեւորը՝ մեր արգնով խուսափելու, ամենակարեւորը՝ մեր ժամանակավորությունը վերականգնելու համար:

Ժամանակն է մեր երկրում կրթությունը եւ գիտությունը պատշաճ մակարդակի բարձրացնելու:

Ես, որպես կրթության եւ գիտության ոլորտի երկարամյա (60-ից ավելի տարիներ) գործիչ, իմ այս [illegible]ությամբ ուզում եմ ուշադրություն հրավիրել կրթության, հատկապես բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի ներկա վիճակի եւ նրա որոշ խնդիրների վրա: Գիտությունն առանձին քննարկման թեմա է:

Նոր անկախացած որեւէ երկրի կայացման եւ զարգացման նախապայմանը նրա՝ արդեն ունեցածի, տարիների ընթացքում ձեռք բերածի արբորեն պահպանումն է եւ միայն այդ ամուր հիմքի վրա նորի, ավելի կատարյալի կառուցումը, այլապես նոր կառուցածը արագա ունենալ չի կարող:

Հենց այդպիսի մոտեցման բացակայությունն էր պատճառը, որ կարեւոր բնագավառների մեր արժեքավոր նվաճումները անտեսվեցին, մոռացության մատնվեցին, իսկ նրանց փոխարեն ավելի պիտանիները ստեղծվեցին:

Քանի որ խոսքս վերաբերվում է կոնկրետ հարցի՝ բարձրագույն կրթության ներկա համակարգին, վերհիշեմ թե ինչ ենք ունեցել նախկին ուսումնական համակարգի պայմաններում, որոնք են մեր առաջադիմական քայլերը ներկայացնում եւ ո՞ւր են նրանք մեզ տանում: Կա՞ արդյոք այս բնագավառում առաջադիմություն: Իմ բազմամյա փորձը թույլ է տալիս համոզված ասելու՝ ո՛չ:

Մեր բուհերի շրջանավարտներով մենք միշտ հպարտանում էինք: Նրանք իրենց ուսումնական հաստատություններ ընդունվելիս, ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հետսովետական ժամանակաշրջանում Եվրոպական խորհրդի, Եվրամիության հսկողության ներքո ախորհրդի, Եվրամիության հսկողության ներքո մենք եվրոպական չափանիշների ընդունակման, անպայման նրանցով առաջնորդվելու մոլուցքով տառապելու մեր ժամանակներում, ուրիշի փորձը ընդունակելիս, հատկապես մեր սեփականը նրանով փոխարինելիս՝ կարծում եմ, որ յուրաքանչյուր երկիր պարտավոր է առաջնորդվել առաջին հերթին ի՛ր շահերով եւ պահանջներով, ի՛ր երկրի բնության, աշխարհագրական, էկոլոգիական պայմանների առանձնահատկություններով, այդ ամենի մասին սպոյգ գիտելիքներով:

Յուրաքանչյուր երկիր պարտավոր է ճիշտ գնահատել ունեցածը եւ անպայման վստահել իր ուժերին: Դժբախտաբար՝ դեռ մենք շատ հեռու ենք դրանից: Եթե այսօր մեր 16-ամյա անկախության պայմաններում անգամ մեր դպրոցականների ձեռք բերած գիտելիքների սուղման եւ ներդրման գործընթացն ինքնուրույն կազմակերպել չենք համարձակվում, ակնհայտորեն մենք մեզ չենք վստահում, հսկայական միջոցներ տրամադրելով՝ ուրիշների օգնությանն ենք դիմում (թեստերի տպագրություն) եւ դեռ դրանով էլ հպարտանում, նշանակում է, որ մենք դեռ կայացած չենք: Դեռ լավ է, որ ինքնակամ հանձնաժողովներում դրսից դիտորդներ չենք ընդգրկում:

Վաղուց ժամանակն է մեր արժանապատվության մասին հիշելու, ամեն պարզունակ հարցում անգամ ուրիշներից կախման մեջ չգտնվելու, վերջապես մեր առանց այն էլ սահմանափակ միջոցները նպատակին ծառայեցնելու:

Հասկանալի է որ գիտատեխնիկական առաջընթացի մեր ժամանակներում, աշխարհի իրադարձություններին անտեղյակ լինելը, ուրիշների առաջավոր փորձը չուսումնասիրելը, նրա պիտանին, օգտակարն անտեսելն անհնարին է, բայց դրան կուրորեն ընդօրինակելն էլ անթույլատրելի է: Իհարկե, մեր անկախությունը ձեռք բերելուց հետո, հատկապես նոր հասարակական հարաբերությունների անցնելու գործընթացում, բոլոր ասպարեզներում բարեփոխումները ոչ միայն անհրաժեշտ են, այլ պարտադիր: Սակայն բոլորիս հայտնի է, որ յուրաքանչյուր նորամուծություն, նոր ռեֆորմի կիրառում, կամ համակարգի ընդունում համապատասխան ոլորտում պետք է ապահովի առնվազն մեկ քայլ առաջընթաց՝ նախորդի համեմատությամբ, այլապես նման բարեփոխումներն անիմաստ են դառնում եւ հակառակ արդյունքների բերում: Կադրերի պատրաստման գործում հատկապես դա աններելի է, քանի որ իր կնիքը կարող է թողնել այդ կարեւոր բնագավառի ոչ միայն ներկայի, այլեւ ապագայի վրա:

Մինչեւ ներկայում գործող եռաստիճան ուսումնական համակարգը մեր ԲՈՒՀ-երին պարտադրելը, մենք ունեինք մեզ անհրաժեշտ բոլոր մասնագիտություններով գրագետ, որակյալ կադրեր պատրաստելու լավ հնարավորություններ: Հնգամյա ուսուցանման ընթացքում մեր ուսանողները ցածր կուրսերում իրենց ընտրած մասնագիտության ասպարեզում ձեռք էին բերում ընդհանուր լավ գիտելիքներ, որից հետո երեք տարի շարունակ (երրորդ կուրսից սկսած) բոլորն անխտիր եւ անվճար հնարավորություն ունեին մասնագիտանալու իրենց նախընտրած բնագավառում: Այդ տարիների ընթացքում նրանք ոչ միայն մեթոդական կարեւոր հարցերում լավ կողմնորոշվելու, այլեւ ինքնուրույն հետազոտություններով զբաղվելու ունակություններ էին ձեռք բերում: Վերջում մեր ուսանողների ներկայացրած ավարտական դիպլոմային աշխատանքները, որոնք առնվազն երկու կուրսային աշխատանքների ամփոփման արդյունք էին, տեսական եւ գործնական արժեքի լուրջ գործեր էին ներկայացնում: Նրանց զգալի մասը չէր զիջում անգամ ներկա դիսերտացիոն աշխատություններին: Լավագույն ուսանողները հրատարակվող աշխատությունների հեղինակներ լինելու իրավունք էին ձեռք բերում, որոնք իրենց սկսած գործն ասպիրանտուրայում էին շարունակում: Այսպիսի պայմաններում պատրաստված մասնագետները կյանք էին մտնում՝ վստահ իրենց գիտելիքների վրա եւ դրանք նպատակին ծառայեցնում: Բոլոր շրջանավարտները իրենց մասնագիտությամբ աշխատանք էին ունենում: Ժամանակին այս գործում նույնիսկ ծայրահեղություններ էին դիտվում. ավարտական վկայականները միայն աշխատանքի անցնելուց հետո էին հանձնում:

Արդյո՞ք արդյոք ներկա ուսումնական համակարգը մեր ուսանողներին նման հնարավորություններով. նորից վստահորեն պետք է ասեմ՝ ոչ:

Ներկա ուսումնական համակարգը բարձրագույն կրթությունը տանում է ոչ թե առաջընթացի ճանապարհով, այլ հակառակ ուղղությամբ:

Նախ ընդգծենք այն փաստը, որ այդ ոլորտի համար պատասխանատվություն կրող նախարարությունում մեր երկրում տեղի ունեցած վերակառուցումից հետո բազմաթիվ նախարարներ են փոխվել: Նրանցից յուրաքանչյուրն առաջնորդվել է իր նախասիրություններով, նախաձեռնություններով: Մեր սեփական փորձը եվրոպականով փոխարինելիս՝ նրանցից յուրաքանչյուրն իր մոտեցումներն է ունեցել եւ, իհարկե, իր գործունեության ժամանակահատվածի ձեռքբերումների հետ կապված՝ մեծ հույսեր փայփայել:

Ներկա եռաստիճան ուսումնական համակարգի առաջին փուլում՝ բակալավրիատում սովորող ուսանողների մեծ մասն իր ընտրած մասնագիտության բնագավառում հնարավորություն ունի ձեռք բերելու միայն ընդհանուր գիտելիքներ, այն էլ միայն ուսումնական պրոցեսը նպատակասլաց ձեւով կազմակերպելու պայմաններում: Այս փուլում մասնագիտացման հնարավորությունը շատ սահմանափակ է: Ավարտական աշխատանքներին հատկացված ժամանակը (նախկինում երեք տարիների փոխարեն՝ ընդամենը մի քանի ամիս) չի կարող բավարարել ոչ միայն որեւէ հարցում խորանալու, այլ անգամ ինքնուրույն հետազոտական աշխատանք ծավալելու համար, հատկապես՝ երբ մասնագիտությունը կապված է փորձարարական ուսումնասիրությունների հետ:

Կրթության արդի համակարգին անցնելուց հետո ուսումնական պրոցեսը կազմակերպվում է ոչ թե նախօրոք հստակ մշակված, պետականորեն հաստատված ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի համաձայն, ինչպես նախկինում, այլ բուհերին տրված լրիվ ազատության, այն էլ նրանց քանակի՝ օրեցօր անհիմն ավելացման պայմաններում: Նրանցից յուրաքանչյուրն ազատ է նաեւ դասավանդվող առարկաներին հատկացվող ժամաքանակի, դասավանդման ձեւի (դասախոսություն, սեմինար), գիտելիքների սուղման եղանակի (քննություն, սեմինար) եւ այլ գործընթացներում: Պարզ է, որ նման խայտաբղետությունը չի կարող չխոչընդոտել ցանկացած մասնագիտության գծով իրենց կոչմանը համապատասխանող անհրաժեշտ գիտելիքներով որակյալ կադրերի պատրաստմանը:

Նման գործընթացի պայմաններում այդ կարեւոր ոլորտն իր պատշաճ բարձրության վրա մնալ չի կարող:

Ես համոզված եմ, որ թվարկված բացերում պետք է փնտրել մեր օրերում բուհի շրջանավարտների գիտելիքների՝ նախկինի համեմատությամբ զգալի տարբերության պատճառները, եւ ոչ թե ժամանակակից երիտասարդության սովորելու, գիտելիք ձեռք բերելու նվազող ձգտումներում եւ կարողություններում, ինչպես փորձում են բացատրել այդ ոլորտի որոշ գիտակներ:

Երիտասարդությունը միշտ իր անսպառ էներգիայով, շրջապատող աշխարհը ճանաչելու, նրանում կողմնորոշվելու, նրանից իրեն հատուկը վերցնելու հարցերում եղել է առաջին շարքերում:

Ներկայումս ընդլայնվել են նաեւ ժամանակակից ուսանողության ինքնազարգացման հնարավորությունները (տեխնիկական զինվածությունը, ինքնուրույն տեղեկատվություն ստանալու տարբեր միջոցները եւ այլն): Չմոռանանք, որ նոր հասարակական կարգի պայմաններում սահմանափակ չեն նաեւ մեր ուսանողների այլ հետաքրքրությունների՝ շրջանակները, որոնք, իհարկե, միշտ չէ որ նպաստում են նրանց ինքնազարգացմանը:

Բոլոր դեպքերում մեր բուհերում մասնագիտացող ուսանողներն իրենց պոտենցիալ հնարավորությունները դրսեւորելու եւ դրանք նպատակին ծառայեցնելու համար կարիք ունեն գիտելիքներ ձեռք բերելու նպատակավոր բնականոն պայմաններում:

Հարկ է անդրադառնալ նաեւ ներկա ուսումնական համակարգի հաջորդ փուլերին՝ մագիստրատուրային, ասպիրանտուրային: Այդ փուլերին անցնելը ոչ բոլոր ձգտողներին եւ արժանիներին են մատչելի: Բայց այդ փուլերում ուսումը շարունակելու բախտ ունեցողների ջանքերն էլ հաճախ նպատակին չեն ծառայում: Նախկինում մասնագիտացումների հարցը կարգավորվում էր հիմնականում համաձայն մեր հանրապետության պահանջների, սպասվելիք հեռանկարների:

Կրթության նախարարությունը դրանց հիման վրա հայտեր էր ներկայացնում համապատասխան

Շարունակությունը՝ էջ 8

Իրականություն

Շիրակ. Երկրաշարժից...

Ջ էջից

Կիզորանա մարզի առողջապահական համակարգը

Մինչեւ 2012 թվականը Գյումրին կունենա արդիական սարքավորումներով հագեցած բազմապրոֆիլային հզոր հիվանդանոց, որտեղ կկենտրոնացվեն հիվանդանոցային բոլոր ծառայությունները, ինչպես նաեւ լաբորատոր եւախտորոշիչ ծառայություններ: Այդ նպատակով կվերանորոգվի Ավստրիական մանկական հիվանդանոցի ներկայիս շենքը, իսկ մեծահասակների համար կից կկառուցվի նոր հիվանդանոց:

Հայաստանի առողջապահության համակարգի արդիականացման Համաբխարհային բանկի վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակում առողջապահական ծառայությունների պլանավորման եւ հիվանդանոցների նախագծման հարցերով միջազգային փորձագետներն արդեն վերանայել են Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոցի տարածքում կառուցվելիք բազմապրոֆիլ հիվանդանոցի հասակագծերը եւ եվրոպական չափորոշիչներին համապատասխան ուղղումներ մտցրել:

Զարգացման այդ ծրագրով միաժամանակ կբարելավվեն համայնքային ամբուլատորիաների եւ առողջության կենտրոնների , գյուղական բնակավայրերում առողջության առաջնային պահպանման կենտրոնների մեծ մասի շենքային պայմաններն ու հագեցվածությունը: Այս աշխատանքներն արդեն իրականացվում են: Այժմ վերանորոգվում է Հոռոմի ամբուլատորիան:

Գյումրին կդառնա տեխնոքաղաք

«Գյումրին խոշոր կրթօջախներով, գիտահետազոտական կենտրոններով ու նորարարությունների, տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաների նախագծերի մշակման, փորձարկման, կյանքի կոչելու եւ լայնածավալ արտադրություններ հիմնելու մեծ հնարավորություններով, ինչպես նաեւ բարձր տեխնոլոգիաներ կիրառող փոքր եւ միջին ձեռնարկություններով, միաժամանակ՝ ավանդական մշակութային իր նկարագրով». այսպիսին է առագա տեխնոքաղաքի նկարագիրը:

Գյումրին տեխնոքաղաք դարձնելու ճանապարհին Շիրակի մարզում կայացած արտգնա նիստի հավանությանն արժանացած մեկ այլ՝ «Գյումրիի տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2008 թվականի ծրագրով» նախատեսվող քայլերը հստակորեն իրականացվում են: ԱՄՆ ի Միջազգային զարգացման գործակալության հետ միասին ընտրել է փորձագետների թիմը (մեկ միջազգային եւ երեք տեղական), որը մինչեւ տարեվերջ կներկայացնի Գյումրիի տեխնոպարկի բիզնես - մոդելը:

«Միջազգային փորձագետ Քեվին Թոմփսոնը Իռլանդիայի Շենոնի տարածաշրջանից է: Նախկինում զարգացած տեսքիլ արդյունաբերություն ունեցած այս տարածաշրջանն այսօր հայտնի է որպես տեխնիկական հանգույց:

Իռլանդացի փորձագետը եղավ Գյումրիում, հանդիպեց տեղական իշխանությունների, կրթական հաստատությունների եւ մասնավոր կազմակերպությունների ղեկավարներին, ծանոթացավ իրավիճակին եւ եկավ եզրակացության, որ ճիշտ ընտրություն է կատարվել , եւ Շենոնի մոդելի կիրառմամբ կկարողանանք հասնել մեր նպատակին»,-ասում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վարչության պետ Ժենյա Ազիզյանը:

Գյումրին հանրապետական մարզական կենտրոն դարձնելու ակնկալիքով ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունն աշխատանքներ է իրականացնում անհատ ձեռներեցներից եւ առեւտրային կազմակերպություններից ֆինանսական ներդրումներ ներգրավելու ուղղությամբ: Այդ միջոցներով հանրապետության երկրորդ քաղաքում կկառուցվի մարզական ժամանակակից համալիր, կիզորացվեն եղած կազմակերպությունները, կստեղծվեն նորերը:

Թվերի ետեւում

ՀՀ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը 2008թ. հունիսի 12-ին կայացած ՀՀ կառավարության արտգնա նիստին չափազանց մեծ կարեւորություն է տալիս:

«Ընդհանուր առմամբ մարզին հատկացված ավելի քան 880 մլն դրամով հիմնանորոգվել են Սառնաղբյուր Մարալիկ մարզային նշանակության ավտոճանապարհի Ջորակաթ-Մարալիկ հատվածը, Գյումրիի Խրիմյան Հայրիկ փողոցի շարունակությունը կազմող Գյումրի-Սոիտակ-Վանաձոր ավտոճանապարհի 1,4 կմ հատվածը, Գյումրիի Պարույր Սեւակ փողոցը: Կառուցվում է Գյումրիի քաղաքապետարանի վարչական նոր շենքը, հիմնանորոգվում՝ Արթիկի քաղաքապետարանի շենքը: Ամրցում եւ Ամասիա գյուղում բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ են հիմնանորոգվում, ջրատարներ, կոյուղու ցանցեր եւ ջրահեռացման ստորգետնյա ցանցեր են նորոգվում: Նաեւ Գյումրիի ընտանեկան առողջության կենտրոնի 6 մասնաշենքերի ջեռուցման համակարգն է ստեղծվում, գազիֆիկացվում է մեկ պոլիկլինիկա:

Ընթանում է Գյումրիի Ամենափրկիչ եկեղեցու վերականգնումը:

Իսկ Գյումրի քաղաքի պատմամշակութային եւ քաղաքաշինական միջավայրի վերականգնման եւ զարգացման ծրագրի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեի 2009 թ. նախագծում ընդգրկվել են Գյումրիի նախկին «Շիրակ» հյուրանոցի ադամանտաժման եւ տեղում նոր շենքի կառուցման, Սեյանի անվան երկաթուղայինների Մշակույթի պալատի վերակառուցման եւ կայարանամերձ հրապարակի բարեկարգման, Մանկավարժական ինստիտուտի նախկին շենքի ամրացման եւ վերականգնման աշխատանքները»,-ասում է տիկին Նանյանը:

Ինչ խոսք, երկրաշարժից 20 տարի անց Շիրակի մարզում դեռ բազմաթիվ չլուծված խնդիրներ կան: Սակայն ՀՀ կառավարության արտգնա նիստից հետո ընդամենը մի քանի ամիս անց արձանագրվող արդյունքները լավատեսորեն են տրամադրում: ■

Լեռնային Ղարաբաղի...

Ա էջից

կարեւոր է նաեւ, որ մենագրությունում ներկայացված փաստերը վկայում են չափազանց կարեւոր մի բան. Ադրբեջանը մշտապես կամ խուսափել է հրադադարից, կամ, եթե համաձայնել է, կարճ ժամանակ անց խախտել է այն:

Առանձին վերլուծության նյութ է դարձել հակամարտության կարգավորման գործընթացը, որը հեղինակը պայմանականորեն բաժանել է երկու փուլի՝ լուծումների որոնում տարածքային ամբողջականության սկզբունքի շրջանակներում (մինչեւ 1997թ. վերջը) եւ լուծումների որոնում տարածքային ամբողջականության սկզբունքի եւ ինքնորոշման իրավունքի համադրմամբ: Հեղինակը միանգամայն արդարացիորեն նշում է, որ ինքնորոշման իրավունքի ընդունումը որպես կարգավորման հիմնական սկզբունքներից մեկը, դեռեւս չի ապահովում արդարացի լուծում: Այն հնարավորություն է տալիս միջազգային իրավունքի անհրաժեշտ իմացության առկայության դեպքում լիարժեքորեն պաշտպանել Լեռնային Ղարաբաղի շահերը: Հակամարտության կարգավորման գործընթացի հաջողությունը պայմանավորված է բանակցային գործընթացի ձեւաչափի ճշգրտմամբ՝ այդ գործընթացից բխող քայլերով: Ընդ որում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք մասնակցությունը ԼՂՀ կարգավիճակի վերաբերյալ բանակցություններին՝ որպես հակամարտության միջազգայնորեն ճանաչված կողմ, անհրաժեշտ պայման է հակամարտության արդյունավետ կարգավորման համար:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուսումնասիրության տեսակետից ուշագրավ է նաեւ մենագրության 5-րդ գլուխը, որը նվիրված է հակամարտությունների համեմատական վերլուծությանը: Երբ այս տարվա փետրվարին հռչակվեց Կոսովոյի անկախությունը եւ այն ճանաչվեց չորս տասնյակ երկրների կողմից, զգալիորեն մեծացավ այդ հակամարտության նկատմամբ հետաքրքրությունը, եւ բոլոր քննարկումների առարկա դարձավ այդ հակամարտության նշանակությունը՝ որպես հակամարտությունների կարգավորման նախադեպ: Ի սկզբանե արձանագրելով, որ նախադեպը միջազգային իրավունքում նորմատեղծ աղբյուր չէ, մենագրության հեղինակը խիստ օգտակար է համարում Լեռնային Ղարաբաղի եւ Կոսովոյի հակամարտությունների համեմատական վերլուծությունը, նախ՝ գնահատելու համար Լեռնային Ղարաբաղի պարագայում ինքնորոշման իրավունքի կիրառման իրավական հիմքերը հաջողված նախադեպի համեմաս, ապա նաեւ պարզելու, թե ինչքանով են իրականությանը համապատասխանում մի շարք կազմակերպությունների ու երկների ներկայացուցիչների պնդումները, թե Կոսովոյի դեպքը առանձնահատուկ է: Համեմատական վերլուծությունը ընդունված մեթոդ է հակամարտությունների ուսումնասիրության ոլորտում, թեեւ պետք է խոստովանել, որ Լեռնային Ղարաբաղի դեպքում նման խորությամբ ուսումնասիրությունները բացակայում են: Մենագրության հեղինակը նախընտրել է երկբաղադրիչ վերլուծությունը՝ ըստ միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերի (միջազգային հանրության ընկալման չափում) եւ ըստ հակամարտությունների ընթացքի հանգուցային իրադարձությունների (փաստագրական չափում): Հեղինակին հաջողվել է համոզիչ փաստարկներով ապացուցել, որ Կոսովոյի հակամարտությունը, ի տարբերություն ղարաբաղյանի, ունի մի շարք թերություններ, եւ այն առնվազն Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ առանձնահատուկ ճանաչելու որեւէ հիմք չկա:

Մենագրության չորս հավելվածները ներկայացնում են ինքնորոշման իրավունքին առնչվող միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ընդունած բանաձեւերը Լեռնային Ղարաբաղի եւ Կոսովոյի հակամարտությունների վերաբերյալ, Լեռնային Ղարաբաղի եւ Կոսովոյի հակամարտությունների զարգացման եւ կարգավորման ժամանակագրությունները: Հավելվածների առկայությունը օգտակար է ոչ միայն մենագրության լիարժեք ընկալման, այլեւ այդ հակամարտությունների կարգավորմանն առնչվող ցանկացած ուսումնասիրության համար:

Մենագրության կարեւոր արժանիքներից են օգտագործված աղբյուրների բազմազանությունն ու առատությունը (60 մենագրություն, 70-ից ավելի հոդված, 60-ից ավելի փաստաթուղթ), ինչպես նաեւ այն հանգամանքը, որ դրանց բացարձակ մեծամասնությունը օտար աղբյուրներ են: Հատկանշական է, որ դրանց մեջ զգալի է նաեւ արեւելյանական աղբյուրների թիվը:

Գրքում բերված է նաեւ լրացուցիչ գրականության ցանկ՝ ինքնորոշման իրավունքի եւ անջատման խնդիրների վերաբերյալ, ինչն անառարկելիորեն վկայում է, որ ինքնորոշման իրավունքին առնչվող տեսական եւ կիրառական հարցերը միջազգային իրավունքի առավել ակտիվ քննարկվող պրոբլեմներից են, ընդ որում՝ նաեւ հեղինակավոր գիտական կենտրոններում եւ հանդեսների էջերում: ■

Կադրերն են երկրի դեմքը ...

Է էջից

հատատություններին: Պատրաստած մասնագետների ձեռք բերած գիտելիքները, նրանց վրա կատարած ծախսերը հիմնականում նպատակին էին ծառայում:

Ներկայումս մասնագիտությունների ուղղությունների, պատրաստվող կադրերի քանակի որոշման հարցերում նույնպես ուսումնական, գիտական հիմնարկները հիմնականում գործում են ինքնուրույնության պայմաններում, իհարկե ոչ միշտ այդ կադրերի ապագայի հարցում բավարար պատասխանատվությամբ: Այսպիսի մոտեցումը հաճախ տանում է որոշ մասնագիտությունների ուղղությամբ պատրաստված կադրերի գերածի եւ ոչ պակաս կարեւոր կադրերի պակասորդի: Այս խիստ կարեւոր հարցին նման ոչ ծրագրավորված մոտեցումը ժամանակի ընթացքում կարող է վնասել որոշ բնագավառների արդյունավետ գործունեությունը՝ պահանջվող կադրերի բացակայության պատճառով: Որոշ կարեւոր բնագավառներում դա արդեն զգացվում է: Կադրերի պատրաստման կարեւոր գործին նման մոտեցման պայմաններում գարծադրված ջանքերը, կատարված ծախսերը (թեկուզ եւ հիմնականում սովորողների գրպանից՝ ի վնաս նրանց ընտանիքների առանց այն էլ սուղ միջոցների) հաճախ ապարդյուն են անցնում: Այնպես որ՝ զարմանալի չէ, որ պատրաստի մասնագետների զգալի մասն անգործության է մատնվում կամ էլ լավագույն դեպքում՝ իրեն չհամապատասխանող աշխատանքի անցնում:

Իհարկե, ուսումնական հաստատություններին որոշ ինքնուրույնություն տալն անհրաժեշտ է, բայց միայն որոշակի պետականորեն հաստատված եւ ընդունված ուսումնական պլանների եւ առարկայական ծրագրերի շրջանակներում:

Ակնհայտ է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների (համալսարանների, ակադեմիաների) ներկա առատությունից, նրանց ունեցած ինքնուրույնությունից, ազատությունից կրթությունը չի շահում եւ պատրաստվող կադրերի որակը չի բարձրանում: Նախկինում Գիտությունների ակադեմիան, Երեւանի պետական համալսարանը առաջատարն էին, իսկ նրանցից բողբոջած ուսումնական եւ գիտական ինստիտուտները ունեին իրենց կոնկրետ խնդիրները, որոնց համաձայն էլ համապատասխան բնագավառներում պատրաստվում էին որակյալ մասնագետներ: Ցավոք, շոշափված՝ ըստ իս շատ կարեւոր հարցերն առայժմ մեր կառավարության բավարար ուշադրությանը չեն արժանացել՝ հավանաբար ավելի առաջնահերթ անհետաձգելի հոգսերի պատճառով:

Քանի որ մեր երկրի ներկա իրադրության պայմաններում կրթության ոլորտում արդեն ընդունված եւ բավական ժամանակ գործող ուսումնական համակարգից հրաժարվել, կամ այն նորով՝ ավելի արդյունավետով փոխարինելը առայժմ անհնարին է, ուրեմն մախիմում ջանքեր են պետք՝ եղածը ավելի արդյունավետ դարձնելու:

Կարծում եմ, որ բարձրագույն կրթության նախարարությունը, իհարկե մասնագիտացված հանձնաժողովների օգնությամբ, պետք է.

1. Մեր երկրին անհրաժեշտ բոլոր մասնագիտությունների ուղղություններով մշակի մշտական, պարտադիր ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, որոնք մեր սովորողներին կապահովեն պահանջվող անհրաժեշտ գիտելիքներով, անկախ նրանից, թե որ բուհում են նրանք իրենց ընտրած ուղղությամբ մասնագիտանում:

2. Մասնագիտացումների հարցը (մագիստրատուրա, ասպիրանտուրա) համապատասխան ուսումնական, գիտական հաստատություններում ճիշտ կլինի կազմակերպել կրթության եւ գիտության նախարարության միջամտությամբ եւ հսկողությամբ, համաձայն մեր երկրի՝ ինչպես ներկա պահանջների, այնպես էլ սպասվելիք հեռանկարների, որպեսզի գործող եռաստիճան ուսումնական համակարգի երկրորդ եւ երրորդ ամենապատասխանատու փուլերում տարվող աշխատանքը եւ կատարված ծախսերը նպատակին ծառայեն:

3. Կրթության նախարարությունը պետք է լուրջ միջոցներ ձեռնարկի պատրաստված կադրերի բաշխման գործը նպատակասլաց ձեւով կազմակերպելու ուղղությամբ, որպեսզի նրանք զբաղեցնեն իրենց տեղերը եւ ձեռք բերած գիտելիքները ծառայեցնեն համապատասխան ոլորտների բարգավաճման գործին:

4. Համոզված էի, որ ՀՀ վարչապետի հրամանով ստեղծված կարեւոր նախարարական կոմիտեների շարքում տեղ կգտներ նաեւ կրթության եւ գիտության կոմիտեն: Չէի կարծում, որ այդ կարեւոր ոլորտների հարցերը մինչեւ կառավարության նիստերի օրակարգ մտնելը՝ կարիք չունեն կոլեգիալ քննարկման: Բայց ավաղ... Ցավալի է, որ այս անգամ նորից այդ կարեւոր ոլորտները առաջնահերթների շարքում տեղ չգտան:

Վաղուց ժամանակն է, որ մեր երկրի բոլոր կարեւոր բնագավառները ղեկավարեն պրոֆեսիոնալները. ժողովուրդը հոգնել է դիլետանտների անիմաստ ելույթներից, անհիմն խոստումներից եւ հատկապես նրանց անհեռատես գործունեության հետեւանքներից: Վաղուց ժամանակն է, որ մեր երկրում իրավագիտության հետ կապված լուրջ հարցերի պարզաբանմամբ եւ լուծմամբ զբաղվեն միայն գրագետ իրավաբաններ, բանիմաց տնտեսագետներ: Ժամանակն է, որ մեր բնության պահպանության, էկոլոգիայի կարեւորագույն խնդիրների կարգավորումը վստահվի միայն բնության փոփոխականության, զարգացման օրինաչափություններում, օրենքներում լավ կողմնորոշվող գիտակ-մասնագետների: Անհրաժեշտ է, որ երկրի սահմաններից դուրս մեր երկիրը ներկայացնող դիվանագետները լինեն հատուկ պատրաստված, բանիմաց եւ բարեկիրթ հայրենասերներ:

Նորից պետք է ընդգծեմ, որ մեր ժամանակներում միջազգային ջերմ բարեկամական փոխհարաբերությունները, եվրոպական չափանիշներին ծանոթ լինելը, հարկ եղած դեպքում նրանցից օգտվելը, կամ մեզ համար որոշ նոր բնագավառներում ուրիշի փորձը փոխանակելը մեզ ամենեւին իրավունք չեն վերապահում սեփականը հեռին պլան մղելու, կամ էլ այն անպայման նորով, թեկուզ եւ մեզ համար ոչ պիտանիով փոխարինելու:

Ամենակարեւորը՝ սեփական դեմքը չպետք է կորցնել: Չմոռանանք, որ մենք շատ թանկ գնով ենք անկախությունը ձեռք բերել, հետեւապես պարտավոր ենք այն հաստատել եւ առաջ տանել: Պարտավոր ենք այդ պայքարում իրենց կյանքը չխնայած մեր բազմաթիվ երիտասարդ հայրենասերների հիշատակը վառ պահել: ■

Աշխարհաքաղաքական տեսական արմատները եւ դրա մաֆինդերյան մեկնաբանությունը

Աշխարհաքաղաքական ներկա զարգացումների պայմաններում, երբ հայրենի եւ արտասահմանյան գրականությունն ու մամուլը լի են աշխարհաքաղաքականության մասին հոդվածներով եւ գրքերով, արժե առավել խորությամբ ուսումնասիրել այս տեսությունը՝ հասկանալու համար նրա ոչ միայն տեսական եւ պատմական արմատները, այլեւ այն ազդեցությունը, որն ունեցել է եւ ունի ներկայումս ընթացող քաղաքական զարգացումների վրա աշխարհում եւ մեր տարածաշրջանում մասնավորապես: Եվ այսպես, թերեւս առաջին հարցը՝ ի՞նչ է աշխարհաքաղաքականությունը: Դասական իմաստով, դա քաղաքական վերլուծության մեթոդոլոգիա է, որը բավականին տարածված էր անցյալ դարի առաջին կեսին Եվրոպայում եւ շեշտում էր աշխարհագրական դիրքի կարեւորությունն ու առանցքային նշանակությունը պետությունների զարգացման եւ միջազգային հարաբերությունների կարգավորման գործում:

Աշխարհաքաղաքականություն (geopolitics) տերմինը շրջանառության մեջ առաջին անգամ մտավ 1916-ին, այս բառերի ստեղծողը համարվում է շվեդ հայտնի քաղաքագետ Ռուդոլֆ Չելենը, որն այդ տարի հրատարակեց իր «Պետությունը որպես մարմին» գիրքը: Հետագայում այս տերմինը սկսեց ակտիվորեն օգտագործել մաֆինդերյան տեսության ակտիվ կողմնակից, գերմանացի հայտնի գիտնական Կարլ Հաուսհոֆերը: Վերջինս 1922-ին Մյունխենում հիմնեց «Աշխարհաքաղաքականություն» կոչվող հայտնի ինստիտուտը, որը զբաղվում էր այս տեսության ուսումնասիրմամբ: Նա, ինչպես եւ Մաֆինդերը, ընդունում էր Եվրասիա մայրցամաքի կարեւորությունը համաշխարհային տիրապետության հաստատման գործում եւ գտնում էր, որ նա, ով կիշխի այդ մայրցամաքում, կտիրապետի ողջ աշխարհում: 1919-ին Մաֆինդերը հրատարակում է իր երկրորդ աշխատանքը աշխարհաքաղաքականության մասին՝ «Ժողովրդավարական իդեալները եւ իրականությունը» գրքում վերջնական ձեւակերպում է ստանում նրա հայտնի «Սիրտ հողի (Heartland)» տեսությունը:

Who rules East Europe commands the Heartland;

Who rules the heartland commands the World Island;

Who rules the World Island commands the World (Mackinder, 1919).

Համաձայն այս տեսության, «նա ով վերահսկում է Արեւելյան Եվրոպան, նա էլ վերահսկում է Սիրտ հողը, նա, ով վերահսկում է Սիրտ հողը, նա էլ վերահսկում է համաշխարհային կղզին՝ Եվրասիա մայրցամաքը, իսկ նա, ով վերահսկում է համաշխարհային կղզին, նա էլ ողեկավարում է աշխարհը»: Այսինքն՝ ասելով Սիրտ հող, Մաֆինդերը նկատի ուներ ժամանակակից Արեւելյան Եվրոպան եւ Ռուսաստանի եվրոպական մասը: Ըստ նրա, Սիրտ հողի շուրջը տեղադրված է ներքին գիծը, որի մեջ մտնում են Եվրոպան, Արաբական թերակղզին եւ Հնդկաչինը: Իսկ սրա շուրջը՝ «ծայրամասային շրջանը», Ամերիկան, Աֆրիկան եւ Օկինավան: Մաֆինդերը ԱՄՆ-ը նույնպես համարում էր ծայրամաս, որը էական դեր չի խաղում համաշխարհային մրցապայքարում: Ավելի ուշ Հալֆորդ Ջոն Մաֆինդերը վերանայում է իր տեսակետը, եւ 1943-ին լույս է տեսնում աշխարհաքաղաքականության մասին նրա վերջին աշխատանքը՝ «Երկրագունդը եւ խաղաղությունը»: Այստեղ նա արդեն էականորեն փոխում է իր տեսակետը աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին եւ կարծիք է հայտնում, որ հետագա պայքարը է հայտնում երկբեւեռ աշխարհաքաղաքական համակարգի ձեւավորման հնարավորության եւ քաղաքական նոր դաշինքների ստեղծման մասին: Հալֆորդ Ջոն Մաֆինդերին շատերը համարում են նաեւ Ազգանշիզմի տեսության հիմնադիրներից մեկը:

Եղել են ժամանակներ, երբ մաֆինդերյան տեսությունը մոռացության է մատնվել, սակայն եղել են նաեւ դրա հետեւորդները եւ այդ տեսության զարգացման կողմնակիցները: Շատերը նույնիսկ կարծում են, որ Ադոլֆ Հիտլերի որոշումը՝ շարժվել դեպի Արեւելյան Եվրոպա եւ ներխուժել ԽՍՀՄ, նույնպես կապված էր այս տեսության եւ նրա հիմնական կողմնակիցներից մեկի՝ Հաուսֆերի աշխատանքների հետ, որը, ինչպես եւ Մաֆինդերը, կարծում էր, թե նա, ով վերահսկում է Արեւելյան Եվրոպան՝ Սիրտ հողը, վերահսկում է ողջ աշխարհը:

Մաֆինդերյան հայտնի տեսության երկրորդ ծնունդը կապված է ԽՍՀՄ-ի քայքայման հետ, երբ պայքարը Կենտրոնական Եվրասիայի համար նոր թափ ստացավ եւ Արեւմուտքի ուշադրությունը սեւեռվեց ոչ միայն Արեւելյան Եվրոպայի, այլեւ նավթով ու գազով հարուստ Կենտրոնական Ասիայի, Կասպից ծովի ավազանի եւ այդ տարածաշրջանների դարպասը համարվող Հարավային Կովկասի նկատմամբ: Այս տարածաշրջանները դարձան ռուս-ամերիկյան մրցակցության նոր թատերաբեմ, որոնց պայքարում դանդաղ համառությամբ իր ներկայությունն է նախանշում նաեւ Չինաստանը:

Արեւմուտքում եւ հատկապես ԱՄՆ-ում աճել է քաղաքագետների, տեսաբանների եւ վերլուծաբանների մի ամբողջ սերունդ, որոնց համար բրիտանացի հայտնի տեսաբան, աշխարհագրագետ եւ պատմաբան Հալֆորդ Ջոն Մաֆինդերի Heartland-ի տեսությունը դարձել է սեղանի դասագիրք: Դեպի այս տարածաշրջան շարժվելու եւ վերահսկելու գաղափարը մտակում էին Սպիտակ տան արտաքին քաղաքականության վրա հզոր ազդեցություն ունեցող քաղաքագետներ եւ վերլուծաբաններ, ինչպես Զբիգնեւ Բժեզինսկին իր հայտնի «Շախմատային մեծ խաղադաշտ» գրքով, Լյուիս Լիբին՝ ԱՄՆ-ի փոխնախագահ Դիկ Չեյնիի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդականը, Պոլ Վուլֆովիցը՝ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի նախկին տեղակալը եւ այլք: Այսինքն՝ դեպի այս տարածաշրջան շարժվելու համար կար տեսական հիմք, որն «ապացուցում եւ արդարացնում» էր այդ քայլի անհրաժեշտությունը ԱՄՆ-ի՝ որպես թիվ 1 գերտերության պահպանման եւ հզորացման, ինչպես նաեւ նոր գերտերությունների հայտնվելուն խոչընդոտելու համար:

Ինչեւէ, մաֆինդերյան աշխարհաքաղաքականությունն ընդամենը տեսական այն հիմքերից մեկն է, որն ազդել է Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի քաղաքական մտքի ձեւավորման վրա եւ ստեղծել տեսաբանների մի ամբողջ սերունդ, որոնց գործունեությունն էլ հանգեցրել է ԱՄՆ-ի ներկա արտաքին քաղաքականության ձեւավորմանը: Նկատեմ, որ այս տեսության ազդեցությունը ուժեղ է նաեւ Ռուսաստանի եւ Չինաստանի քաղաքական ու փորձագիտական դպրոցների վրա, հետեւաբար «Սիրտ հող-Heartland»-ի ազդեցությունը դեռ շարունակում է ուժեղ մնալ քաղաքական վերլուծական նոր դպրոցների վրա:

ԱՐՄԵՆ ՄԵՆՎԵԼՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱ

Հանրային հեռուստատեսությունում գովազդն արգելող օրինագիծ

Ֆրանսիայի մշակույթի եւ հաղորդակցության նախարար Քրիստին Ալբանելը երեքշաբթի օրը Ազգային ժողովի պատգամավորներին ներկայացրել է կառավարական օրինագիծ պետհեռուստառադիոյի բարեփոխումների վերաբերյալ: Օրինագծի քննարկումները բուռն վիճաբանությունների տեղիք են տվել: «Ֆիգարո» թերթը նշում է, որ քննարկումն ուղեկցված է հեռուստատեսության եւ ռադիոյի լրագրողների բողոքի բազմամարդ ցույցերով եւ գործադուլներով:

Արդեն երեքշաբթի օրը Փարիզում 4000 լրագրողներ ցույց են արել օրինագծով նախատեսվող «պետական վերահսկողության» դեմ: Սոցկուսի առաջնորդներ Մարտին Օբրին եւ Բենուա Ամոնը, ինչպես նաեւ «կանաչների» պատգամավոր Նոել Մամերը միացել են ցուցարարներին:

Գործադուլ են արել նաեւ France Inter եւ France Culture ռադիոկայանների աշխատակազմերը: Փարիզի շրջանում գործադուլ է արել France 3 հանրային ալիքի լրագրողների 95 տոկոսը: Համանման վիճակ էր նաեւ Մարսելում, Թուլուզում, Ռեմսում, Գրենոբլում եւ այլուր:

Ինչ վերաբերում է օրինագծի մանրամասնություններին, պետհեռուստառադիոյի բարեփոխման օրինագծի գլխավոր կետն այն է, որ երկրի հանրային հեռուստաալիքներով գովազդը պետք է վերացվի ժամը 20-ից մինչեւ ժամը 6-ը: Նախատեսվում է այս բարեփոխումը կիրառել 2009-ի հունվարի 5-ից: Իսկ մինչեւ 2011-ի վերջը հանրային ալիքներով գովազդը պետք է առհասարակ վերացվի:

Նաեւ նախատեսվում է, որ այսուհետեւ հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի նախագահներին պետք է նշանակի հանրապետության նախագահը: Մինչեւ օրս այդ նշանակումները կատարում էր պետհեռուստառադիոյի գերագույն խորհուրդը:

Գովազդի վերացման կորուստները կհատուցվեն կառավարության միջոցներից: Իսկ մասնավոր ալիքների վրա երկու նոր հարկ կսահմանվի, դրանցից մեկը կկազմի ալիքների, դրա շրջանառության 1,5-3 տոկոսը, տարեկան բերելով 40-80 մլն եվրո եկամուտ: Մյուս հարկը կդրվի հեռուստահաղորդակցության օպերատորների վրա (0,9 տոկոս) եւ կբերի 400 մլն եվրո եկամուտ:

Հանրային հեռուստատեսությունը կդառնա թվայնացված եւ միասնական ձեռնարկություն՝ առանց մասնաճյուղերի:

Չեխիայի Սենատը հավանություն տվեց ռադարի տեղակայմանը

Չեխիայի խորհրդարանի վերին պալատը՝ Սենատը հավանություն տվեց ԱՄՆ-ի հետ ստորագրված համաձայնագրին, ըստ որի Չեխիայի տարածքում պետք է տեղակայվի ամերիկյան ռադար: «Ֆրանսպրեսը» հաղորդում է, որ ռադարի տեղակայման օգտին արտահայտվել է 81 սենատորներից 49:

Մնում է, որ համաձայնագիրը հաստատվի Պատգամավորների պալատում եւ վավերացվի երկրի նախագահի ստորագրությամբ: Վարչապետ Միրեկ Տոպոլանեկը հայտարարել է, որ վերջին քվեարկությունը տեղի կունենա հունվարի 20-ից՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի պաշտոնակալությունից հետո:

Հուլիսի 8-ին ստորագրված համաձայնագիրն ամերիկյան հակահրթռային համակարգի շրջանակներում նախատեսում է Չեխիայում ռադար տեղակայել «իրանական հրթիռներից» պաշտպանվելու համար: Վաշինգտոնում պնդում են, թե ռադարը եւ Լեհաստանում տեղակայվող հակահրթիռները չեն սպառնում Ռուսաստանի անվտանգությանը: Բայց ռուսներն այդ պնդումը համոզիչ չեն համարում եւ խոստանում են, որպես պատասխան քայլ, «Իսկանդեր» հրթիռային համալիր տեղաբաշխել Կալինինգրադի մարզում:

Իրաքի խորհրդարանը համաձայն է 2011-ին ամերիկյան զորքի դուրսբերմանը

Իրաքի խորհրդարանը հավանություն է տվել ԱՄՆ-ի հետ կնքված անվտանգության երկկողմ համաձայնագրին, ըստ որի ամերիկյան զորքն Իրաքից վերջնականապես պետք է հեռանա 2011-ին:

«Ասոշիեյթեդ պրես» գործակալությունը հաղորդում է, որ համաձայնագրի վավերացման օգտին արտահայտվել են 198 պատգամավորներից 144-ը: Իրաքի վարչապետի մամլո քարտուղար Ալի ալ Դաբաղը քվեարկության արդյունքները բնութագրել է որպես ժողովրդավարության հաղթանակ: Ներկայումս Իրաքում կա 150 հազար ամերիկացի զինծառայող: Նախատեսվում է ամերիկյան որոշ զորամասեր Իրաքից տեղափոխել Աֆղանստան, որտեղ վերջերս ակտիվացել է թալիբների գործունեությունը:

Չնայած զորքի դուրսբերմանը, ամերիկացիները կմնան ամերիկյան ռազմակայաններում, որոնց ստույգ թիվն առայժմ որոշված չէ: Այնտեղ մնացող ամերիկացի զինծառայողները մասնավորապես պետք է զբաղվեն իրաքյան ուժերի ձեւավորման հարցերով:

Մշակույթ

Լուսիկը՝ Սարյանի մուսան

Դեկտեմբերի 2-ին Մ. Սարյանի տուն-թանգարանում կբացվի «Լուսիկը՝ Սարյանի մուսան» խորագրով ցուցահանդեսը: Այն նվիրված է Վարդեսի կնոջ ծննդյան 115-ամյա տարեդարձին: Ամեն սիրո պատմություն ունի իր հուզիչ բովանդակությունը: «Մեր միջեւ չստեղծվեց սիրո այն պատմությունը, ինչը, սովորաբար, նկարագրում են գրողները: Դա վաղուց իրար հարազաս մարդկանց հանդիպում էր, որոնք միայն պատահականությամբ, կարծես,... բաժանվել էին», գրում է Սարյանը իր հուշերում: Այդ հարազատության զգացողությունը առավել խորն էր ու ջերմ, քանի որ նկարչի ծանոթությունը Լուսիկ Աղայանի հետ տեղի ունեցավ ողբերգական 1915 թվականին, երբ սգում էր ողջ հայ ժողովուրդը: Նրանք հանդիպեցին 1915-ի հոկտեմբերին Թբիլիսիում: Սարյանին հոգեկան ծանր կացությամբ այստեղ էին տեղափոխել ընկերները էջմիածնից, ուր նկարիչը եկել էր որպես Արեւմտյան Հայաստանի փախստականների օգնության Կոմիտեի անդամ:

Հայ մտավորականներից շատերն էին համախմբվել այդ ժամանակ Թբիլիսիում: Իրենց հոգեւոր միասնությամբ նրանք փորձում էին «փարատել ծանր ողբերգությունը»: Որպես հանդիպման վայր բացվեց «Մի բաժակ թեյ» բարեգործական սրճարանը: Այդտեղ էլ տեղի ունեցավ Սարյանի հանդիպումը ճանաչված գրող եւ մանկավարժ Ղազարոս Աղայանի դստեր՝ Լուսիկի հետ:

Սարյանը սիրեց Լուսիկին առաջին իսկ հայացքից: «Անհնար էր հեռացնել աչքերը այդ հմայիչ աղջնակից՝ պոչավոր աչքեր, գեղեցիկ գլուխ, հրաշակերտ վիզ, հոլանի ուսեր, նրբագեղ ձեռքեր, պլաստիկ մարմին, հոգեկան պորումները թեթեւ ու բաց հաղորդող պարզ դեմք: Բնական, ազնիվ սեթեւեթանքը միահյուսված հնչեղ ծիծաղին, նրան դարձնում էր աղեստի մի կենդանի ստեղծագործություն...»: Այս բանաստեղծական նկարագրությամբ է ստեղծված 1915 թվականի ջրաներկ դիմանկարը, ուր պատկերված է նկարչի սիրը գեռաթ եւ ծանր պորումներից հետո նրան ոգեշնչման եւ ստեղծագործության մղած գեղեցկուհի Լուսիկը:

Ցուցադրության մեջ ներկայացված գծանկարներում Սարյանի սիրեցյալը միշտ տարբեր է իր բնութագրով, միշտ նորովի տեսնված, միշտ անկրկնելի գեղեցիկ: Հաճախ մի թղթի սահմաններում նկարիչը զարմանալիորեն միացնում է տարբեր գործողություններ կատարող իր կնոջ երեք տարբեր կերպարանավորումներ Սարյանն իր աղեստի ուժով մեկ կտավում միահյուսում է ժամանակը, շարժումը, երազն ու իրականությունը:

Հայաստանի ազգային պատկերասրահի տրամադրած «Լուսիկ Սարյանը» (1941) դիմանկարում նկարչի կինը պատկերված է կրկնակի: Որպես վառ խառնվածքի տեր իր Լուսիկի բնորոշ նկարագիր՝ նկարիչը ներդաշնակորեն համադրում է նրա շարժումների արագ հաջորդականությունը:

«Նկարչի կյանքից. (Լ. Սարյանի դիմանկարը կիսադեմ)» 1941 թվականի կտավում Լուսիկին կրկնակի պատկերելով, նկարիչն ունի արդեն նրա ներքին պորումների բացահայտման խնդիր: Այս դիմանկարը ստեղծված է այն շրջանում, երբ Սարյանի կրտսեր որդին, Զարիկը, ռազմաճակատում էր, եւ վեց ամիս ոչ մի լուր չկար նրանից: Լուսիկը նստած է հայելու առջեւ՝ ձեռքին նարինջը, մտածում է որդու մասին, ինչը հուշում է նկարի անկյունում պատկերված պատանի զինվորի լուսանկարը: Իսկ հայելում Լուսիկը երեւում է՝ ձեռքին նամակը: Հայելում տեսնում ենք նաեւ նկարչին՝ դա նա է իր վրձնի ուժով ցանկալին դարձրել իրականություն:

Ցուցահանդեսում ներկայացված է նաեւ Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում գտնվող 1929 թվականի «Իմ ընտանիքը» դիմանկարի վերատպությունը: Այս կտավը Սարյանը ստեղծեց իր կյանքի մի այլ ծանր պահին, երբ հրդեհի զոհ դարձան Փարիզում ստեղծված իր մոտ 40 նոր աշխատանքները: «Իմ ընտանիքը» նկարում նա պատկերում է իր կնոջը եւ նրա շուրջը նստած իր երկու որդիներին՝ Սարիկին եւ Զարիկին: Սա է նկարչի հոյսը, նրան նորից կյանքի եւ ստեղծագործության կոչող ուժը: Պատահաբար չէր Սարյանը համեմատում Լուսիկի նշաձեւ թուխ աչքերը իր արվեստում գեղեցկության եւ հավերժականության խորհրդանիշ դարձած եգիպտական դիմակի աչքերը: «Իմ ընտանիքը» նկարում երեւում է այդ դիմակը: Այն կարծես միջամտում է Սարյանների ընտանեկան կյանքի ընթացքին: Իր սեփական պատկերը կտավի ձախ մասում տեղադրելով նկարիչը, կարծես, պահպան է կանգնում իր ընտանիքին, իր սրբությանը: Սակայն կյանքի ընթացքը երբեմն դաժան է, անողոք: Սարյանի կրտսեր որդին, կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը, բարեհաջող վերադարձավ պատերազմից: Բայց 1962 թվականին նկարիչը կորցրեց իր ավագ որդուն՝ բանաստեղծ Սարգիս Սարյանին: Մոտ երեսուն տարի անց կյանքից անժամանակ հեռացավ Լուսիկ անունը կրող Սարյանի թոռնուհին:

Այնուամենայնիվ հիշենք Սարյանի հավատամքը. «Հատիկը ծլում է հողում, փարթամորեն աճում, իր ժամանակին ծաղկում, նորից հատիկ տալիս եւ չի մահանում: Մարդն էլ այդպես է, չի մեռնում, որովհետեւ մարդը բնությունն է»: Եվ այսօր Սարյանի տանը վազվզող պոչավոր աչքերով Լուսիկ թոռնուհին այս մտորումների գեղեցիկ վկայությունն է:

ՍՈՖԻԱ ՄԱՐՏԻՆ

Դեկորատիվ ժամացույցների ցուցադրություն Ազգային պատկերասրահում

Ժամացույցների բազմադարյան պատմությունը սկսվում է դեռեւս մ.թ.ա. 2-րդ հազարամյակից, երբ հողին գծված շրջանի եւ դրա կենտրոնում խրված ձողի միջոցով ստեղծվեց առաջին արեւային ժամացույցը: Հետագա հարյուրամյակներին ժամացույցները զարգացան՝ դառնալով մշակութային փոփոխությունների ցայտուն օրինակներ: Եթե 17-18-րդ դարերում՝ կլասիցիզմի, բարոկկոյի եւ ռոկոկոյի ժամանակաշրջանում կարեւորվում էր գեղարվեստական մշակման շուքն ու փայլը, ապա 20-րդ դարում ժամացույցը տեղափոխվեց առավելապես տեխնիկայի եւ գիտության նվաճման դաշտ:

Ազգային պատկերասրահում պահպանվում է ժամացույցների յուրահատուկ հավաքածու, որոնց ցուցադրությունը տեղի ունեցավ օրերս: Ներկայացված էին 18-20-րդ դարերի բուխարու, սեղանի, հատակի, գրպանի եւ ճամփորդական ժամացույցների օրինակներ՝ մեխանիզմների եւ պատյանների հարուստ բազմազանությամբ: Հավաքածուում ընդգրկված ժամացույցներից առանձնանում են հատկապես 1924-ին Լենինգրադի եւ Մոսկվայի թանգարանների նվիրատվություն ժամացույցները, որոնք ներկայացնում էին գեղարվեստական մեծ արժեք եւ ժամացույցների զարգացման պատմության մեջ կարեւոր տեղ էին գրավել:

Ժամացույցների բազմադարյան պատմությունը սկսվում է դեռեւս մ.թ.ա. 2-րդ հազարամյակից, երբ հողին գծված շրջանի եւ դրա կենտ-

Հ. Հ.

50-ամյա արվեստի ինստիտուտը

1958 թվականին Երեւանում՝ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի կազմում, ստեղծվեց արվեստի ինստիտուտը՝ ներկայիս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը. Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի կազմում գործող երաժշտության, պատմության եւ տեսության սեկտորի հիման վրա:

Ներկայում Արվեստի ինստիտուտը գիտական միակ հաստատությունն է, որտեղ կատարվող ուսումնասիրությունների կարեւոր ուղղություններն են հայ արվեստի գրեթե բոլոր տեսակները՝ կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ եւ կիրառական արվեստներ, երաժշտություն, թատրոն, կինո եւ հեռուստատեսություն:

50-ամյա այս հաստատության ափսանքները ղեկավարել են մի քանի անձինք՝ հիմնադիր տնօրենն ու բազմամյա ղեկավարն էր ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Ռուբեն Զարյանը: Այնուհետեւ՝ 1987-2003 թվականներին այդ պաշտոնը վարել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լեւոն Հախվերդյանը: 2003 թվականից սկսած հաջորդում են ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի տնօրենության տարիները:

Ինստիտուտի հիմնադրման հոբելյանական հանդիսավոր նիստը կայացավ երեկ ԳԱԱ նիստերի դահլիճում: Նիստին հաջորդեց հոբելյանին նվիրված համերգը, որի ընթացքում հանդես եկավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Թվարկվածով հոբելյանական միջոցառումները չեն ավարտվում՝ դեկտեմբերի 3-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի կունենա միջազգային մրցույթների դափնեկիր «Սպեղանի» երգչախմբի համերգը, իսկ դեկտեմբերի առաջին տասնօրյակում՝ երիտասարդ արվեստագետների գիտաժողով:

50-ամյա ինստիտուտում գործում են արվեստաբանական գրադարանը, Ռուբեն Զարյանի անվան բեմատիրագիտական կաբինետ-գրադարանը, ժողովրդական երաժշտության բաժնի գրադարանը, Արամ Քոչարյանի անվան ձայնադարանը, արվեստի ինստիտուտի արխիվը:

Ազգային երաժշտության ու թատրոնի, ճարտարապետության եւ կերպարվեստի դասականների ստեղծագործական, հուշագրային, նամակագրական ժառանգության ակադեմիական հրատարակության, ֆոլկլորային նմուշների հավաքման, դասակարգման, վերծանության, համակարգչային մշակման ուղղությամբ ինստիտուտում աշխատանքներ են տարվում:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ռոմանսներ Միխայել Թարիվերդիեւի հիշատակին

Դեկտեմբերի 2-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում տեղի կունենա դասական երաժշտության համերգ՝ նվիրված մեծանուն կոմպոզիտոր Միխայել Թարիվերդիեւի 75-ամյա հոբելյանին: Համերգի ընթացքում կհնչեն հատվածներ «Ժամանիր» ռոմանսների շարից: Թարիվերդիեւին հիմնականում ճանաչում են ֆիլմերի համար գրած երաժշտությամբ: Կոմպոզիտորի ստեղծած բազմաթիվ հրաշալի ռոմանսներ այսօր շատ քիչ են հնչում: Մինչդեռ 60-ականներին կոմպոզիտորը հենց ռոմանսների միջոցով մուտք գործեց երաժշտության մեծ ու գեղեցիկ աշխարհը: Կազմակերպիչների հավաստմամբ համերգը ռոմանսների գեղեցիկ փունջ է, որտեղ յուրաքանչյուրը կգտնի սիրելի հնչյուններ եւ հոգեհարազատ ջերմ տրամադրություն: Համերգը կազմակերպել են Համաշխարհային հայկական կոնգրեսը, Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղն ու Երեւանի պետական կոնսերվատորիան: Միջոցառման ընթացքում ելույթ կունենան ԵՊԿ-ի դոցենտ Մարգարիտա Հովսեփյանն ու Սաթենիկ Մաղաքյանը:

Հ. Հ.

Քշիշտոֆ Պենդերեցկու հոբելյանը Հայաստանն էլ է նշում



Նոյեմբերի 30-ին Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը տեղի կունենա ժամանակակից երաժշտության ասպարեզում նոր խոսք ասող կոմպոզիտոր Քշիշտոֆ Պենդերեցկու ծննդյան 75-ամյակին նվիրված համերգ: Ծրագրում ներառված են կոմպոզիտորի այնպիսի գործեր, որոնք Հայաստանում կատարվելու են առաջին անգամ: «Ալան Հովհաննես» նվագախումբը՝ Մերուժան Սիմոնյանի, «Հովեր» երգչախումբը Սոնա Հովհաննիսյանի խմբավարությամբ եւ մենակատարներ Մարտին Ուլիխանյանը (կլառնետ), Լուսինե Աղաբալյանը (ջութակ), Արմեն Մանասյանը (դաշնամուր) եւ այլք կներկայացնեն 1959-1999 թվականներին Պենդերեցկու հեղինակած երաժշտությունը:

Համերգը, որ կայանալու է «Նոր երաժշտական նախաձեռնություններ» շարքի շրջանակներում, ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ եւ «Վիվասել»-ՄՍՍ ընկերության հովանավորմամբ, կազմակերպել է արվեստագիտության դոկտոր Սվետլանա Սարգսյանը:

Ն. Պ.

Ղրիմի Սուրբ Խաչ եկեղեցու 650-ամյակին նվիրված համերգ

Նոյեմբերի 23-ին Սիմֆերոպոլի Մախիմ Գորկու անվան թատրոնում տեղի ունեցավ գալա-համերգ՝ նվիրված Ղրիմի հայկական Սուրբ Խաչ եկեղեցու հիմնադրման 650-ամյակին: Հանդիսությանը ներկա էին մեծ թվով հայեր եւ տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Համերգին մասնակցում էին Ղրիմում բնակվող հայ երաժիշտներ, երգիչներ, «Արարատ» պարախումբը, որի կազմում հայերից բացի հանդես են գալիս նաեւ ռուսներ եւ մեկ թաթար: Հանդիսության ժամանակ Այվազովսկու անվան մեդալներով պարգեւատրեցին ղրիմահայ համայնքի ակտիվիստներին, Սուրբ Խաչ եկեղեցու վերականգնմանը նպաստած անձանց: Պարգեւների են արժանացել նաեւ տեղացի հայ արվեստագետներ եւ մարզիկներ:

Ա. Բ.

Վճռորոշը թիմային ոգին եւ շախմատիստների բարձր վարպետությունն էր

Շախմատի համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի տղամարդկանց հավաքականի փայլուն հաղթանակը մեծ ոգեւորություն է առաջացրել Հայաստանում եւ բնական է այն ուշադրությունը, որն այս օրերին ցուցաբերվում է մեր շախմատիստների նկատմամբ: Երեկ նրանք հյուրընկալվել էին մամուլի «Տեսակետ» ակումբում, որտեղ հավաքված լրագրողները մեկ անգամ եւս ծափերով դիմավորեցին օլիմպիադայի հերոսներին:

Խոսելով օլիմպիադայում հայ շախմատիստների ելույթների մասին, հավաքականի մարզիչ **Արշակ Պետրոսյանը** կարեւորեց թիմի միասնականությունը, թիմային ոգին եւ իհարկե շախմատիստների բարձր վարպետությունը: Միասնականության մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ շախմատիստներից ցանկացածն ավարտելով իր պարտիան, երբեմն դահլիճից չէր հեռանում, ինչպես դա տեղի էր ունենում շատ թիմերում, այլ մինչեւ վերջ մնում էր խաղընկերների կողքին ու փորձում աջակցել նրանց: Հաջողությանը նպաստեց նաեւ մեր թիմի փորձառու լինելը, քանի որ մեծամասնությունը խաղացել էր նաեւ նախորդ օլիմպիադայում: Արշակ Պետրոսյանը նաեւ կարեւորեց թիմի նկատմամբ շախմատի ֆեդերացիայի, նրա նախագահ Սերժ Սարգսյանի հոգատար վերաբերմունքը, ինչը հնարավորություն էր ստեղծել պատշաճ մակարդակով նախապատրաստվելու օլիմպիադային:

Արշակ Պետրոսյանն իր գոհունակությունը հայտնեց նաեւ մեր կանանց հավաքականի ելույթից, որը նախորդ օլիմպիադայի համեմատ երկու հորիզոնական բարձրացավ՝ գրավելով 6-րդ տեղը: Դա վկայում է, որ կանանց շախմատում էլ վերջին տարիներին զգալի առաջընթաց է նկատվում: Տարիներ առաջ Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի նվաճումը դրա վառ վկայությունն է:

Պատասխանելով այն հարցին, թե ո՞ւմ է տեսնում աշխարհի ապագա չեմպիոն, Արշակ Պետրոսյանը նշեց, որ հավաքականի բոլոր տղաներն էլ տաղանդավոր են եւ կարող են նման նվաճման հասնել, թեեւ դա շատ դժվար է: Իհարկե, ամենամեծ հնարավորությունն ունի Լեւոն Արոնյանը, որն, ըստ Պետրոսյանի, եթե ավելի շատ ժամանակ տրամադրի շախմատին կարող է նվաճել շախմատային թագը: Այս առնչությամբ **Վլադիմիր Հակոբյանը** նշեց, որ ինքը չի մտածում աշխարհի չեմպիոնի տիտղոսի նվաճման մասին, իսկ բացի Լեւոնից, կարող է նվաճման հասնել նաեւ Գաբրիել Սարգսյանը, որն օլիմպիադայում ֆանտաստիկ խաղ ցուցադրեց:

Մեր թիմի անդամները միակարծիք էին, որ այս անգամ չեմպիոնի տիտղոսը նվաճելն ավելի դժվար էր, քանի որ բոլոր թիմերն էլ կրկնակի եռանդով էին խաղում իրենց դեմ: Լեւոն Արոնյանը հաջողությունում կարեւորեց Արշակ Պետրոսյանի դերը, որի վերադարձը հավաքական դրական ազդեցություն ունեցավ: Նա նշեց, որ Գելֆանդից կրած պարտության պատճառը շատ ոգեւորվելն էր, քանի որ ընդհանուր հաղթանակը մոտ էր եւ Իսրայելին հաղթելու դեպքում կարող էին չեմպիոնի հարցը լուծված համարել: Այդ պարտիայում Լեւոնը սխալ թույլ տվեց ու պարտվեց:

Տիգրան Պետրոսյանի համար Դրեզդենի օլիմպիադան առաջինն էր: Նա փոխարինել էր կյանքից անժամանակ հեռացած Կարեն Ասրյանին: Տիգրանի խոսքով, դա կրկնակի պատասխանատվություն էր դրել իր վրա եւ շնորհիվ մարզչի խորհուրդների եւ խաղընկերների աջակցության, հաջողվեց հաջող հանդես գալ:

Գաբրիել Սարգսյանն իր բարձր արդյունքը պայմանավորեց կրկնակի պատասխանատվությամբ, որ ընկնում է յուրաքանչյուրի վրա թիմային մրցումներում: Անհատական մրցաշարերում եթե սխալի համար շախմատիստն է պատժվում, ապա օլիմպիադայում այն կարող է ճակատագրական լինել թիմի համար: Գաբրիելը նաեւ նշեց այն դրական տեղաշարժերը, որ վերջին տարիներին նկատվում են մեր շախմատում, շախմատիստների նկատմամբ պետության վերաբերմունքի փոփոխության մասին՝ ընդգծելով, որ ֆեդերացիայի նախագահի պաշտոնը Սերժ Սարգսյանի սանձնելուց հետո օտար երկրներում գտնվող հայ լավագույն շախմատիստներին հայրենիք վերադարձնելու աշխատանքներ են տարվում: Դրա վառ օրինակը Լեւոն Արոնյանն է:

Արտաշես Մինասյանն էլ նշեց, որ թեեւ իրեն վիճակված էր ընդամենը մեկ պարտիա անցկացնել, սակայն ինքը հոգով ու սրտով տղաների հետ էր, մշտապես դահլիճում էր, նրանց հետ գալիս ու նրանց հետ էլ հյուրանոց էր վերադառնում:

Ասուլիսի վերջում «Բարի Սամարացի» ընկերության կողմից օլիմպիադայի մեր հերոսներին, նրանց մարզիչ Արշակ Պետրոսյանին ոսկե խաչով շքաներ հանձնվեցին: Շնորհակալություն հայտնելով նման վերաբերմունքի համար, տղաները հավաստեցին, որ կձգտեն 3-րդ անգամ եւս նվաճել օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը:

Իսինբաեւան ու Բոլտը լավագույնն են աշխարհում

Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոնուհի, աշխարհի բազմակի ռեկորդակրուհի, ռուսաստանցի ձողացատկորդուհի Ելենա Իսինբաեւան եւ օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, աշխարհի եռակի ռեկորդակիր, ճամայկացի արագավազորդ Ուսեյն Բոլտը ճանաչվել են 2008-ի լավագույն թեթեւատլետներ: Նրանց Մոնտե Կառլոյում հանձնվել են թեթեւ atլետիկայի միջազգային ֆեդերացիայի սահմանած մրցանակները:

Ելենա Իսինբաեւան այս մրցաշրջանում երեք անգամ բարելավել է աշխարհի ռեկորդը: Հունիսին Հոնմում նա ցույց էր տվել 5,03 մետր, իսկ ամսվա վերջին Մոնտե Կառլոյում անցկացված մրցումներում աշխարհի ռեկորդը հասցրեց 5,04 մետրի: Իսկ Պեկինի օլիմպիադայում օգոստոսի 18-ին 26-ամյա վոլգոգրադցի մարզուհին աշխարհի նոր ռեկորդ սահմանեց՝ հաղթահարելով 5,05 մետր բարձրությունը:

Ելենա Իսինբաեւան 3-րդ անգամ արժանացավ տարվա լավագույն թեթեւատլետուհու մրցանակին: Նախկինում նա լավագույնն էր ճանաչվել 2004-ին եւ 2005-ին: «Իրոք շատ հպարտ եմ թեթեւ atլետիկայի պատմության մեջ լինել առաջին մարզուհին, ով 3 անգամ է արժանանում լավագույնի տիտղոսին: Սակայն թվում է, թե Մոնակոյում տեղի ունեցող հանդիսավոր արարողությունն ինձ համար առաջին անգամ էր տեղի ունենում: Այս վերջին մրցանակն ինձ համար ավելի արժեքավոր է, քան նախորդները: Այն ժամանակ մարզավիճակիս գագաթնակետին էի, իսկ այս անգամ կարողացա հաղթահարել դժվարին շրջանը եւ կրկին բարձունքում հայտնվեցի: Ես ապացուցեցի բոլորին, որ նախկինի պես կարող եմ հաղթել ու աշխարհի ռեկորդներ սահմանել: Իմ մարզիչ Վիտալի Պետրովն ասում է, որ տղամարդկանց եւ կանանց ձողացատկի տարբերությունը պետք է մեկ մետր տարբերությունը պետք է մեկ մետր: Սերգեյ Բուբկայի համաշխարհային ռեկորդը 6,15 մետր է: Նշանակում է այժմյան աշխարհի ռեկորդիս նվազագույնը դեռեւս 10 սմ պետք է ավելացնեմ: Իմ միակ խնդիրն այժմ տիտղոսների եւ աշխարհի ռեկորդների քանակն է: Զգում եմ, որ դեռեւս լրացուցիչ ուժեր ունեմ հաջող մրցելույթներս շարունակելու համար», մրցանակը ստանալուց հետո հայտարարել է Ելենա Իսինբաեւան:

Իսինբաեւան միավորների չնչին տարբերությամբ գերազանցեց եթովպիացի վազորդուհի Տիրունեշ Դիբաբային, որը Պեկինում հաղթող էր ճանաչվել 5000 եւ 10.000 մետր մրցաշարերում: Դիբաբան արժանացել է «Տարվա ամենավառ ելույթի համար» մրցանակին: Նմանատիպ մրցանակ է հանձնվել նաեւ չեխ նիզակաձիգուհի Բարբարա Շպոտակովային, որը սեպտեմբերին աշխարհի նոր ռեկորդ էր սահմանել (72,28 մետր):

Եթե կանանց մրցապայքարում մինչեւ վերջին պահը դժվար էր նախատեսելը՝ տղաների մրցումներում հաղթանակը ամբողջ մրցաշրջանում գրեթե ամենուրեք պատկանում էր Ուսեյն Բոլտին: 22-ամյա ճամայկացի արագավազորդը Պեկինում օլիմպիադայի ոսկե մեդալներ է նվաճել 100, 200 մ վազքում եւ 4x100 մ փոխանցումավազքում: Ընդ որում 100 եւ 200 մ մրցաշարերում նա սահմանեց աշխարհի նոր ռեկորդներ (9,69 վրկ եւ 19,3 վրկ):

«Անհնարին ոչինչ չկա: Սա իմ նշանաբանն է: Այս մրցանակն իրոք մեծ պատիվ է ինձ համար: Լավագույն մարզիկների շարքն ընդգրկվելն ինքնին մեծ հաջողություն է: Կփորձեմ հաջողությունը կրկնել հաջորդ տարիներին», նշել է Ուսեյն Բոլտը:

«Տարվա ամենավառ ելույթի համար» մրցանակին արժանացավ 110 մ արգելավազքի օլիմպիական չեմպիոն, կուբացի Դեյրոն Ռոբլեսը, որը հունիսին աշխարհի նոր ռեկորդ էր սահմանել (12,87 վրկ): Քենիացի երիտասարդ վազորդ Պամելա Ջելիմոն ստացավ «Տարվա հայտնություն» մրցանակը: Նա այս տարի ճանաչվել էր 800 մ վազքում լավագույն վազորդը: Ջելիմոն հաղթող էր ճանաչվել Պեկինի օլիմպիադայում, ինչպես նաեւ շահել էր միջազգային ֆեդերացիայի գլխավոր մրցանակը՝ 1 մլն դոլարը: Նշենք, որ լավագույն թեթեւատլետներ ճանաչված Իսինբաեւան ու Բոլտը պարգեւատրվել են 100-հազարանոց դոլարով:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՀՖՖ-«Արարատ» հարաբերությունները կրկին սրվել են

Ֆուտբոլասերներն, անշուշտ, տեղյակ են չեմպիոնության կոչման համար «Արարատի» եւ «Փյունիկի» միջեւ կայացած երկու հանդիպումների շուրջը բորբոքված կրքերի մասին: Սակայն պարզվում է, որ տեղի է ունեցել նաեւ տհաճ միջադեպ, որի մասին երեկ հրավիրած մամուլի ասուլիսում հայտարարեց «Արարատ» ակումբի գլխավոր մենեջեր **Վարուժան Սիմոնովը**: Ըստ նրա, առաջնության վերջին տուրի «Փյունիկ»-«Արարատ» հանդիպումից հետո, երբ ինքը խաղադաշտում թիմի հաղթանակից ոգեւորված դիմելով հանդիսականներին, բացականչել է, որ «Արարատը» չեմպիոն է դառնալու, տրիբունայի օթյակում տեղ զբաղեցրած ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը կարծել է, թե իրեն հայհոյում է եւ համապատասխան միջոցների է դիմել: Նախագահի թիկնապահները Սիմոնովին նստեցրել են մեքենա եւ տարել անհայտ ուղղությամբ, որտեղ Ռուբեն Հայրապետյանը հայհոյել ու մի քանի անգամ հարվածել է «Արարատի» մենեջերին, թեեւ վերջինս պարզաբանել է, որ նախագահի հասցեին ոչ մի հայհոյանք չի ասել: Դեպքին ականատես է եղել «Արարատ» ակումբի մի աշխատակից իր 7-ամյա դստեր հետ, որոնց Սիմոնովի հետ տարել են մեքենայով:

Ասուլիսին ներկա «Արարատ» ակումբի նախագահ **Հրաչ Գաբրիելյանը** Ռուբեն Հայրապետյանի արարքը որակեց հանցանք, որի համար վերջինս պետք է օրենքով պատասխան տա: Ըստ Գաբրիելյանի, այդ գործի առնչությամբ նյութերը շուտով կներկայացվեն դատախազությանը: «Արարատը» Սիմոնովին ֆեդերացիայի կողմից 10 խաղով որակազրկումն անհիմն է համարում եւ այդ վճիռը բողոքարկվել է, սակայն մերժում է ստացել: Ակումբի ղեկավարությունը անօրինական է համարում «Փյունիկի» ֆուտբոլիստներ Էդգար Մալաքյանի ու Արթուր Եդիգարյանի, ինչպես նաեւ արարատցի Հայր Մկոյանի որակազրկումը չեղյալ համարելու ֆեդերացիայի որոշումը, որի առնչությամբ «Արարատ» ակումբը պատշաճական բողոք է ներկայացրել ՈՒԵՖԱ:

Ասուլիսին ներկա «Արարատի» ֆուտբոլիստ **Արտակ Գրիգորյանը**, որին 11 մ հարվածի իրացումից հետո մրցավար Ճաղարյանը հեռացրել էր խաղադաշտից, պարզաբանեց, որ ինքը բնավ էլ չի հայհոյել մրցավարին, այլ պարզապես ձեռքերը վեր է պարզել, ասելով, թե վերեւում Աստված կա ու ամեն ինչ տեսնում է:

«Արարատի» ղեկավարները հաստատեցին, որ թիմը մասնակցելու է «Համագործակցության գավաթի» մրցաշարին, որում հանդես կգան նաեւ բրազիլացի ֆուտբոլիստները: Ղեկավարությունը գոհ է գլխավոր մարզչի աշխատանքից, որի պայմանագիրը լրանում է տարեվերջին: Սակայն հստակ պատասխան չտրվեց, թե արդյոք Վարուժան Սոմիասյանը շարունակելո՞ւ է աշխատանքը «Արարատում»: Խոստացվեց այդ մասին լրացուցիչ տեղեկություն հաղորդել մոտ ժամանակներս կազմակերպվելիք ասուլիսում: Այնպիսի տպավորություն է, որ կարծես կամ Վարուժան Սոմիասյանն ինքն է հրաժարվում շարունակել մարզել թիմը, կամ էլ ակումբի ղեկավարությունը հերթական անգամ որոշել է գլխավոր մարզչի անհիմն փոփոխություն կատարել:

Անհասկանալի էր նաեւ «Արցախի» նկատմամբ ակումբի հովանավորների դիրքորոշումը: Ըստ Հրաչ Գաբրիելյանի, իրենք շարունակում են ֆինանսապես աջակցել «Արցախին», վերակառուցել են Ստեփանակերտի մարզադաշտը: Սակայն փաստն այն է, որ «Արցախը» վերջին տարիներին անգործության է մատնված եւ չի մասնակցում ՀՁ առաջնությանը:

Գաբրիելյանի կարծիքով թիմը պետք է խաղա Ստեփանակերտում, իր սեփական երկրպագուների առջեւ: Սակայն բոլորն էլ հասկանում են այդ հարցում առկա դժվարությունները կապված Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ: Նա տեղեկացրեց, որ Ֆրանսիայում կազմավորել են «Իսի-Արարատ» ֆուտբոլային թիմը: Իսկ Ջորաղբյուրի մարզաբազան, ըստ ակումբի նախագահի, պատրաստ կլինի հաջորդ տարվա այս ժամանակաշրջանում:

Նազիկ Ավդալյանն ու Հռիփսիմե Խուրշուդյանն էլ դարձան մրցանակակիր

Հունաստանում ընթացող ուսանողական խաղերի ծանրամարտի մրցումներում Հայաստանի մյուս երկու ներկայացուցիչներն էլ հաջող հանդես եկան եւ մեդալներ նվաճեցին: Մինչեւ 69 կգ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնուհի Նազիկ Ավդալյանը երկամարտի 215 կգ (95+120) արդյունքով դարձավ արծաթե մրցանակակիր: Պոկում վարժությունում նա միայն երրորդ մոտեցմամբ հաղթահարեց պատվիրած նախնական 95 կգ քաշը: Այդ ցուցանիշով նա պոկում վարժությունում նվաճեց բրոնզե մեդալ՝ միայն ավելի ծանր անձնական քաշի պատճառով արծաթը զիջելով չին մարզուհի Շա Յանգին: Հրում վարժությունում էլ Ավդալյանը միայն մեկ հաջող մոտեցում կատարեց՝ առաջին փորձից բարձրացնելով 120 կգ: Իսկ ահա 124 կգ բարձրացնելու նրա երկու փորձերն էլ անհաջող էին: Սակայն 120 կգ-ն էլ բավական էր հրում վարժությունում էլ բրոնզե պարգեւի արժանանալու համար:

Եթե Նազիկն ավելի վստահ ելույթ ունենար եւ չձախողեր մոտեցումներն, ապա կարող էր չեմպիոն դառնալ: Նա երկամարտում ընդամենը 3 կգ-ով զիջեց ոսկե մեդալը նվաճած չին մարզուհի Շա Յանգին:

Մինչեւ 75 կգ քաշային կարգում էլ երկամարտի 241 կգ (106+135) արդյունքով արծաթե մեդալի արժանացավ Եվրոպայի մեկ այլ չեմպիոնուհի՝ Հռիփսիմե Խուրշուդյանը: Պոկում վարժությունում հաջորդաբար բարձրացնելով 100 եւ 106 կգ, Խուրշուդյանը չկարողացավ հաղթահարել 111 կգ-անոց ծանրաձողը, այլապես ոսկե մեդալի կարժանանար: Այս վարժությունում 110 կգ-ով հաղթող ճանաչվեց չին մարզուհի Ջիան Վուն: Հրում վարժությունում եւս Հռիփսիմեն ձախողեց երրորդ մոտեցումը (141 կգ) ու կրկին զրկվեց ոսկե մեդալից՝ բավարարվելով արծաթով: Ջիան Վուն հաղթող դարձավ 136 կգ-ով, ինչն էլ նրան հնարավորություն տվեց երկամարտի 246 կգ արդյունքով հռչակվել չեմպիոնուհի: Բրոնզե մեդալակիր դարձավ թայվանցի Ջուի Չունգը՝ 228 կգ (98+130):

Մինչեւ 94 կգ քաշային կարգում հանդես եկավ մեր աշխարհահռչակ ծանրոցամարտիկ Յուրի Վարդանյանի որդին՝ Նորայրը, որը ներկայացնում էր ԱՄՆ-ն: 21-ամյա ծանրոցամարտիկը անհաջողության մատնվեց պոկում վարժությունում՝ չկարողանալով բարձրացնել պատվիրած նախնական 155 կգ ծանրությունը: 0 ստանալով, նա դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից: Հրում վարժությունում Վարդանյանը ցույց տվեց 192 կգ արդյունք՝ գրավելով 7-րդ տեղը: Եթե նրան հաջողվեր երրորդ մոտեցման ժամանակ բարձրացնել 201 կգ, ապա այդ վարժությունում կարժանանար արծաթե մեդալի: Իսկ չեմպիոն հռչակվեց կրկին չին ծանրոցամարտիկը՝ Ժոնգ Հուանգը՝ 366 կգ (166+200):

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

«Գերիշխան հայերը» («Ֆրանկֆուրտեր ռունդշաու»), «Սախոնիայի ոայծառ գլուխները Հայաստանից են» («Ֆայնենշըլ թայմս Դոյչլանդ»), «Երկրի նախագահը մեծարում է հայ հերոսներին» («Բադիշես թագբլաթ»), «Հայաստանը՝ ի հեճուկս բոլոր արգելքների» («Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգ»): Սրանք գերմանական մամուլի առավել «շեղ» վերնագրերն են՝ Դրեզդենում նոյեմբերի 25-ին ավարտված շախմատի 38-րդ օլիմոիադայում Հայաստանի հաղթանակի մասին:

«Ֆրանկֆուրտեր ռունդշաու» Սերժ Սարգսյանի «Այս հաղթանակը մեծ նշանակություն ունի մեր երկրի համար» արտահայտությանը կցել է սեփական բացատրությունը. «Սպորտային հաջողությունը քաղաքականացրեց ուրախությունից փայլատակող նախագահը՝ գրոսմայստերների ուսին խփելով: Բայց Արտակ Պետրոսյանի կվինտետը ոսկե մեդալը նվիրեց հունիսին մրցամարտի ժամանակ վախճանված 28-ամյա գրոսմայստեր Կարեն Ասրյանի հիշատակին»:

«Հսկայական արդյունք» է որակել «Թիմի միասնականությունը կարելի դարձրեց այս հաջողությունը»: Այնուհետեւ գրում է «ուժեղագույն Առնյանի» մասին: «Մեզանում իրականում տիրում էր մի արտակարգ թիմային ոգի, բայց շատ անգամ ինձ համար էլ մեր հաջողությունները հանելուկ են մնում», ասել է Առնյանը: Գաղտնիքը կարող է նրա խարիզման լինել, ամեն դեպքում Առնյանը, երեւում է, կարողանում է ներշնչել իր թիմակիցներին, գրում է թերթը: «Թիմում Լեւոնի նման մեկին ունենալը անհավատալի արժեքավոր է», ասել է Արտաշես Մինասյանը: Ա-

Հայաստանը պարսկական է իր Monsterkiller-ներին

Հայ շախմատիստների հաղթանակի արտացոլումը գերմանական մամուլի հայելում

Գերմանական ռադիոն ու հեռատեսությունը, նաեւ մամուլը, կարելի է ասել, անտարբեր մնացին իրենց երկրում կայացող միջազգային խոշոր շախմատային մրցաշարը լուսաբանելուց: Թուրինում Գերմանիայի հավաքականը 24-րդ տեղում էր եղել, Դրեզդենում բարելավել էր վիճակը՝ 13-րդ տեղում հայտնվելով, եւ ինչպես նշում են մեկնաբանները, դրական էլի մի բան՝ կոնգրեսկենտրոնում գրանցվել էր 15000 այցելու, իսկ 126 միլիոնը ինտերնետային ուղիղ կապով հետեւել էր 5511 շախմատային խաղի: Բայց դե գերմանացիները, որոնք էլ առաջին հայացքից զարմանալի թվա, շախմատի նկատմամբ շատ փոքր հետաքրքրություն ունեն, ինչը չես ասի ֆուտբոլի մասին, որ հաճախ է հարատեւ թիկն տալիս մամուլի առաջին էջերում: «Զյուդդոյչե ցայթունգի» մեկնաբանը հենց այդպիսի՝ գերմանացիների համար ընկալելի ձեւով է բացատրում նոյեմբերի 26-ին Հայաստանի հավաքականի պատվին կազմակերպված Երեւանի ընդունելությունը. «Հայաստանը նորից հաղթեց շախմատի օլիմպիադայում. տանը շախմատիստները վայելում են այն հեղինակությունը, ինչ ուրիշ վայրերում ֆուտբոլային աստղերն են ունենում»:

Ինչեւէ, անդադառնանք գերմանական մամուլի վերոհիշյալ վերնագրերի տակ զետեղված հոդվածներին: Բոլոր լրատուների ուշադրությունը գրավել է այն հանգամանքը, որ Հայաստանի նախագահը վերջին խաղի համար հատուկ Դրեզդեն է եկել, իսկ «Զյուդդոյչե ցայթունգը» նկատում է նաեւ բեմին մոտ կանգնած, հոկված արտաքինով տղամարդկանց՝ դիվանագետների, նախագահի թիկնապահների, շախմատի բազմամարդ ներկայությունը, ովքեր Հայաստանի հաղթանակից հետո ողջագուրվել են միմյանց ու շախմատիստների հետ:

Հայ գրոսմայստերներին իրենց երկրի նախագահի աջակցությունը հաջողություն բերեց, գրում է «Ֆրանկֆուրտեր ռունդշաու»: Չինաստանի դեմ պայքարում Լեւոն Առնյանի փոխարեն խաղատախտակի վրա առաջին քայլն արեց Սերժ Սարգսյանը, մնացածը կովկասցի շախմատիստներն առանց օգնության կատարեցին: Հայաստանը 19:3 միավորով պատժեց իր տիտղոսը:

գլխավոր մեկնաբան, գրոսմայստեր Քլաուս Բիշոֆը, որ կարծիք է հայտնել, թե Հայաստանը պարսկական է իր Monsterkiller-ներին՝ Բեռլինում ապրող Առնյանին (5,5:4,5 միավոր), Վլադիմիր Հակոբյանին (8:3), Գաբրիել Սարգսյանին (9:2) եւ Տիգրան Պետրոսյանին (7,5:3,5):

«Ֆրանկֆուրտեր ալգեմայնե» Չինաստանի դեմ մրցակցելիս իր թիմին ուղեկցելը Սերժ Սարգսյանի «պատվի գործն» է համարում: Թերթի մեկնաբանը կարծում է, թե Թուրինի հաղթանակից հետո նորից հաղթելը անսպասելի հաջողություն էր ու գրում է՝ Հայաստանը անվանական 9-րդ տեղում է, մայիսին հիմնական խաղացող Կարեն Ասրյանին կորցրեց, թիմի գլխավոր մարզիկ Լեւոն Առնյանը մրսածություն ուներ:

7 տարի Առնյանը Գերմանիայում է ապրում, բայց չի էլ մտածում թիմը փոխելու մասին, գրում է գերմանական լրատուն ու հիշեցնում 1963-ին աշխարհի չեմպիոն դարձած Տիգրան Պետրոսյանի, 1996-ին Երեւանում անցկացված շախմատի միջազգային մրցույթի մասին, որը «կովկասյան այս երկրում միգուցե մարզական ամենամեծ իրադարձությունն է եղել»: Հայաստանի հավաքականի շախմատիստները ամսական թոշակ են ստանում, գրում է «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե»՝ նկատել տալով, որ Հայաստանը շախմատի դրեզդենյան օլիմպիադայում միայն մեկ թույլ օր է ունեցել՝ պարտվել է Իսրայելի դեմ մրցապայքարում:

«Զյուդդոյչե ցայթունգը» մեջբերում է Սերժ Սարգսյանի խոսքը. «Թիմի միասնականությունը կարելի դարձրեց այս հաջողությունը»: Այնուհետեւ գրում է «ուժեղագույն Առնյանի» մասին: «Մեզանում իրականում տիրում էր մի արտակարգ թիմային ոգի, բայց շատ անգամ ինձ համար էլ մեր հաջողությունները հանելուկ են մնում», ասել է Առնյանը: Գաղտնիքը կարող է նրա խարիզման լինել, ամեն դեպքում Առնյանը, երեւում է, կարողանում է ներշնչել իր թիմակիցներին, գրում է թերթը: «Թիմում Լեւոնի նման մեկին ունենալը անհավատալի արժեքավոր է», ասել է Արտաշես Մինասյանը: Առնյանը ոչ միայն իր հաղթանակներով է կարեւոր, այլեւ՝ իբրեւ անհաս»: Իսկ Վլադիմիր Հակոբյանը հավելել է, թե նա իր հնարավորություններից մի փոքր ավելի ցածր արդյունք էր ցույց տալիս՝ մրսած լինելու պատճառով:

Գերմանիայի շախմատային միության համար ցանկալի համեմատություն կարող է լինել Հայաստանի պարագան, գրում է «Զյուդդոյչե ցայթունգը»: Պիտի միայն սպասել, թե Բոննում անցկացված աշխարհի առաջնությունն ու դրեզդենյան օլիմպիադան նշանակալի ազդեցություն կունենան շախմատի մշակույթի վրա: «Սա անշուշտ մեր մեծ հույսն է», ասել է Գերմանիայի շախմատի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ ֆոն Վայցեֆերը:

Գերմանիան չունի այնպիսի հանճար, ինչպես Նորվեգիան՝ ի դեմս Մարկուս Կառլսենի ունի, բայց իր 100000 անդամներով եւ 3-6 միլիոն հավանական սիրողական խաղացողներով, կարելի է ասել, որ լավ ներուժ ունի: «Միգուցե անցած այս երկու իրադարձություններն առիթ դառնան մեծ տաղանդ հայտնաբերելու համար»:

Շախմատի 39-րդ օլիմպիադան կանցկացվի 2010-ին Սիբիրում՝ Խանտի Մանսիյսկում, 40-րդը՝ 2012-ին, Ստամբուլում: Հուսանք, որ Հայաստանի հավաքականն իր օլիմպիական հաղթանակները օրինաչափություն կդարձնի եւ միգուցե առիթ տա ֆուտբոլայինը փոխարինելու շախմատային՝ ճկուն, հաղթանակող դիվանագիտությամբ:

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

«Հայոց ցեղասպանությունը որպես ինքնորոշման իրավունքի կանխարգելման միջոց»

1-ին էջից

Ի տարբերություն նրանց, ցեղասպանության հարցում առանձնակի հետեւողականությամբ եւ անկեղծությամբ աչքի է ընկնում հայտնի իրավապաշտպան, հրատարակիչ Ռագիպ Զարաֆոլուն: Եթե այս հանգամանքը Զարաֆոլուին առանձնացնում է մյուս թուրք գիտնականներից, ապա «Էվրենսելի» նոյեմբերի 18-19-ի համարներում «Հայոց ցեղասպանությունը որպես ազգերի ինքնորոշման իրավունքի կանխարգելման միջոց» վերնագրով հրապարակված հոդվածներն էլ նրան պետք է առանձնացնի հայ գիտնականներից, որովհետեւ հայ պատմագրությունը թերեւս Հայոց ցեղասպանության հարցին ինքնորոշման իրավունքի տեսանկյունից չի մոտեցել: Ստորեւ ներկայացնում ենք Ռագիպ Զարաֆոլուի զույգ հոդվածների ամփոփ թարգմանությունը.

«Պաշտպանության նախարար պարոն Գյոնուլի վերջին հայտարարությունը ցույց է տալիս, որ Հայոց ցեղասպանության եւ Անատոլիայում պարբերաբար իրականացվող էթնիկ զտումների «ժխտողականության» փուլից անցնում ենք «խոստովանության» փուլ: Համաձայնվենք, որ այդ հայտարարությունը ավելի անկեղծ է, քան ժխտողականությունը: Սակայն ողբերգությունը «ազգային պետության ձեւավորման» համար անհրաժեշտ նախապայման համարելը, դրա համադրումը «եթե չեք հավանում ոադ եղեք, գնացեք երկրից» արտահայտության հետ իր մեջ խոցարկված «սպառնալիք» է պարունակում:

Դրա իմաստը հետեւյալն է. «Արել ենք, ձեր չափն իմացեք, հարկ եղած դեպքում նորից կանենք»: Մինչդեռ այդ «խոստովանությունը» պետք է համադրվեր «ներողության» հետ, որ տեղաշարժ կատարվի: 1915-ի հայկական ողբերգության ճիշտ ըմբռնման համար հարցին պետք է մոտենալ «ազգ դառնալու», «ինքնորոշման իրավունքի» եւ Ցեղասպանության կոնվենցիայի բնորոշիչ հոդվածների համադրության տեսանկյունից: Հայկական հարցը, օսմանյան շրջանից ժառանգություն հասած՝ խնդիրները երկրում լուծելու փոխարեն խեղաթյուրելու ամենացայտուն օրինակն է: Իբրեւ ազգ հայերը ավելի շատ են ձեւավորվել, քան թուրքերը: Իսկ հույները, սերբերը, բուլղարներն էլ՝ հայերից շատ: Այլ կերպ, հայերը աչքի առջեւ ունեցել են ձեւավորման բալկանյան օրինակը: Բալկանները, իբրեւ մոդել, ծառայել են նաեւ թուրքերին, հետեւաբար Բալկաններում ժողովուրդների կենսագործունեության առումով խիստ ցավալի հետեւանքներ ունեցած մոդելի ընդօրինակումը Անատոլիայում հանգեցնելու էր երկրի բնիկ ժողովուրդներից մեկի զտման եւ այս զտումը էթնիկ ոլորտից թափանցելու էր նաեւ մշակույթի ոլորտ: Ակնկալվող արդյունքը տվյալ աշխարհագրությունում հայերի բնակության փաստի հերքումը հիմնավորելն էր: Այս ամենը դարձավ թե՛ «ցեղասպանության», թե՛ «էթնիկ զտման» ամենաբնորոշ օրինակը:

Հայ մտավորականները բարեկամաբար էին վերաբերվել օսմանցի մտավորականների սկզբնավորած ազգ կերտելու գործընթացին: Նույնիսկ մեծ երաժիշտ Կոմիտասն էր երաժշտության բնագավառում աջակցել վերջիններիս «ազգային ինքնության որոնումներում», որովհետեւ հայերը հավատացած էին երկու ինքնությունների խաղաղ գոյակցությանը մինչեւ չարագուշակ 1914 թիվը: Մինչդեռ բազմազգ, խառը բնակչությամբ կայսրությունների վերածումը ունիտար ազգային պետության, հնարավոր էր միայն էթնիկ զտման միջոցով: Իսկ ինքնորոշման իրավունքը պատշաճեցնելու համար անհրաժեշտ էր բնակչության որոշակի խտություն:

Իթթիհատական կառավարությունը ազգային խնդիրներից խուսափելու այլ ձեւ չգտավ, քան գերմանական միլիտարիզմի ենթակայության տակ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելը: Մինչ հայ առաջնորդները փորձում էին իթթիհատականներին հետ պահել պատերազմից, վերջիններս պատերազմի պատրվակով սառեցրին հայկական բարեփոխումները: Իթթիհատականները մտածում էին, որ հայերը կարող են հեռացնել մահմեդականներին եւ մեծամասնություն կազմել երկրի որոշակի հատվածում, ապա կդիմեն ինքնորոշման:

Սարիղամիշում Էնվեր փաշայի հրամանատարության տակ օսմանյան բանակի ջախջախումը մեծացրեց իթթիհատականների խուճապը: Նրանք հայկական պետության հնարավոր կազմավորումը կանխելու համար որոշեցին մի ամբողջ ժողովրդի վերացնել: Իսկ դա ենթադրում էր առանց խրտականության Սիրիայի անապատներ ախտորելը կանանց, երեխաներին, ծերերին: Միաժամանակ Հայաստանը ընկալվում էր որպես սեպ Թուրանի կայսրություն ստեղծելու ճանապարհին: Թեեւ պատերազմի ավարտին ստորագրված Սեւրի պայմանագրով նախատեսվում էր փոքրիկ Քրդստանի եւ նրա հարեւանությամբ մեծ Հայաստանի ստեղծումը, սակայն մի՞թե հնարավոր էր ժողովրդից զուրկ պետություն ստեղծելը: Հենց դա էր Սեւրի կանխավ ձախողման բուն պատճառը:

Գերմանացի զորահրամանատարները ցանկության դեպքում կարող էին կանխել հայերի տեղահանությունը, սակայն ոչ միայն չկանխեցին, այլեւ Զեյթունում, Ուրֆայում եւ Վանում անձամբ ճնշեցին հայերի դիմադրությունը: Երկրի ամայացումը ձեռնտու էր գաղութատերերին: Գերմանական աջ ուժերը հաշվարկում էին հետագայում գերմանացիներով բնակեցնել Անատոլիան, այնպես, ինչպես ցարական Ռուսաստանը որոշել էր հայերի փոխարեն կազակներով բնակեցնել հայաբնակ շրջանները:

Եթե չլիներ բոլշեւիկյան հեղափոխությունը, չէր լինի Հայաստան պետությունը: Չափազանց դժվար էր լինելու նաեւ թուրքական պետության ստեղծումը: Համենայն դեպս 1915-ի օրինակում առկա են ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի հիմնական բոլոր դրույթները: «Իթթիհատ վե թերաքի» կուսակցությունը վարած քաղաքականությամբ հանդիսանում է նախաֆաշիստական կուսակցության օրինակը, այնպես, ինչպես 1915-ի իրադարձությունները ցեղասպանություն էին նախքան «ցեղասպանության» հասկացության ի հայտ գալը, որն ի չիք դարձրեց ինքնորոշման իրավունքի օգտագործման բոլոր նախադրյալները հայ ժողովրդի համար»:

Հ. Ջ.

Վերավարկանշվել է «Արմենիան Բափըր փրոգրամ» ՓԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերանայել է «Արմենիան Բափըր փրոգրամ» ՓԲԸ-ի վարկանիշը՝ շնորհելով Գ վարկանիշ:

ԿԲ մամուլի ծառայություն

Հայաստանի Հանրապետության հանրային նշանակության գործերի կարգավորող հանձնաժողովի 2007 թ. հունվարի 15-ի N272Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

«Ա. Ա. Խաչատրյան» ՍՊԸ-ն (ՀՀ Սյունիքի մարզ, Շինուհայր համայնքի վարչական տարածք) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային նշանակության գործերի կարգավորող հանձնաժողովին՝ «Շուշանիկ» ՓՀԷԿ-ից առաքիչ էլեկտրական էներգիայի առապարման սակագնի սահմանման հայցով:

Առաջարկվող սակագինը (դրամից)՝ 17,127 դրամ (ԿՈՎՀ առանց ԱԱՀ) եւ 20,552 դրամ (ԿՈՎՀ ներառյալ ԱԱՀ):

ՕՐՎԱԿԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԵՔԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝28.11.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: